Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ

2012 թ. IV եռամսյակ

ԱՃ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ

Քվաբենա Դոնքոր

Բովանդակություն

Դաս 1.	29.09-05.10	Մեծ պայքար. հիմքը	5
Դաս 2.	06.10-12.10	Հայտնությունը և Աստված	14
Դաս 3.	13.10-19.10	Մարդն Աստծո արարածն է	23
Դաս 4.	20.10-26.10	Փրկությունը միակ որոշումն է	32
Դաս 5.	27.10-02.11	Աճ Քրիստոսում	40
Դաս 6.	03.11-09.11	Հաղթանակ չարի ուժերի դեմ	50
Դաս 7.	10.11-16.11	«Սպառազինություն»՝ հանուն հաղթանակի	59
Դաս 8.	17.11-23.11	Եկեղեցու դերը մարդկությանը ծառայելու մեջ	68
Դաս 9.	24.11-30.11	Եկեղեցին. ծեսեր և ծիսակարգեր	77
Դաս 10.	01.12-07.12	Օրենքը և Ավետարանը	86
Դաս 11.	08.12-14.12	Քրիստոնեական կյանք	95
Դաս 12.	15.12-21.12	Վախճանաբանություն. Հիսուսը և փրկությունը	104
Դաս 13.	22.12-28.12	Երբ ամեն բան նոր կլինի	113

ԵՐԵՎԱՆ
2012

Հիմնարար համոզմունքներ

Ամեն մարդ հավատում է ինչ-որ բանի: Նույնիսկ այն մարդիկ, ովքեր պնդում են, թե իրենք ոչ մի բանի չեն հավատում, գոնե՝ ոչ մի *բացարձակ* բանի, միևնույնն է, հավատում են ինչ-որ բանի, տվյալ դեպքում՝ իրենց ռելյատիվիզմին*: Համոզմունքները կարևոր են, քանի որ հսկայական ազդեցություն են թողնում մեր կյանքի վրա: Որոշ քրիստոնյաների համար բուն պատկանելության փաստը կամ խմբակցության զգացումն առավել կարևոր են, քան հավատը կամ վարքը, սակայն համայնքը պետք է հիմնվի ընդհանուր համոզմունքների, նպատակների և շահերի վրա:

Յոթերորդ օրվա ադվենտիստների համար, մի ժողովրդի համար, որը բաղկացած է ամենատարբեր ազգությունների ներկայացուցիչներից, ամրակցող օղակներից մեկը աստվածաշնչյան «դավանաբանության հիմունքներն» են, որ մեզ օգնում են լինել միասնական եկեղեցի: Դրանք համակարգված են եկեղեցական 28 դավանաբանական կետերի մեջ և իբրև հիմք են ծառայում Քրիստոսում աճի և հավիտենության լույսի ներքո հավատացյալ մարդկանց հանրության մեջ ապրելու համար:

Ոմանք համաձայն չեն դրա հետ՝ համարելով, որ կարևորը միայն Քրիստոսի հանդեպ մեր սերն է, ոչ թե դավանաբանական ուսմունքները: Հնարավոր է, որ դա հրապուրիչ է հնչում, սակայն Աստվածաշունչը Քրիստոսի հանդեպ սերը երբեք չի առանձնացնում ճշմարտության հանդեպ սիրուց: Մեզ ասված է, որ «ճշմարիտ լինելով սիրո մեջ»՝ մենք կարող ենք աճել Քրիստոսում (Եփեսացիս 4.15,16): Դավանաբանական ուսմունքի իմացությունը ճիշտ հասկացությունների պարզ հանրագումար չէ, այլ մարդու մեջ Աստծո հանդեպ սեր պատվաստող գիտելիք (Բ Հովհաննես 6.10, Ա Հովհաննես 5.3): Ավելին, Աստվածաշունչը խոսում է «ողջամիտ վարդապետության» մասին, քանի որ բացի ամեն մնացյալից, այն շոշափում է նաև կյանքի բարոյական կողմը (Ա Տիմոթեոս 1.9,10, Տիտոս 2.1-5):

Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին դավանաբանության 28 աստվածաշնչյան հիմունքներ ունի: Դա հավատի հանգանակ չէ՝ դրանցում արտահայտված ճշմարտությունների որևէ հետագա զարգացման ժխտման իմաստով, քանի որ դրանց կարող են ավելացվել նաև այլ դավանաբանական կետեր: Եվ, թեև մենք միշտ պետք է բաց լինենք է՛լ ավելի մեծ լույս ընդունելու համար, եկեղեցու միաբանության

---

* Ռելյատիվիզմը (հարաբերապաշտություն) աշխարհի կատարյալ ճանաչողության անհնարինության ընդունումն է և օբյեկտիվ ճշմարտության ժխտումը, գիտելիքի հարաբերականության, պայմանական լինելու և սուբյեկտիվության հռչակումը:

և առաքելության համար կարևոր է նրա անդամների կուռ համաձայնությունն այդ ուսմունքների հետ: Էլ ի՞նչն է աշխարհի միլիոնավոր մարդկանց միավորում մեկ միասնական շարժման մեջ, եթե ոչ մեր ընդհանուր դավանաբանական ուսմունքը ու ճշմարտությունները:

Այդ պատճառով առաջիկա եռամսյակի ընթացքում մենք ուշադրություն կնվիրվենք դավանաբանական այդ կետերից մի քանիսին: Թեև մենք հավատում ենք, որ մեր ուսմունքի բոլոր 28 կետերը հիմնարար և էական են հանդիսանում մեր նույնականության համար՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ, սակայն չենք կարող բոլոր կետերն ուսումնասիրել մեկ եռամսյակի ընթացքում: Այդուհանդերձ, հուսով ենք, որ մեզ կհաջողվի ներկայացնել դրանցից մի քանիսի համակարգված միացյալ ձեռնարկը: Հատուկ ուշադրություն կնվիրվի 11-րդ՝ «Աճ Քրիստոսում» կետին, որն ընդունվել է Միսսուրի նահանգի Սենտ-Լուիս քաղաքի 2005թ.-ի Վեհաժողովի նստաշրջանում՝ (տե՛ս 5-7 դասերը): Դավանաբանական այս կետն ինքնին ինչ-որ նոր կամ նախկինում անհայտ ուսմունք չէ, ավելի շուտ, ի պատասխան աշխարհի որոշակի մասերում ծագող որոշ կարիքների՝ այն օգնում է պարզաբանել եկեղեցու կողմից այն զորության ըմբռնումը, որն Աստված Քրիստոսին հավատացողներին պարգևում է չարի ուժերի դեմ հաղթանակի համար: Փաստորեն, տվյալ եռամսյակի բոլոր դասերը գրված են Քրիստոսի և չարի ուժերի միջև պայքարի համատեքստում: Այդ պայքարը մենք անվանում ենք «մեծ պայքար»:

Մեծ պայքարի լույսի ներքո Քրիստոսում փրկությունը մեր դավանաբանական բոլոր կետերի միջով անցնող թելն է: Աստծո եկեղեցու դավանաբանության բոլոր 28 կետերը կոչված են բացահայտելու մեծ պայքարի և փրկության պատմության ճակատագրական թեմաները, և դրանք բոլորը ներդաշնակորեն միահյուսվում են մեկը մյուսին:

Դավանաբանական կետերն ինքնին նպատակ չեն: Դրանք միայն *միջոցներ* են, որոնք մեզ ուղղորդում են դեպի նպատակ՝ Հիսուսը, Հիսուսին անձամբ ճանաչելը և Նրանում աճը: Կամ, եթե առավել սուբյեկտիվորեն մոտենանք, բոլոր 28 կետերը մեզ պետք է տանեն այն բանի առավել խորն ըմբռնմանը, ինչ Հիսուսը կատարեց փրկության ծրագրում: Իսկ դա, իր հերթին, պետք է առավել խորը սեր հարուցի Աստծո հանդեպ և դրդի էլ ավելի նվիրված կյանքի, որն այդ սերը բացահայտում է աշխարհին, ինչպես նաև՝ «իշխանություններին և պետություններին երկնավորներում» (Եփեսացիս 3.10):

Այո՛, ամեն մեկն ինչ-որ բանի հավատում է: Առաջիկա եռամսյակի դասերի նպատակն է՝ օգնել մեզ ոչ թե պարզապես հավատալ ճշմարտու-

թյանը, այլև է՛լ ավելի շատ սիրել Աստծուն (Հովհաննես 14.6)՝ աճելով Նրա շնորհի մեջ:

Քվաբենա Դոնքորը (ծնունդով Գանայից) Վեհաժողովի գլխավոր գրասենյակին կից Աստվածաշնչյան հետազոտությունների ինստիտուտի տնօրենի օգնականն է Միլվեր Սփրինգում, Մերիլենդ նահանգ:

ՄԵԾ ՊԱՅՔԱՐ. ՀԻՄՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ծննդոց 3.15, Հայտնություն 12.1-17, Եսայիա 14.4-21, Եզեկիել 28.12-19, Եսայիա 53.6, Հռոմեացիս 1.20-28, Հովհաննես 16.2:

Հիշելու համարը.

«Եվ ես թշնամություն եմ դնում քո և կնոջ մեջտեղը, քո սերնդի և նրա սերնդի մեջտեղը. նա քո գլուխը ջախջախի, և դու նրա գարշապարը հայթես» (Ծննդոց 3.15):

Հիմնական միտքը.

Մեծ պայքարի գաղափարը համապարփակ հայեցակարգ է, որը միավորում է Յոթերորդ օրվա ադվենտիստների հավատամքի հիմքերը:

Ասում են՝ կարիքը բոլոր խոշոր հայտնագործությունների մայրն է: «Մայր» բառը տվյալ դեպքում նշանակում է «աղբյուր», «շարժիչ ուժ», «հիմք»: Ինչ-որ բանի փաստացի անհրաժեշտությունը կամ կարիքը մարդկանց դրդում է գործողությունների: Օրինակ, մաքուր օդի կարիքը այն հիմքը, շարժիչ ուժն է, որը դրդում է էներգիայի այլ աղբյուրներ որոնել՝ բացի հանածո վառելանյութից:

Հավատամքի համակարգը, ֆիզիկական հայտնագործությունների նման, նույնպես ունի հիմքի՝ այն բացատրող սկզբունքի կարիք:

Յոթերորդ օրվա ադվենտիստներն աստվածաշնչյան ուսմունքի 28 հիմք են դավանում: Դավանաբանական այդ կետերը կառուցված են «մեծ պայքար» կոչվող հայեցակարգի վրա: 28 կետերից յուրաքանչյուրը վերաբերում է այդ հսկա պայքարի որոշակի տեսանկյանը: Դավանաբանական կետերը, որոնք մենք կուսումնասիրենք այս եռամսյակի ընթացքում, կբացահայտեն մեծ պայքարի գաղափարի իմաստը: Այս շաբաթ մենք կուսումնասիրենք տվյալ ուսմունքի մի քանի հիմնարար գործոնները:

Պայքարը և նրա մասնակիցները

Մեզ հայտնի ողջ պատմության ընթացքում մարդիկ զգացել և զգում են, որ մարդկությունը ներքաշված է հակամարտող ուժերի միջև ինչ-որ ճակատամարտի, պատերազմի, պայքարի մեջ: Բանաստեղծ Թ. Ս. Էլիոթը գրել է.

«Իմ կյանքում անփոփոխ է մի բան:
Որքան էլ դուք դա քողարկեք, այն չի փոխվում՝
Բարու և չարի հավերժական պայքարը»:

(T. S. Eliot: The Complete Poems and Plays (New York, San Diego, London: Harcourt Brace & Company, 1952), p. 98).

Թեև նման ըմբռնումը բավականին տարածված է, մարդիկ տարբեր տեսակետներ ունեն հակամարտության էության և այն բանի վերաբերյալ, թե ով է դրանում ներքաշված, ինչ է դրված բախտախաղի վրա, և ինչով կավարտվի ամենը: Որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ՝ մենք այն տեսակետի կողմնակիցն ենք, որը հիմնված է Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարի մասին աստվածաշնչյան ուսմունքի վրա:

Կարդացե՛ք Ծննդոց 3.15-ը և Հայտնություն 12.1-17-ը: Ովքե՞ր են այդ պայքարի գլխավոր մասնակիցները: Ինչո՞ւ ենք մենք հավատում, որ այստեղ նկարագրված ուժերն իրական են, որ դրանք իսկական էակներ են: Ի՞նչ տեղի կունենա ուսմունքի մեր ողջ համակարգի հետ, եթե մենք որպես իրականություն չընդունենք Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարը և մեր դերը դրանում: _____

_____

_____

_____

_____

Մարդիկ հաճախ օգտագործում են այնպիսի բառեր, ինչպես «սատանա», «հրեշտակներ» կամ անգամ «Աստված», երբ ուզում են ասել ինչ-որ բան, ինչը բացարձակապես չի համապատասխանում այդ բառերի նշանակությանը: Օրինակ, ոմանք «Աստված» բառն օգտագործում են միայն որպես լեզվական հանգույց, նրանց ամենևին չի հետաքրքրքրում, թե արդյոք գոյություն ունի՞ Աստված: Ինչպիսի խորհրդանիշներ էլ օգտագործվեն հիշյալ անձանց նկարագրելու համար, Աստվածաշունչը սովորեցնում է, որ նրանք իսկապես գոյություն ունեն և ներքաշ-

ված են իրական պայքարի մեջ: Եվ հենց այդպես են հասկանում Յոթերորդ օրվա ադվենտիստները: Դավանաբանական կետերի մեծ մասը, որոնք մենք կուսումնասիրենք այս եռամսյակի ընթացքում կիմաստազրկվի, եթե մեծ պայքարի մասնակիցները չդիտարկվեն իբրև իրական անձինք, թեև այդպիսի ըմբռնումը հաճախ մեզ որոշ չափով տարօրինակ է ներկայացնում իշխող մշակույթի աչքերում:

Թեև աշխարհիկացումը վերջին երկու հարյուրամյակների ընթացքում մի անգամ չէ, որ փոխել է իր ձևերն ու տեսքը, դրա բնութագրերից մեկը՝ մարդկային լեզվից ամեն «գերբնականը» բացառելը, մնացել է անփոփոխ: Գիտության հաջող առաջընթացի շնորհիվ որոշ մշակույթներում մարդիկ ավելի ու ավելի են ձգտում դեպի գիտական տեսակետի վրա հիմնված աշխարհայացքը: Հրեշտակներն ու դևերը մտածողության գիտական մեթոդում ժողովրդականություն չեն վայելում: Այսպիսով, ժամանակակից մշակույթը վկայում է այն մասին, որ մարդիկ աստիճանաբար դադարում են հավատալ գերբնականին:

Ձեր մշակույթի վրա որքանո՞վ է ազդում գիտական և աշխարհիկացված աշխարհայացքը: Այդ ազդեցությանը որքանո՞վ եք ենթակա անձամբ դուք: Այդպիսի աշխարհայացքի ո՞ր տեսակետներից մենք պետք է հատկապես զգուշանանք:

Երկուշաբթի ***հոկտեմբերի 1***

Արուսյակի անկումը

Թեև Աստվածաշունչը մանրամասնորեն չի պատմում Աստծո և սատանայի միջև պայքարի հետ կապված իրադարձությունների մասին, մենք դա կարող ենք իմանալ Սուրբ Գրքի որոշ հատվածներից, ինչպիսիք են Եսայիա 14.4-21-ը և Եզեկիել 28.12-19-ը: Աստվածաշնչյան այդ տեքստերի թռուցիկ ընթերցման դեպքում կարելի է մտածել, թե դրանք պատմում են Տյուրոսի և Բաբելոնի հեթանոս թագավորների մասին: Բայց առավել ուշադիր ընթերցողը կնկատի, որ բերված հատվածները պարունակում են մանրամասներ, որոնք ոչ մի կերպ չեն կարող վերաբերել հին մերձավորարևելյան տիրակալներին: Անկասկած, դրանք մատնանշում են սատանայի ծագումը, զբաղեցրած դիրքն ու անկումը:

Ա Տիմոթեոս 3.6-ում Պողոս առաքյալը խորհուրդ է տալիս հոգևոր ծառայության չընդգրկել նորադարձ մարդուն, որպեսզի նա «չգոռոզանա և սատանայի դատաստանն ընկնի»: Պողոսի խոսքն ի՞նչ լույս է սփռում վերը բերված երկու հատվածների վրա,

և ինչպե՞ս են բոլոր երեք հատվածներն օգնում մեզ հասկանալ մեծ պայքարի պատճառներից մի քանիսը: _____

_____

_____

_____

_____

Վերը բերված տեքստերում նկարագրված են առնվազն երկու խնդիրներ՝ հպարտությունը և անկախությունը: Հին Կտակարանը ներկայացնում է արարված, կախյալ էակին, ով ձգտում է դառնալ ինքնաբավական և անկախ: Բայց անկախությունը միշտ ենթադրում է անկախություն ինչ-որ մեկից կամ ինչ-որ բանից: Ա Հովհաննես 3.8-ում ասված է, որ սատանան մեղանչել է ի սկզբանե. Ա Հովհաննես 3.4 տեքստը «մեղքը» բնորոշում է որպես *անօրենություն*: Հետևաբար, սատանայի մեղքը, որն ի հայտ եկավ անկախության և ինքնուրույնության ձգտման մեջ, փաստորեն ցանկություն էր արտահայտում՝ ազատվել Աստծո և Նրա օրենքի «սահմանափակումներից»: Այսպիսով, հրաժարվելով ենթարկվել Աստծո օրենքի հեղինակությանը՝ սատանան դրսևորեց բարոյական այլ սկզբունքներով ապրելու իր ցանկությունը: Այդ խռովարարը փորձում էր անվանարկել Աստծո արդար կառավարումը՝ հայտարարելով, որ Աստծո օրենքն անկատար է և այն անհրաժեշտ է փոխել: Բայց, քանի որ Աստծո օրենքը Նրա բնավորության արտացոլումն է, օրենքի թերությունը հավասարազոր կլիներ Աստծո բնավորության թերությանը: Ընդհանուր առմամբ, սատանայի ապստամբությունն ուղղված էր Իր՝ Աստծո դեմ:

Հպարտություն, ինքնավարություն, անկախություն: Այս բառերն ի՞նչ զուգորդումներ են առաջացնում ձեր գիտակցության մեջ: Ինչպե՞ս մեզանից յուրաքանչյուրը կարող է ընկնել երբեմն շատ անկատելի թակարդների մեջ, որոնք մեզ համար լարում են հպարտությունը, ինքնավարությունը և անկախությունը: Ի վերջո, ո՞րն է այդ հասկացություններից յուրաքանչյուրի վտանգը:

Երեքշաբթի ***հոկտեմբերի 2***

Աստծո զենքը

«Եվ ես թշնամություն եմ դնում քո և կնոջ մեջտեղը, քո սերնդի և նրա սերնդի մեջտեղը. նա քո գլուխը ջախջախի, և դու նրա գարշապարը խայթես» (Ծննդոց 3.15): Այս համարում

ինչպե՞ս է բացահայտվում մեծ պայքարը: _____

_____

_____

Ծննդոց 3.15 տեքստի խորհրդավոր լեզուն, որում կանխասված է պայքարը, ակնարկում է «մարտական գործողություններ» վարելու Աստծո կանոնների մասին: Մենք կարող ենք տեսնել, որ երկրի վրա օձի և կնոջ միջև հենց նոր ծագած հակամարտությունը պետք է ներքաշի այդ երկու հակառակորդների հետևորդներին ու սերունդներին՝ կնոջ «սերունդը» և օձի «սերունդը»: Չորս հազարամյակ անց հակամարտությունն իր գագաթնակետին հասավ սատանայի և կնոջ սերնդի՝ Նազովրեցի Հիսուսի միջև մահացու մենամարտում: Աստծո զենքը դարձավ Հիսուսը, ում պետք էր ճակատամարտել հանուն «կնոջ», դաժանաբար տառապել, սակայն, ի վերջո, մահացու պարտության մատնել սատանային: Ավելի ճիշտ, զենք դարձավ Հիսուսի զոհը, Նրա անշահախնդիր սիրո գործողությունը:

Հետևյալ համարներն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ մեծ պայքարի հետ կապված որոշ հարցեր: Ինչու՞ է փրկության ծրագիրը գտնվում այդ պայքարի կենտրոնում:

Համեմատե՛ք Ծննդոց 4.4-ը և Եբրայեցիս 11.4-ը _____

_____

Համեմատե՛ք Ծննդոց 12.3, 22.18-ը և Գաղատացիս 3.16-ը _____

_____

Համեմատե՛ք Ելից 25.8-ը և Եբրայեցիս 4.2-ը _____

_____

Համեմատե՛ք Եսայիա 53.6-ը և Հռոմեացիս 5.8-ը _____

_____

Մատթեոս 16.18, 18.16-20 _____

_____

Եբրայեցիս 8.1,2 _____

_____

Չորեքշաբթի ***հոկտեմբերի 3***

Սատանայի պայքարը

Եթե դուք ուշադրությամբ ուսումնասիրել եք երեկվա դասը, ապա, հավանաբար, տեսել եք, թե Սուրբ Գրքի օգնությամբ Աստված ինչպես է աստիճանաբար բացահայտում Իր բնավորությունը և Իր ճշմար-

տությունը մեծ պայքարում: Աստված Իրեն բացահայտել է հին Իսրայելում սրբարանում ծառայության, Քրիստոսի զոհի, քավչարար մահվան, եկեղեցու և երկնային սրբարանում Քրիստոսի ծառայության միջոցով:

Սակայն սատանան անդադար փորձում էր խորտակել Աստծո ծրագրերը: Մեծ պայքարը շարունակվում է առ այսօր՝ հետապնդելով միևնույն նպատակները:

Զոհաբերությունների համակարգը, որ կիրառում էին նահապետները, և որը հիմնարար տեղ էր զբաղեցնում հինկտակարանյան սրբարանի ծառայության մեջ, հաստատված էր Աստծո կողմից, որպեսզի մարդկանց հիշեցնի Արարչի մասին և նրանց մեջ պահպանի փրկության հույսը:

Սատանան ինչպե՞ս էր փորձում բռնատիրել և խեղաթյուրել փրկության ծրագրի մասին լուրը, որը ներկայացված է զոհաբերությունների համակարգում: Տե՛ս Հռոմեացիս 1.20-28, Երկրորդ օրինաց 32.17,18: _____

_____

_____

_____

Քրիստոսի մարմնացումը, Նրա ծառայությունը երկրի վրա և քավչարար զոհի մահը խաչի վրա՝ սրանք մեծ պայքարում սատանայի դեմ հաղթանակի Աստծո ծրագրի կենտրոնական բաղադրիչներն էին: Քրիստոսի մահը երաշխավորում է սատանայի կործանումը, ով անդադար ընդդիմանում է Նրան:

Կարդացե՛ք Մատթեոս 2.1-18, 4.1-11, 16.21-23, 27.39-42-ը: Այս համարներն ի՞նչ են ասում սատանայի դիմակայության մասին:

_____

_____

_____

Իր մահից և հարությունից հետո Քրիստոսը երկրի վրա թողեց Իր եկեղեցին, որպեսզի ընկած մարդկությանը հռչակի փրկության Բարի լուրը: Եկեղեցու հիմնադրման օրվանից սատանան ձգտում է թուլացնել և ոչնչացնել այն: Ստորև բերված հատվածները բացահայտում են եկեղեցու դեմ ուղղված սատանայի հնարքներից մի քանիսը. Գործք առաքելոց 5.17,18, 7.54-60, Բ Թեսաղոնիկեցիս 2.1-4, Ա Տիմոթեոս 4.1, Բ Պետրոս 2.1, Հայտնություն12.13-17:

Եբրայեցիս թուղթը հաղորդում է երկնքում գտնվող իրական սրբարանի մասին, ուր մտել է Հիսուսն Իր համբարձումից հետո (Եբրայեցիս 4.14-16, 8.1,2, 9.24)՝ բարեխոսելու մեղավոր մարդկության համար (Եբրայեցիս 7.27): Դանիել 8.11-14-ում մենք կարող ենք տեսնել, սա-

տանայի գործելը երկնային սրբարանում Քրիստոսի սրբազան ծառայության դեմ, և նրա փորձերը՝ զավթելու այդ ծառայությունը:

Ա Պետրոս 5.8,9-ը կարդալը և դրանում բովանդակվող նախազգուշացումը հասկանալը գործի կեսն է, անհրաժեշտ է ապրել այդ նախազգուշացումներին համապատասխան: Մենք ինչպե՞ս ենք դիմակայում սատանային: Օրվա ընթացքում դուք հաճա՞խ եք նկատում սատանայի հարձակումները:

Հինգշաբթի *հոկտեմբերի 4*

Ճակատագրեր

«Բայց եթե Տիրոջը ծառայություն անելը ձեզ անհաճո է, ընտրեցեք այսօր ձեզ համար, թե որն եք պաշտելու՝ գետի այն կողմում ձեր հայրերի պաշտած աստվածնե՞րը, թե՞ ամորհացիների աստվածները, բայց ես և իմ տունը Եհովային ենք պաշտելու» (Հեսու 24.15): Այս տեքստն ինչպե՞ս է բացահայտում մեծ պայքարի գլխավոր հարցերից մեկը:

Մարգարեությունները պատկերում են Աստծո և սատանայի միջև հակամարտության եզրափակիչ իրադարձությունները: 1260 տարվա ընթացքում (Դանիել 7.25, 12.7, Հայտնություն 11.2,3, 12.14, 13.5) սատանան դաժանորեն հալածել է Աստծո ժողովրդին: Եզրափակիչ վճռորոշ մենամարտում, որը նկարագրված է Հայտնություն 12-ում և 13-ում, սատանան գործի կդնի երկու երկրային ուժ՝ ինձի նման գազանին (Հայտնություն 13.1-10) և երկու եղջյուր ունեցող գազանին (Հայտնություն 13.11-17): Նրանք կօգտագործեն սատանայի մարտավարությունը, որի մասին մենք երեկ խոսում էինք:

Հայտնություն 14-ում տրված է պայքարի եզրափակիչ իրադարձությունների ժամանակ Աստծո հակադեցության նկարագրությունը սատանայի խուսանավումներին: Հայտնությունն 14.6-13 հատվածն ի՞նչ է ասում այն մասին, թե ինչպես պետք է լուսաբանվեն մեծ պայքարի որոշ հարցեր: _____

_____

_____

_____

_____

Հակամարտությունն իր ավարտին մոտենալուց առաջ Աստված ձգտում է առավելագույնս լիարժեք կերպով լուսաբանել հակամար-

տության ընթացքում բարձրացված հարցերը (այստեղ Նա դա կատարում է երեք հրեշտակների պատգամի միջոցով): Տեղի ունեցող իրադարձությունները հասկանալու համար մարդկությունը պետք է համապատասխան կերպով տեղեկացված լինի:

Եզրափակիչ հակամարտության մեջ կլինեն մարդիկ, ովքեր հավատարիմ կմնան Աստծուն: Հայտնություն 14.1-5-ում նրանք խորհրդանշորեն ներկայացված են 144000 թվով (տե՛ս նաև Հայտնություն 7.4): Նրանք մնացին Աստծո պատվիրաններին հնազանդ և իրենց Արարչին՝ Աստծուն անմացորդ նվիրված մեծ նեղության ժամանակ: Նրանք ստանում են Աստծո հավանությունը և հաղթում են Նրա հետ միասին այն դեպքում, երբ անզեղջ մեղավորները կոչնչացվեն հետագա հունձքի ժամանակ (Հայտնություն14.14-20): Աստվածաշնչի գլխավոր լուրն այն է, որ մեծ պայքարը մի օր կավարտվի:

Մեծ պայքարում ոչ ոք չի կարողանա չեզոք դիրք գրավել: Մենք կհայտնվենք կա՛մ մեկ, կա՛մ մյուս կողմում: Յուրաքանչյուր ոք կարող է հայտարարել, որ գտնվում է Աստծո կողմում (տե՛ս Հովհաննես 16.2): Բայց ինչպե՞ս իմանալ, թե որտեղ ենք մենք: Ձեր պատասխաններով կիսվե՛ք շաբաթ օրը՝ դասի ժամանակ:

Ուրբաթ *հոկտեմբերի 5*

Հետագա ուսումնասիրության համար

«Աստվածաշունչը լուսաբանում է ինքն իրեն: Դրա համար անհրաժեշտ է մի համարը համեմատել մյուսի հետ: Ձեր աշակերտներին սովորեցրե՛ք տեսնել Աստվածաշնչի ամբողջականությունը, նրա փոխկապակցվածությունը: Օգնե՛ք բացահայտել Աստվածաշնչի կենտրոնական վեհագույն թեման՝ Աստծո սկզբնական ծրագիրը երկրի համար, մեծ պայքարի ծագումը և փրկության գործընթացը: Օգնե՛ք հասկանալ առաջնության համար պայքարող երկու սկզբունքների բնույթը, սովորեցրե՛ք քննել դրանց գործողությունը պատմության ընթացքում և մարգարեության մեջ՝ մինչև մարդկային պատմության փառավոր ավարտը: Սովորեցրե՛ք հետևել, թե ինչպես է այդ պայքարը թափանցում մարդկային գործունեության բոլոր ոլորտները, ինչպես են նրանք իրենց յուրաքանչյուր արարքում ի հայտ բերում այս կամ այն հակամարտող կողմը, և որ անկախ այն բանից՝ ցանկանում են իրենք դա, թե ոչ, նրանք արդեն հիմա պետք է որոշեն, թե ում կողմում լինեն» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 190):

Հարցեր քննարկման համար

1. Վերը «Դաստիարակություն» գրքից բերված մեջբերման մեջ է. Ուայթը գրում է, որ մեծ պայքարը ներթափանցում է մարդկային կյանքի յուրաքանչյուր ոլորտ: Որքանո՞վ է դա արտացոլվում ձեր անձնական փորձառության մեջ: Երբ դուք ստիպված եք լինում առօրյա կյանքի խնդիրները հաղթահարել մեղքի և տառապանքի աշխարհում, մեծ պայքարի ձեր ըմբռնումը ձեզ համար ծառայում է որպես ուժի՞, թե՞ հիասթափության և հուսալքման աղբյուր:
2. Ոմանք խոսում են այն մասին, թե Քրիստոսի երկրորդ գալուստն «ուշանում է»: Հաշվի առնելով տառապանքների ողջ անարդարացիությունն ու ողջ անիմաստությունը՝ թվում է, թե երկրի վրա ամեն մի ավելորդ օրը չափազանց շատ է: Թո՛ղ աշակերտները կիսվեն մեծ պայքարի գաղափարի վերաբերյալ իրենց կարծիքներով՝ այսպես կոչված ուշացման տեսակետից:
3. Որքանո՞վ վստահ մենք կարող ենք լինել բարու և չարի միջև հակամարտության եզրափակիչ լուծման մեջ: Ինչպե՞ս է, օրինակ, Դանիել 2-ը օգնում վստահություն ձեռք բերել պայքարի վերջնական ելքի նկատմամբ:
4. Վերադարձե՛ք հինգշաբթի օրվա դասի հարցի ձեր պատասխաններին: Պատասխանը հատկապես կարևոր է, քանի որ վերաբերում է մեկին, ով վերջին օրերին հալածելու է Աստծո ժողովրդին: Մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ կհայտնվենք ճիշտ կողմում:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏՎԱԾ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Պետրոս 1.19-21, Բ Տիմոթեոս 3.16,17, Երկրորդ Օրինաց 6.4, Մատթեոս 28.19, Եբրայեցիս 11.6, Ելից 3.1-14:

Հիշելու համարը.

«Շատ մասերով և շատ կերպերով Աստված սկզբից խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, այս վերջում խոսեց մեզ հետ Որդով, որին ամեն բանի ժառանգ դրեց, որով աշխարհքն էլ արեց» (Եբրայեցիս 1.1,2):

Հիմնական միտքը.

Որքան էլ կարևոր լինի հասկանալ, թե ինչպես է գործում աստվածաշնչյան ներշնչումը, է՛լ ավելի կարևոր է ճանաչել Աստծուն, ով բացահայտվում է մեզ այդ ներշնչման միջոցով:

«Երկինքները պատմում են Աստծո փառքը, և հաստատությունն իմացնում է Նրա ձեռքի գործը» (Սաղմոս 19.1): Դա, հիրավի, այդպես է: Սակայն երկինքը չի կարող հռչակել այն մասին, որ Աստված սիրում մեզ, մահացավ մեզ համար և եռանդուն կերպով ջանում է փրկել մեզ մեր մեղսավոր ընտրության հետևանքներից:

Այդ պատճառով, մենք ինչ էլ որ իմանանք Աստծո մասին այլ աղբյուրներից, տեղեկատվության հիմնական կրողը Աստվածաշունչն է: Կան մեծ ճշմարտություններ, հատկապես՝ Աստծո էության և աշխարհում Նրա գործերի մասին, որոնց մասին մենք ոչինչ էլ չէինք իմանա, եթե դրանք մեզ բացված չլինեին Աստծո խոսքում: Ինչպես արդեն նշել ենք, մարդիկ իսկապես զգում են հակամարտությունը բարու և չարի միջև, բայց նրանք ինչպե՞ս կիմանային մեծ պայքարի և դրա հետևանքների մասին, եթե այդ մասին ասված չլիներ Սուրբ գրքում;

Այս շաբաթ մենք կկենտրոնանանք երկու տեսանկյունների վրա՝ նախ, մենք կուսումնասիրենք, թե ինչ է Աստվածաշունչն ասում իր և իր ներշնչվածության (աստվածաշունչ լինելու) մասին, հետո խորամուխ կլինենք Աստծո մասին նրա ուսմունքի մեջ, ով ներշնչել է սրբազան էջերը գրողներին:

Ուսմունք Սուրբ գրքի մասին

Կարդացե՛ք Բ Պետրոս 1.19-21-ը: Ինչպե՞ս էին Նոր կտակարանի հեղինակները վերաբերվում Սուրբ գրքին: _____

_____

_____

Պետրոսը պնդում է, որ Հին կտակարանի մարգարեությունները մարդկային ծագում չունեն: Նրա փաստարկը պարզ է՝ մարգարեներն ասում էին, քանի որ «շարժվում էին Սուրբ Հոգու կողմից»: Դա նշանակում է, որ հենց Սուրբ Հոգին էր դրդում գրել Աստծո խոսքը: Այլ խոսքերով, Աստվածաշնչի հեղինակները ներշնչված էին հենց Իր՝ Աստծո կողմից:

Կարդացե՛ք Բ Տիմոթեոս 3.16,17-ը: Այդ համարներն ի՞նչ են ասում Աստվածաշնչի և նրա գործնական օգտակարության մասին: _____

_____

_____

Պողոսն աներկբայորեն հայտնում է Տիմոթեոսին և մեզ՝ քանի որ Սուրբ գիրքը պարգևված է Աստծո կողմից, այն արժանի է վստահության և օգտակար է քրիստոնյայի աճի համար: Առաքյալը չի կասկածում Սուրբ գրքի ճշմարտացիությանը, հեղինակավոր լինելուն և ծագմանը: Ուշադրություն դարձրեք, որ նա ասում է «ամեն գիրք»: Նա մեզ իրավունք չի տալիս ընտրել, թե, մեր կարծիքով, ո՛ր հատվածներն են ներշնչված, իսկ որոնք՝ ոչ: Չնայելով այն բանին, որ որոշ պատվերներ կորցրել են իրենց պարտադիր բնույթը (օրինակ, ծիսական օրենքները), դա չի նշանակում, որ Աստվածաշնչի որոշ մասեր ներշնչված են, իսկ որոշները՝ ոչ, կամ՝ որ ոչ բոլոր աստվածաշնչյան հատվածներն են միանման կերպով ներշնչված:

Կարդացե՛ք Մատթեոս 4.4,7,10, 22.41-46, Հովհաննես 10.34, 35-ը: Սուրբ Գրքի և նրա հեղինակության վերաբերյալ ի՞նչ կարևոր ճշմարտություններ մենք կարող ենք քաղել այդ համարներից: _____

_____

_____

Ինչի էլ հավատա մարդը, նրան անհրաժեշտ է ելակետ, հիմք, որի վրա նա կարող է կառուցել իր հավատը: Յոթերորդ օրվա ադվենտիստ

քրիստոնյաների համար այդպիսի հիմք է Աստվածաշունչը՝ ճշմարտության վերջնական չափանիշը և դատավորը:

Որքա՞ն ժամանակ եք դուք անցկացնում Աստծո խոսքն ուսումնասիրելու վրա: Որքանո՞վ է ձեր կյանքը համապատասխանում նրա ուսմունքին: Մտածե՛ք անցած 24 ժամվա մասին: Այդ ժամանակահատվածում դուք ի՞նչ եք արել կամ չեք արել՝ հիմնվելով Սուրբ գրքի հեղինակության վրա:

Երկուշաբթի ***հոկտեմբերի 8***

Ներշնչման բնույթը

«Ոչ թե Աստվածաշնչի խոսքերը, այլ այն գրած մարդիկ են եղել Աստծուց ներշնչված: Ներշնչումն ազդում է ոչ թե մարդու բառերի կամ արտահայտությունների, այլ հենց նրա վրա, և նրա գիտակցությունը Սուրբ Հոգու ազդեցությամբ լցվում է որոշակի գաղափարներով: Իսկ որոշակի բառերը, որոնցով արտահայտվում են այդ մտքերը, կրում են անհատականության կնիքը: Այդպես տարածվում են աստվածային խրատները: Աստվածային միտքն ու կամքը միավորվում են մարդու մտքի ու կամքի հետ, այդպիսով մարդու գրածը դառնում է Աստծո խոսք» (Է. Ուայթ, Ընտիր լուրեր, հտ. 1, 21): Այդ խոսքերն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ աստվածաշնչյան ներշնչման գործողությունը:

Հավատալով բառացի ներշնչմանը, որի համաձայն Աստված իբրև թե աստվածաշնչյան հեղինակներին անմիջականորեն թելադրում էր Սուրբ գրքի տեքստը, քրիստոնյաները սայթաքում են այսպես կոչված խնդրահարույց համարների պատճառով: Որպես օրինակ կարելի է հիշել խաչի վրա Հիսուսի գլխավերևում կախված տախտակը: Համաձայն Մատթեոս 27.37-ի՝ ցուցանակը հռչակում էր. «Այս է Հիսուսը՝ հրեից թագավորը», համաձայն Մարկոս 15.26-ի՝ «Հրեից թագավորը», համաձայն Ղուկաս 23.38-ի՝ «Այս է հրեաների թագավորը»: Ինչպե՞ս հասկանանք այդ տարբերությունները:

Աստվածաշունչը պնդում է, որ «ամեն գիրք Աստվածաշունչ են» և արժանի են վստահության, միևնույն ժամանակ մենք հայտնաբերում ենք, որ, օրինակ, տախտակի վրայի գրառումները տարբեր են: Այդ փաստերը բացում են մեզ, թե ինչպես է գործում ներշնչումը: Այս դեպքը ցույց է տալիս, որ ներշնչումը թույլ է տալիս գաղափարի կամ իրադարձության տարբեր ձևակերպումներ, բայց այդ ձևակերպումները դրանք համապատասխանորեն են փոխանցում: Եթե ընդհանուր իմաս-

տը համապատասխանում է միասնական իմաստին, ապա մեր օրինակում, երբ բոլոր երեք գրառումները խոսում են մի բանի մասին, դա չի հակասում ներշնչման սկզբունքներին: Մյուս կողմից, այնտեղ, որտեղ իրադարձությունները կամ հանգամանքները ճշգրտումներ են պահանջում, ինչպես Գ. Թագավորաց 6.1-ում, ներշնչումը տալիս է անհրաժեշտ մանրամասները, որոնք նույնպես հարկ է ընդունել որպես փաստ:

Համեմատե՛ք Մատթեոս 27.5-ը և Գործք առաքելոց 1.18-ը: Ձեր կարծիքով, ինչո՞վ են տարբերվում Հուդայի մահվան մասին այս պատումները: _____

_____

_____

Երկար ժամանակ Աստվածաշնչի քննադատները պնդում էին, որ տվյալ համարները հակասական տեղեկատվություն են տալիս Հուդայի մահվան մասին: Սակայն այս երկու համարներում հակասություն չկա. դրանք պարզապես բովանդակում են Հուդայի մահվան տարբեր փուլերի նկարագրությունը: Առաջին տեքստը պատմում է կախվելու միջոցով ինքնասպանություն գործելու եղանակի մասին, իսկ երկրորդը վկայում է, թե ինչ տեղի ունեցավ մարմնի հետ կախվելուց հետո՝ պարանը կտրվեց, և այն ընկավ:

Հուդայի մահվան մասին Է. Ուայթը գրում է. «Հիսուսի խաչելության վկան դառնալը նրա ուժերից վեր էր: Հուսահատությունը տիրեց նրան, և նա կախվեց… Նույն օրը մի փոքր ավելի ուշ Պիղատոսի պալատից դեպի Գողգոթա սարը տանող ճանապարհով սանձարձակ ամբոխը Հիսուսին տանում էր դեպի խաչելության վայրը: Հանկարծ ճիչերն ու աղաղակները լռեցին: Մեկուսի պուրակի եզրին մարդիկ չորացած ծառի տակ տեսան Հուդայի մարմինը: Դա ամենաքստմնելի տեսարանն էր: Հուդայի մարմնի ծանրության ներքո պարանը, որով նա կախվել էր, կտրվել էր, դիակն այլանդակվել էր, և շները հոշոտում էին այն: Մարմինն իսկույն հեռացրին, բայց ամբոխն արդեն չէր ծիծաղում: Դեմքերը գունատվել էին, մարդիկ լուռ խորհում էին: Թվում էր, թե հատուցումն արդեն վրա է հասել նրանց, ովքեր մեղավոր էին Հիսուսի արյան համար» («Դարերի փափագը», 722):

Աստվածաշնչյան համարների ճնշող մեծամասնությունն անխոցելի է անգամ Աստծո խոսքի հանդեպ բծախնդիր քննադատների համար: Իսկ այն դեպքերում, երբ Աստվածաշնչում ինչ-որ թվացյալ «սխալներ» կամ «հակասություններ» են ծագում, խելամիտ կլինի խոնարհություն և պարզություն դրսևորել և աղոթել, որպեսզի մեր միտքը Սուրբ Հոգով լուսավորվի: Ո՞վ գիտի, թե որքան մարդկիկ են հավատի նավաբեկության

ենթարկվել՝ կենտրոնանալով «խնդրահարույց» տեքստերի վրա: Մենք կանչված ենք ոչ թե դատելու Սուրբ գիրքը, այլ հնազանդվելու նրան:

Երեքշաբթի ***հոկտեմբերի 9***

Եռամիասնական Աստծո խորհուրդը

«Եվ Աստված ասաց. Մեր պատկերով և մեր նմանության պես մարդ շինենք» (Ծննդոց 1.26):

Որքան էլ կարևոր լինի ըմբռնելը, թե ինչպես է գործում ներշնչումը, այն միայն նպատակին հասնելու միջոց է, իսկ նպատակն Աստծուն ճանաչելն է: Այն բանի խորն ըմբռնումը, թե ինչպես է գրվել աստվածաշունչը, կամ նույնիսկ դրանում բացահայտված ճշմարտությունների համակողմանի վերլուծությունը ոչնչով չի օգնի մեզ, եթե մենք Տիրոջն անձամբ չենք ճանաչում (Հովհաննես 17.3):

Եվ Աստծո միասնությունն Աստվածաշնչի առանցքային հիմնավորումներից մեկն է:

Կարդացե՛ք Երկրորդ օրինաց 6.4-ը և Մարկոս 12.29-ը: Ինչպիսի՞ կարևոր ճշմարտություն է ներկայացված այդ տեքստերում: _

_____

_____

_____

Այն արտահայտությունները, որոնցում Աստվածաշունչն ընդգծում է Աստծո միասնությունը, բացառում են բազմաստվածության ամեն միտք: Կա միայն միակ Աստված: Սակայն Աստվածաշունչը մեզ տալիս է աստվածության լիակատար պատկերը. միասնական Աստված ներկայացված է երեք Անձերում՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի:

Կարդացե՛ք Ծննդոց 1.26, 3.22, 11.7, Հովհաննես 1.1-3,18, 20.28, Բ Կորնթացիս 13.14, Մատթեոս 28.19, Գործք առաքելոց 5.3,4-ը: Այս համարներն ի՞նչ են ասում աստվածության էության մասին: _

_____

_____

_____

Բազմաստվածության հինկտակարանյան ակնարկը ցույց է տալիս Աստծո ներքին էությունը: Այդպիսի ըմբռնումը համադրելով Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու մասին նորկտակարանյան պնդումների հետ՝ մենք սկսում ենք գիտակցել, որ Աստծո բնույթի մասին շատ բան մենք մինչև վերջ չենք հասկանում: Աստվածության եռամիասնությունը այն

բազում գաղտնիքներից է, որոնք Աստվածաշնչում ներկայացված են որպես հանրահայտ ճշմարտություն:

Աստծո մասին աստվածաշնչյան տեղեկությունը, այդ թվում նաև՝ աստվածության երեք Անձերի մասին ճշմարտությունը շարադրված են ոչ թե նրա համար, որպեսզի մենք սկսենք փիլիսոփայել, այլ որպեսզի բազմապատկենք Աստծո գործերի, հատկապես՝ հանուն մեզ Նրա փրկարար աշխատանքի մեր ըմբռնումը՝ մեծ պայքարի բացահայտման և վերջնական ավարտի համատեքստում:

Իհարկե, շատերին տարբեր հարցեր են հետաքրքրում, որոնց պատասխանը կարող է տալ միայն Աստված: Մենք ինչպե՞ս կարող են սովորել վստահել Նրան, մինչև որ կգա այն ժամանակը, երբ կտրվեն բոլոր պատասխանները:

Չորեքշաբթի ***հոկտեմբերի 10***

Մեր Արարչի հատկությունները

Աստվածաշունչը մեզ Աստծո մասին այնպիսի ճշմարտություններ է բացահայտում, որոնք մեք ուրիշ ոչ մի տեղ չենք գտնի: Այդ ճշմարտություններից մեկը պատմում է այն մասին, որ Նա Արարիչ է: Ավելին, դա առաջին բանն է, ինչ Աստվածաշունչն ասում է Աստծո մասին՝ Նա ստեղծեց «երկինքը և երկիրը» (Ծննդոց 1.1):

Ծննդոց 1.1 համարի բազում գրավիչ առանձնահատկություններից մեկն այն է, որ Աստվածաշունչը պարզապես հաստատում է Աստծո գոյությունը՝ չփորձելով որևէ կերպ ապացուցել այն: Աստվածաշունչն ավելի շատ ուշադրություն է նվիրում ուսմունքին այն մասին, թե ինչպիսին է Աստված, հատկապես, երբ Նրա բնավորությունը բացահայտվում է ընկած մարդկության հետ Նրա փոխգործողության միջոցով: Բայց Գիրքը չի փորձում ապացուցել Աստծո գոյությունը: Նա դա շարադրում է որպես փաստ:

Կարդացե՛ք Եբրայեցիս 11.6-ը և Հռոմեացիս 10.17-ը: Այստեղ ի՞նչ է ասվում Տիրոջ և Նրա Խոսքի մասին, որը տեղեկացնում է մեզ Աստծո գոյության մասին: _____

_____

_____

Աստծո գոյության մեջ համոզվածությունը չի կարող հիմնվել բացառապես բանական փաստարկների վրա: Աստվածաշունչը ցույց է տալիս, որ մարդը դրանում համոզվում է անձնական փորձի միջոցով, երբ

Սուրբ Հոգին սրտում և մտքում տպավորում է Տիրոջ գոյության փաստը: Մարդիկ հաճախ նախ հավատ են ձեռք բերում առ Աստված և միայն հետո են սկսում տրամաբանական և մտավոր հիմնավորում կառուցել Նրա հանդեպ իրենց հավատի համար, ում չեն տեսնում:

Կարդացե՛ք Մաղաքիա 3.6, Հակոբոս 1.17, Ա Հովհաննես 4.8, 16, Բ Մնացորդաց 6.18-ը: Աստծո ո՞ր բնութագրերի մասին են մեզ հայտնում այդ համարները: Նրա մյուս ո՞ր հատկանիշներն են բացահայտվում Սուրբ գրքում: _____

_____

_____

Խորհե՛ք Սուրբ գրքում ներկայացված Աստծո հատկանիշների մասին: Դրանցից որո՞նց մասին դուք կարող էիք իմանալ այլ աղբյուրներից, օրինակ՝ բնությունից կամ անձնական փորձից: Դա ի՞նչ է ասում Աստծուն հասկանալու հարցում Սուրբ գրքի կարևորության մասին:

Հինգշաբթի ***հոկտեմբերի 11***

Աստծո գործողությունները

Նույնիսկ Աստվածաշնչի ամենամակերեսային ընթերցումը մեզ համար բացահայտում է, որ Աստված եռանդուն կերպով մասնակցում է մարդկության կյանքին և երկրի վրա տեղի ունեցող ամեն ինչին: Նա հեռավոր և մեկուսի ինչ-որ էակ չէ, ինչպես սովորեցնում էին որոշ հին հունական փիլիսոփաներ (նույնիսկ որոշ քրիստոնեական աստվածաբաններ ջանում են Նրան այդպիսին ներկայացնել): Թեև Տերն արմատապես տարբերվում է Իր արարչագործությունից, Նա Իրեն նրա հետ կապել է սերտ կապերով:

Երեկ մենք տեսանք, որ Աստվածաշունչը Տիրոջը պատկերում է որպես մեր Արարիչ, ինչը վկայում է Նրա սերտ կապի մասին այս աշխարհի հետ: Ստորև բերված համարներն ի՞նչ են ասում երկրի վրա Աստծո մյուս գործերի մասին, հատկապես մեծ պայքարի համատեքստում:

Ծննդոց 11.9 _____

_____

Ծննդոց 19.24 _____

_____

Ելից 3.1-14 _____

Հովհաննես 3.16 _____

_____

Ա Թեսաղոնիկեցիս 4.17 _____

_____

Աստվածաշունչը հստակ կերպով ցույց է տալիս, որ Աստված սերտորեն կապված է մարդկության հետ: Իրականում մեծ պայքարի սցենարը պարզ է. Տերը մարդկությունը փրկում է մեղքի և սատանայի ճանկերից: Աստծո բոլոր գործողություններում՝ երկրի արարման (Ծննդոց 1.1), խաչի վրա փրկագնման (Հովհաննես 19.18), մեր մոլորակի վերաարարման (Բ Պետրոս 3.12,13) մեջ Աստվածաշունչը բացահայտում է Աստծուն, ով սերտորեն փոխգործակցում է մարդկության հետ:

Աստված ինչպե՞ս է Իրեն հայտնել ձեր փորձառություններում: Նա ի՞նչ է կատարել ձեր և շրջապատողների կյանքում: Դուք ինչպե՞ս եք սովորել մխիթարություն քաղել Աստծո՝ ձեզ մոտիկ լինելու գիտակցումից:

Ուրբաթ ***հոկտեմբերի 12***

Հեպագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «Ապաքինման ծառայություն» գրքից կարդացե՛ք «Մտահայեցողական գիտելիքի վտանգը» գլուխը, էջ 427-438, «Վկայություններ եկեղեցու համար» գրքից՝ «Մարմնացած Խոսքը, գլուխը, էջ 746-749, «Մեծ պայքարը» գրքից՝ «Նախաբանը» և «Ներածությունը»:

«Աստծուն հաճո էր ճշմարտությունը մարդկանց միջոցով աշխարհին հայտնելը, և Նա Ինքը Սուրբ Հոգու միջոցով նրանց ընդունակություններով օժտեց այդ աշխատանքի համար՝ որոշակիորեն նրանց մըտքերն ուղղելով և հուշելով, թե ինչ պետք է ասել ու գրել: Թեև այդ գանձը պահվում է երկրային անոթներում և հռչակվում է մարդկային անկատար լեզվով, այն մնում է որպես Աստծո վկայություն, և Աստծո յուրաքանչյուր հնազանդ զավակ նրանում տեսնում է աստվածային զորության փառքը՝ շնորհով ու ճշմարտությամբ լի:

Իր Խոսքում Աստված մարդկությանը հայտնել է այն ամենը, ինչ անհրաժեշտ է իմանալ փրկության համար: Սուրբ գիրքը պետք է ընդունվի որպես Նրա կամքի հեղինակավոր և անսխալական հայտնություն: Նրանով անհրաժեշտ է չափակցել մեր արարքները, այն պետք է ծառայի որպես ճշմարտության ուղենիշ և մեր կյանքի չափանմուշ: «Ամեն Գիրք աստվածաշունչ են և օգտակար՝ վարդապետության և հանդիմանու-

թյան և ուղղելու և արդարության խրատելու համար», որպեսզի Աստծո մարդը կատարյալ լինի՝ «ամեն բարի գործերի համար պատրաստված» (Բ Տիմոթեոս 3.16,17) (Է. Ուայթ, Մեծ պայքար, էջ vi, vii):

Հարցեր քննարկման համար

1. Մենք որքանո՞վ վստահ կարող ենք լինել Աստծո մասին մեր եզրակացություններում, որոնք հիմնված են ոչ աստվածաշնչյան աղբյուրների վրա: Ի՞նչ աղբյուրներ են դրանք, և ինչպե՞ս մենք կարող ենք հավաստիանալ դրանց տրամադրած տեղեկատվության ճշտության մեջ:
2. Ինչո՞ւ է գերբնականը ժխտող ցանկացած տեսակետ կատարյալ հակասության մեջ գտնվում Սուրբ գրքի հետ:
3. Գիտությունը և տեխնոլոգիաները շատ հարցերում մարդկության համար մեծ օրհնություն դարձան: Գիտությունը նաև երբեմն օգնում է մեզ ավելի լավ հասկանալ Աստծո զորությունը (երբ, օրինակ, վկայում է, թե որքան բարդ է կյանքը): Դրա հետ մեկտեղ, ի՞նչ սահմաններում է գիտությունն ընդունակ բացահայտել Աստծուն: Իսկ ինչպե՞ս այն կարող է խանգարել Աստծուն ճշմարտապես հասկանալուն:
4. Ինչո՞ւ եռամիասնական Աստծո մասին դավանանքը (որքան էլ այն դժվար լինի հասկանալու համար) այդքան կարևոր է մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար: Խորհե՛ք, թե ինչ կնշանակեր, օրինակ, եթե Քրիստոսն Աստված չլիներ:

ՄԱՐԴՆ ԱՍՏԾՈ ԱՐԱՐԱԾՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ծննդոց 1.27,26, Մարկոս 12.13-17, Ծննդոց 2.19-25, Գործք առաքելոց 17.26, Հռոմեացիս 5.12-19:

Հիշելու համարը.

«Ճանաչեցեք, որ Տերն է Աստված. նա արեց մեզ, և ոչ թե մենք, որ մենք նրա ժողովուրդը և Նրա արոտի ոչխարներն ենք» (Սաղմոս 100.3):

Հիմնական միտքը.

Աստված ստեղծել է մարդուն Իր պատկերով, բայց մեղքն աղավաղեց այդ պատկերը: Աստծո ծրագիրն այն է, որ մեր մեջ վերականգնի այդ պատկերը:

XIX դարի մտածող Արթուր Շոպենհաուերը, մարդկային նույնականության էության մասին մտորումների մեջ խորասուզված, փողոցում անզգուշաբար բախվեց մի պատահական անցորդի: Մարդը, ում նա հրել էր, վրդովված պատասխան պահանջեց.

– Ո՞վ ես դու: Քեզ ո՞ւմ տեղն ես դրել:

– Ո՞վ եմ ես, - հարցը կրկնեց Շոպենհաուերը, - ես էլ կցանկանայի իմանալ դա:

Ո՞վ եմ ես: Ընդհանուր առմամբ, ո՞վ ենք մենք որպես մարդկային ռասա: Ի՞նչ ենք մենք այստեղ անում: Ինչպե՞ս և ինչո՞ւ ենք մենք այստեղ հայտնվել:

Այս հնամենի հարցերն առաջվա պես հուզում են մարդկությանը: Սակայն Սուրբ գիրքը պատասխանում է դրանց. չէ՞ որ անխզելի կապ գոյություն ունի մեր նույնականության հարցի և արարման մասին դավանաբանության միջև: Այս բոլոր հարցերի պատասխանը բովանդակվում է հենց այդ դավանաբանության մեջ. աստվածաշնչյան ոչ մի այլ ուսմունք այդքան կարևոր տեղ չի զբաղեցնում մարդկության մեր ըմբռնման մեջ, քանի որ այդ դավանաբանությունը կենտրոնացած է մեր *ծագման*, և ոչ թե պարզապես մեր *սկզբի վրա*: «Սկիզբը» կարող է վերաբերել միայն առաջացման փաստին, իսկ «ծագումն» իր մեջ կրում է առաջացման փաստի *նպատակը*: Այս պատճառով մարդու արարման մասին աստվածաշնչյան ուսմունքն արմատապես հակադրվում է էվո-

լյուցիային, որը պնդում է, որ մեր գոյությունը ոչ մի նպատակ չունի (մարդկությունը երկրի վրա՝ պատահականություն է): Հազիվ թե հնարավոր լինի գտնել երկու ուսմունք, որոնք իրենցից ներկայացնեն ոչ միայն մեր գոյության, այլ նաև մեր նույնականության այդքան տարբեր և անհաշտ այլընտրանքներ:

Միաշաբթի ***հոկտեմբերի 14***

Արարումը և մարդու ծագումը

«Եվ Աստված ստեղծեց մարդն իր պատկերով. Աստծո պատկերով ստեղծեց նրան. արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդոց 1.27): Այս համարն ի՞նչ է հայտնում մեր ծագման մասին, ինչո՞վ է այդքան արմատապես տարբերվում և նույնիսկ բացահայտորեն հակասում մարդու ծագման այլ տեսակետներին, ինչպես, օրինակ, էվոլյուցիայի տեսությունը: _____

_____

_____

Անհնար է չնկատել այն փաստը, որ մարդու արարումը, լինելով Աստծո գիտակցված գործողություն, ուներ իր *նպատակը*: Սուրբ գրքում տեղ չկա որևէ պատահականության գաղափարի համար: Մենք ստեղծվել ենք հատուկ նպատակով, հենց սկզբից մեզ պարգևվել է հատուկ բնություն և էություն:

«Աստծո պատկերով» ստեղծված՝ նշանակում է միանգամայն որոշակի էությամբ և նպատակով: Այս հանգամանքը կարևոր է, չէ՞ որ որոշ մտածողներ պնդում են, որ մարդիկ պետք է իրենք իրենց համար ստեղծեն իմաստ և նպատակ, քանի որ մենք ի հայտ ենք եկել առանց մեկի և մյուսի: Իսկապես, եթե մենք պատահաբար ենք հայտնվել (ինչպես սովորեցնում է էվոլյուցիայի տեսությունը), ապա մենք պետք է ներկայացնենք մեր սեփական նպատակները: Սակայն, ըստ Աստվածաշնչի, մենք մտահղացվել ենք ավելի վաղ և ստեղծվել ենք Աստծո պատկերով, որպեսզի փառք տանք Նրան:

Մարդկության սկիզբը հասնում է մինչև հնագույն պատմություն: Կարդացե՛ք Հուդա 14, Հռոմեացիս 5.12-21 և Ա Կորնթացիս 15.20-22-ը: Այդ համարներն ինչպե՞ս են օգնում մեզ Ադամին ընկալել որպես պատմական անձնավորություն: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր մեզ համար: _____

_____

Զարմանալի է, որ Աստվածաշնչի շատ մեկնիչներ հերքում են Ադամի պատմական անձնավորություն լինելը՝ նրան համարելով առասպել, մարդկության խորհրդանիշ, բայց ամենևին էլ ոչ իրական մարդ: Այդպիսի տեսակետ կարելի է ունենալ՝ միայն խստիվ աղավաղելով Հին և Նոր կտակարանների տեքստերը:

Խորհե՛ք այն մասին, որ մարդն ստեղծվել է Աստծո պատկերով: Ի՞նչ է դա ասում մեր արժեքավոր լինելու մասին՝ չնայելով մեր թերություններին, թուլություններին և արատներին:

Երկուշաբթի ***հոկտեմբերի 15***

Աստծո պատկերը, մաս 1

Ինչպես մենք տեսանք երեկ, Ադամը և, իհարկե, Եվան իրական մարդիկ էին, ոչ թե խորհրդանիշ և առասպել, նրանք կենդանի բանական էակներ էին՝ բաղկացած մարմնից և արյունից, ստեղծված «Աստծո պատկերով»: Հասկանալի է, որ Աստծո պատկերով ստեղծված լինելը ինչ-որ լավ, սուրբ բան է, որը մեզ անքակտելի արժեք է պարգևում: Սակայն ի՞նչ է դա նշանակում իրականում:

Ուշադիր կարդացե՛ք Ծննդոց 1.26-28-ը: Ի՞նչ նպատակով Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով: Ինչի՞ մասին է խոսում Աստված, և ինչպե՞ս է դա օգնում մեզ հասկանալ «Աստծո պատկերի» գաղափարը: _____

_____

_____

Ծննդոց 1.26 համարը շարադրում է Աստծո մտադրությունների էությունը: Նա մարդուն ստեղծում է Իր պատկերով, հետո պատվիրում է նրան ինչ-որ բան անել: Ըստ ամենայնի՝ Աստծո *պատկերով* արարումն անհրաժեշտ էր որոշակի նպատակի համար, տվյալ դեպքում՝ Աստծո մնացած արարածներին «իշխելու» համար: Այդ պատճառով «Աստծո պատկերը» ցույց է տալիս ֆիզիկական, մտավոր, սոցիալական և հոգևոր պարգևները, որոնք անհրաժեշտ էին, որպեսզի մարդկությունը կարողանար կատարել Աստծո առաջադրած նպատակը: Ինչ էլ որ ենթադրվի մնացյալ արարածներին «իշխել» ասելով, դա, անկասկած, նշանակում է հարգանք, հոգատարություն և լավ կառավարում: Հնարավոր է, որ մարդկությունը պետք է հարահոս փոխազդեցության մեջ լիներ «ստորակարգ» արարածների հետ՝ արտացոլելով Աստծո փոխազդեցությունը իրենց՝ մարդկանց հետ: Աստծո պատկերով ստեղծումը

նաև ցույց է տալիս, որ մարդիկ պետք է Աստծուն ներկայացնեին այս աշխարհին: Ինչպիսի՞ պատասխանատվություն:

Կարդացե՛ք Մարկոս 12.13-17-ը: Այս համարներն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ, թե ինչ է նշանակում ստեղծված լինել Աստծո պատկերով: _____

_____

_____

Փաստորեն, Հիսուսն ասում է. «Փողը տվեք կայսերը, չէ՞ որ դրանց վրա պատկերված է նրա կերպարը, այդ պատճառով դրանք նրան են պատկանում: Բայց ինքներդ ձեզ հանձնեցե՛ք Աստծուն, քանի որ ձեզանում արտացոլված է Նրա պատկերը, և դուք պատկանում եք Նրան» (Միլիարդ Էրիկսոն, *Քրիստոնեական աստվածաբանություն* (Mich.: Baker Book House, 1998), 515):

Դա ինչպե՞ս է արտահայտվում գործնական կյանքում: Մենք Աստծո պատկերն արտացոլում ենք Նրա հանդեպ սիրո, նվիրման և հավատարմության, ինչպես նաև այլ մարդկանց հետ փոխհարաբերությունների մեջ: Եվս մեկ անգամ ընդգծենք փաստը, որ մենք ստեղծվել ենք Աստծո պատկերով, պետք է դրսևորվի, բացի ամեն մնացյալից, նաև մեր գործողությունների մեջ:

Երեքշաբթի ***հոկտեմբերի 16***

Աստծո պատկերը, մաս 2

Այն փաստը, որ մարդն ստեղծվել է Աստծո պատկերով, նաև նշանակում է, որ նա ստեղծվել է *փոխհարաբերությունների* համար: Ինչպիսի՞ն են այդ փոխհարաբերությունները, և ինչպե՞ս մենք պետք է պահպանենք դրանք:

Կարդացե՛ք Ծննդոց 2.19,20-ը: Դա մեզ ի՞նչ է ասում աշխարհի հետ մարդու փոխհարաբերությունների մասին: _____

_____

_____

Ուշադրություն դարձրեք, թե ինչպիսի անկախություն և ազատություն է պարգևված Ադամին: Նա պետք է անուններ տար Աստծո ստեղծած արարածներին: Աստված Ինքը անուններ չի դնում, այդ աշխատանքը Նա վստահում է Ադամին: Տեքստը ցույց է տալիս, որ Աստված պատրաստ էր ընդունել ցանկացած անուն, որն Ադամը կտար արարածներին:

Կարդացե՛ք Ծննդոց 2.20-25-ը: Այդ համարներն ինչպե՞ս են ավե-

լի լիարժեք բացահայտում հարաբերությունների կարևորությունը նրանց կյանքում, ովքեր ստեղծվել էին Աստծո պատկերով: ___

_____

_____

Այս տեքստերի իմաստի և նշանակության մասին բազմաթիվ մեկնություններ են գրվել: Բացի ամեն մնացյալից, այստեղ ներկայացված է Ադամի ու Եվայի փոխհարաբերությունների առանձնահատուկ մտերմությունը: Ադամն ստեղծվել էր հողից, իսկ Եվան վերցված էր Ադամից (սրանով նա տարբերվում է երկրի վրա ստեղծված ցանկացած այլ էակից): Այդ դեպքում Աստծո պատկերով ստեղծված լինելը ենթադրում է սերտ, նվիրված փոխհարաբերությունների ընդունակ լինելը (որոնք, անկասկած, արտացոլում են բուն աստվածության մեջ առկա փոխհարաբերությունները):

Այժմ վերլուծե՛ք Ծննդոց 1.27-ը՝ Ծննդոց 3.20-ի և Գործք առաքելոց 17.26-ի համեմատությամբ: Առաջին մարդկային զույգի միասնությունն ինչպե՞ս է տարածվում ողջ մարդկության վրա: Ինչի՞ մասին պետք է վկայի մարդկության այդ ամբողջականությունը՝ այնպիսի հարցերի համատեքստում, ինչպես ռասիզմը, շովինիզմը, կաստայականությունը և այլն: _____

_____

_____

Չորեքշաբթի ***հոկտեմբերի 17***

Աղավաղված պատկերը

Մեղանչումը մեծ դժվարություն է ներկայացնում նրանց համար, ովքեր արարման մասին աստվածաշնչյան պատումի մեջ տեսնում են էվոլյուցիան: Համաձայն Աստվածաշնչի՝ աշխարհը և մարդը կատարյալ են ստեղծվել: Տառապանքներն ու մահն աշխարհ են մտել մեղքի պատճառով: Այդ ճշմարտությունը հակասում է էվոլյուցիայի հիմնական հիմնադրույթին, որը պնդում է, թե տառապանքները և մահը բուն արարման անխզելի մասն են:

Պատկերացրե՛ք, թե ինչ հնարավոր կլիներ ասել Աստծո բնավորության մասին, եթե Նա մեզ ստեղծեր էվոլյուցիայի տեսության տրամաբանությամբ: Դրա որոշ հետևորդներ համարում են, որ բռնությունը, տառապանքները և մահն Աստծո կողմից մարդու արարման մասն են եղել: Աստված օգտագործում է բռնությունը, եսամոլությունը և թույլերի

նկատմամբ ուժեղների իշխանությունը՝ ստեղծելու բարոյապես անթերի և անշահախնդիր էակ, որը հանկարծ սկսում է բռնություն, եսամոլություն և թույլերի հանդեպ ուժեղների իշխանություն դրսևորել, մի վիճակ, որից նրան անհրաժեշտ է փրկագնել, կամ էլ նա ստիպված կլինի արժանի պատիժ կրել: Խորհե՛ք նաև այն մասին, թե էվոլյուցիան ինչ լույսի ներքո է ներկայացնում փրկության ծրագիրը: Մարդկանց պատկերացումների համաձայն, ովքեր էվոլյուցիան կապում են արարման հետ, Տերը մարմնանում է զարգացած մարդանման կապկի մեջ, որն ստեղծվել է սպանությունների արատավոր և նրա համար ցավագին գործընթացում (բնական ընտրություն), և այդ ամենը՝ որպեսզի վերացնի՞ մահը՝ «վերջին թշնամուն» (Ա Կորնթացիս 15.26): Բայց ինչպե՞ս մահը կարող է «թշնամի» լինել, եթե այն մարդու արարման՝ Աստծո կողմից «ընտրված» միջոցն էր: Տերը, հավանաբար, ստիպված էր բազմաթիվ «ուղիղ քայլողների» (*homo erectus*)՝ հեյդելբերգյան մարդկանց և նեանդերտալցիների զոհաբերել, որպեսզի ի վերջո ձևավորվեր մի էակ, ով համապատասխանում է Նրա սեփական պատկերին՝ բանական մարդուն (*homo sapiens*): Այսպիսով, ստացվում է, որ Հիսուսը գալիս է մարդկությանը փրկելու մի գործընթացից, որի շնորհիվ Աստված ստեղծե՞լ է այդ մարդկությունը: Այդ գաղափարն ինքնին անիմաստ է և աստվածաշնչյան հիմք չունի:

Կարդացե՛ք Հռոմեացիս 5.12-19-ը և Կողոսացիս 3.5-10-ը: Այդ համարներն ինչպե՞ս են օգնում մեզ տեսնել մեղքի ազդեցությունը մարդու վրա: Այդ համապատկերի մեջ ինչպե՞ս է երևում մեծ պայքարը: Տե՛ս Ա Հովհաննես 3.8: _____

_____

_____

Մեղքը շոշափեց մարդկային կյանքի բոլոր տեսանկյունները և անգամ՝ բուն երկիրը: Էլեն Ուայթը խոսում էր մեր աշխարհի եռակի անեծքի մասին. առաջինը եկել է Ադամի անկմամբ, երկրորդը՝ Կայենի կողմից Աբելի սպանության արդյունքում, իսկ երրորդը երկրին վրա հասավ ջրհեղեղի ժամանակ: Աստվածաբանները խոսում են նաև «կատարյալ բարոյական քայքայման» մասին, իսկ դա նշանակում է, որ մարդու կյանքի և անձի բոլոր տեսանկյունները վնասվել են մեղքից: Նայելով աշխարհին և անգամ ինքներս մեզ՝ դժվար է չնկատել դա, այնպես չէ՞:

Ոմանք համարում են, որ բռնությունը, տառապանքները և մահն Աստծո կողմից մարդու արարման գործընթացի մասին էին: Ուրիշները հավատում են, որ բռնությունը, տառապանքները և մահը միջոցներ են, որոնց դիմում է սատանան, որպեսզի կործանի Աստծո ստեղծած մարդ-

կությունը: Խորհե՛ք այն մասին, թե Աստծո բնավորությունն ինչպես է ներկայացված այս հակասական հայացքներում:

Հինգշաբթի ***հոկտեմբերի 18***

Վերականգնում

Չնայած մեղքի խորը և համընդգրկուն ազդեցությանը մեր կյանքի վրա՝ մեր վիճակն, այնուամենայնիվ, չի կարելի անդառնալի անվանել: Աստված հայտնում է մեզանում Աստծո պատկերի նորոգման և վերականգնման մասին՝ գոնե մինչև որոշակի աստիճան:

Ուշադիր ուսումնասիրե՛ք հետևյալ համարները. Հռոմեացիս 8.29, Բ Կորնթացիս 3.18, Եփեսացիս 4.23,24: Ի՞նչ հույս են դրանք պարգևում: _____

_____

Աստվածաշունչը պնդում է, որ մեր մեջ կարող է վերստեղծվել Աստծո պատկերը: Մարդու մեջ Աստծո պատկերի վերականգնումն ուղեկցվում է և մեր փոխհարաբերությունների և մեզ վրա մեղքի բացասական գործողության անկմամբ: Սակայն այդ վերականգնումը մեր ձեռքբերումների արդյունքը չէ: Աստվածաշունչը մատնանշում է Քրիստոսին՝ որպես մարդու նորոգման հույսի աղբյուրի: Ինչ փոփոխություններ էլ տեղի ունենան մեր կյանքում, փրկության հույսը միշտ պետք է հիմնվի այն բանի վրա, ինչ Քրիստոսը կատարել է մեզ համար: Մենք պետք է հասկանանք, որ փրկության պարգևը հնարավոր է դարձել ոչ թե մեր, այլ Նրա արդարության շնորհիվ:

Բ Կորնթացիս 5.17 տեքստն ինչպե՞ս է շոշափում Աստծո պատկերով մարդու վերստեղծման թեման: Եթե մարդը նոր արարած է դառնում, արդյո՞ք դա նշանակում է, որ նա արդեն անմատչելի է մեղքի ազդեցության համար: Ի՞նչ է վկայում ձեր անձնական փորձառությունը:_____

_____

_____

Սուրբ գիրքը հայտնում է, որ հոգևոր նորոգումը զգոնություն է պահանջում հոգևոր պայքարում: Դա պատերազմ է մարմնի և հոգու միջև (Գաղատացիս 5.16,17): Մարդիկ, ուն ներսում տեղի է ունենում Աստծո պատկերի վերականգնում, հասկանում են այդ պայքարի իրական լինելը և Տիրոջ զորությամբ դիմակայում են թշնամուն (Եփեսացիս 6.10-13): Աստծո պատկերով վերստեղծված լինելու որոշումը ենթադրում է

մեծ պայքարի մեջ Նրա կողմում լինելու անհրաժեշտությունը: Խոսելով մարդկանց մասին, ովքեր զգում են Քրիստոսի նորոգիչ զորությունը, Էլեն Ուայթը նշում է. «Բայց քրիստոնյան չպետք է հանգստանա՝ բավարարվելով նրանով, ինչ արվել է իր համար:

Նա, ով հաստատապես որոշել է մտնել հոգևոր արքայություն, կհայտնաբերի, որ իր դեմ համախմբվել են չվերածնված բնության բոլոր ուժերն ու կրքերը, որոնց աջակցում է խավարի իշխանը: Նա ամեն օր պետք է կրկին իրեն նվիրաբերի Աստծուն՝ պայքարելով չարի դեմ: Հին սովորությունները, ժառանգված արատները ձգտելու են տիրել նրա սրտին, բայց նա պետք է արթուն լինի և հսկի՝ հաղթանակ տանելով Քրիստոսի զորությամբ» (Է. Ուայթ, գործք առաքելոց, 476, 477):

Ուրբաթ ***հոկտեմբերի 19***

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «Նահապետներ և մարգարեներ» գրքից կարդացե՛ք «Արարումը» գլուխը, 44-51:

«Սկզբում մարդն արարվեց Աստծո պատկերով: Նա կատարյալ ներդաշնակության մեջ էր բնության և Աստծո օրենքի հետ, արդարության սկզբունքները դրոշմված էին նրա սրտում: Բայց մեղքը նրան բաժանեց Արարչից: Եվ մարդը դադարեց իր մեջ արտացոլել աստվածային կերպարը: Նրա սիրտը պատերազմ հայտարարեց Աստծո օրենքի սկզբունքներին: «Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է. որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում, և չի էլ կարող» (Հռոմեացիս 8.7): Բայց «Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդին տվեց», որպեսզի մարդուն հաշտեցնի Աստծո հետ: Քրիստոսի արժանիքների միջոցով մարդը հնարավորություն ստացավ վերականգնել ներդաշնակությունն իր Արարչի հետ: Նրա սիրտը պետք է նորոգվեր աստվածային շնորհով, նա պետք է ընդուներ նոր, ի վերուստ բխող կյանքը: Այդ փոփոխությունն էլ հենց երկրորդ ծնունդն է, առանց որի, ասում է Հիսուսը, «մարդը չի կարող տեսնել Աստծո արքայությունը»» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 467): «Կրթության իրական նպատակը մարդու հոգում Աստծո պատկերի վերականգնումն է: Սկզբում Աստված ստեղծեց մարդուն Իր նմանությամբ: Նա նրան օժտեց ազնիվ հատկանիշներով: Մարդն ուներ հավասարակշռված միտք, և նրա բոլոր ընդունակությունները ներդաշնակ էին: Բայց մեղանչումն ու դրա հետևանքները խեղաթյուրեցին այդ հատկանիշները: Մեղքը մարդու մեջ աղավաղեց և գրեթե

ոչնչացրեց Աստծո պատկերը: Որպեսզի այն կրկին վերականգնվի, մտահղացվեց փրկության ծրագիրը և մարդուն տրվեց փորձություններով լի կյանք» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 595):

Հարցեր քննարկման համար

1. Սատանան ինչպե՞ս էր օգտագործում էվոլյուցիայի տեսությունը՝ խորտակելու համար Աստվածաշնչի հանդեպ հավատը: Մեծ պայքարում ի՞նչ տեղ է զբաղեցնում արարման և էվոլյուցիայի գաղափարների հակադրությունը:
2. Կարդացե՛ք Նոր կտակարանի բոլոր տեքստերը, որտեղ խոսվում է Ադամի մասին: Դրանցում որքանո՞վ է անկիայտորեն ներկայացված այն փաստը, որ Նոր կտակարանի բոլոր հեղինակները Ադամին համարում էին իրական անձնավորություն: Այդ տեսակետն ինչո՞ւ է բացառիկորեն կարևոր այն իրավիճակը հասկանալու համար, որում մենք գտնվում ենք, և հույսը հասկանալու համար, որ մենք ունենք Հիսուսում:
3. Մտորե՛ք մեր մեջ Աստծո պատկերի վերականգնման գաղափարի մասին: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այդ գաղափարը՝ հատկապես հաշվի առնելով այն, որ մենք ենթակա ենք ապականման, մահվան և հիվանդությունների:
4. Խորհե՛ք էվոլյուցիայի տեսության և դրա հետևորդների մասին: Որքանո՞վ զգույշ պետք է լինել ինչ-որ բան որպես «փաստ» ընդունելիս միայն այն պատճառով, որ այդպես է պնդում գիտությունը:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱԿ ԼՈՒԾՈՒՄՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 2.24, 25, Երեմիա 17.9, Տիտոս 1.1,2, Հռոմեացիս 3.19-24, Գործք առաքելոց 2.37, Ղուկաս 7.47, Եփեսացիս 2.1-5:

Հիշելու համարը.

«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդին տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես 3.16):

Հիմնական միտքը.

Մեղքի խնդիրը շատ մեծ է, բայց մենք պետք է երախտապարտ լինենք Աստծուն, որ Նա գտել է այդ խնդրի մեծագույն լուծումը:

Եդեմի այգում Ադամի և Եվայի մեղանչումը երկրին բերեց բարու և չարի միջև մեծ պայքարը: Այդ պայքարում Աստված ջանում է դադարեցնել և վերջնականապես վերացնել մեղքի վտանգավոր ազդեցությունը ողջ արարչագործության վրա՝ ոչ միայն երկրի, այլ նաև՝ ողջ տիեզերքի վրա: Մեղքի կործանարար ազդեցությունից արարչագործության փրկության ուղղությամբ Աստծո գործողությունները կազմում են փրկության մասին դավանաբանությունը: Եվ թեև այդ ճակատամարտը, համենայն դեպս, այն, ինչ վերաբերում է փրկությանը, իսկապես ծավալվում է և արդեն իր ավարտին է մոտենում երկրի վրա, մեծ պայքարի հիմնական գաղափարը մեզ բացահայտում է խնդիրներ, որոնք շոշափում են ողջ տիեզերքը: Փրկության մասին ուսմունքը գլխավորապես վերաբերում է Աստծուն և մեր փրկությանն ուղղված Նրա գործողություններին, սակայն այդ գործում մարդկությանը նույնպես որոշակի դեր է հատկացված: Աստված Իր կողմից անհավանականն արեց մարդկանց փրկության համար, իսկ մեր մասնակցությունը Աստծո գործողություններին մեր անձնական արձագանքն է: Այդ արձագանքից է կախված մարդու հավիտենական ճակատագիրը:

Խնդրի ընդգրկումը

Քանի որ փրկությունը մեղքի առաջացրած խնդրի Աստծո լուծումն է, մեղքի հասցրած վնասի ծավալը որոշում է նաև լուծման մասշտաբները:

Ստորև բերված համարներն ի՞նչ են հայտնում մեղքի խնդրի մասշտաբների մասին: Դուք դա զգացե՞լ եք անձնական փորձով: Այդ համարների կատարումը նկատե՞լ եք այլ մարդկանց կյանքում:

Հովհաննես 2.24,25 _____

Սաղմոս 58.2 _____

Երեմիա 17.9 _____

Հռոմեացիս 5.12 _____

Հակոբոս 5.1,2 _____

Եսայիա 5.23 _____

Բ Թեսաղոնիկեցիս 2.10 _____

Մեզանից ո՞վ սեփական փորձով չի զգացել մեղքի հիմնախնդրի ողջ ծանրությունը: Մեր կյանքի յուրաքանչյուր պահը մենք ապրում ենք մեղքի և դրա հետևանքների իրական լինելու գիտակցմամբ: Երկրի վրա մարդկային գոյության յուրաքանչյուր տեսանկյուն զգում է մեղքի ճնշումը: Մեղքը վարակել է ամեն բան՝ սկսած մեր սրտի գաղտնարաններից և վերջացրած գլոբալ հիմնախնդիրներով: Իրավիճակն այնքան վատ է, որ Աստծո լուծումից բացի, այլ ելք չկա: Որքա՜ն շնորհակալ մենք պետք է լինենք այդ ելքի համար: Այն կոչվում է «փրկության ծրագիր», և նրա նպատակը մեղքի հիմնախնդրի լուծումն է:

Երկուշաբթի *հոկտեմբերի 22*

Աստծո ծրագիրը, մաս 1

Մեղքի հետևանքները չսպասեցին «հարմար ժամանակի»: Դրանք ի հայտ եկան անմիջապես և անհապաղ միջամտություն պահանջեցին: Բայց Աստված ժամանակին որոշակի ծրագիր էր կազմել դեպքի համար, եթե մեղքը ի հայտ գար: Էլեն Ուայթը շատ պարզորոշ է խոսում այդ մասին. «Հենց որ ի հայտ եկավ մեղքը, հայտնվեց Փրկիչը: Քրիստոսը գիտեր, որ Ինքն ստիպված կլինի տառապել, բայց, չնայած դրան, դարձավ մարդու Փոխարինողը: Հենց որ Ադամը մեղանչեց, Աստծո Որդին Իրեն

ներկայացրեց որպես մարդկային ցեղի Երաշխավոր: Նա զորություն ուներ կանխել մեղավորների համար նախատեսված ճակատագիրը, երբ մահացավ Գողգոթայի խաչի վրա» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություն, Է. Ուայթի մեկնությունները, հտ. 1, 1084):

Բերված տեքստերն ի՞նչ են հայտնում մեզ փրկության ծրագրի և այն մասին, թե երբ է նա ընդունվել: Ի՞նչ մեծ հույս և խոստում մենք կարող ենք քաղել այդ տեքստերից:

Տիտոս 1.1,2 _____

Եփեսացիս 1.3-5 _____

Բ Թեսաղոնիկեցիս 2.13,14 _____

Հայտնություն 13.8 _____

Խորհեցե՛ք կարդացած տեքստերի մասին: Ինչի՞ մասին են դրանք խոսում: Ըստ էության, Աստված *հավիտենությունից ի վեր* հոգ էր տարել մեղքի հիմնախնդրի լուծման մասին: Թեև Աստված չէր կանխորոշել մեղքի ի հայտ գալը, Նա գիտեր, որ մեղքը կարող է ի հայտ գալ, այդ պատճառով հավետանությունից ի վեր նախատեսել էր այդ հիմնախնդրի լուծումը:

Աստվածաշնչյան այդպիսի կանխորոշումն արմատապես տարբերվում է ընդհանուր ըմբռնմամբ «կանխորոշումից»: Դա Աստծո ծրագիրն էր հավիտենությունից ի վեր, և Նրա կանխորոշումն ամփոփվում է նրանում, որ բոլոր մարդիկ կարողանային փրկություն ստանալ Հիսուսում: Փաստը, որ ոմանք հերքում են փրկությունը, չի վերացնում դրա զորությունը և մասշտաբայնությունը, այլ միայն ուժեղացնում է հավիտենական կործանման անիմաստությունը. չէ՞ որ այդքան շատ բան է արվել փրկության համար:

Խորհե՛ք այս զարմանալի ճշմարտության մասին. հատկապես ձեզ փրկելու Աստծո ծրագիրն ընդունվել է հավիտենից ի վեր: Մտորե՛ք, թե ինչ է դա նշանակում: Այդ ճշմարտությունն ինչպե՞ս պետք է ազդի ձեր կյանքի վրա:

Երեքշաբթի ***հոկտեմբերի 23***

Աստծո ծրագիրը, մաս 2

Փրկության պատմության մեջ ամեն ինչ՝ և՛ աստվածաշնչյան առաջին խոստումը (Ծննդոց 3.15), և՛ զոհաբերությունների վաղ համակարգը (Ծննդոց 4.4), և՛ Աբրահամի հետ ուխտը (Ծննդոց 12.1-3), և՛ սրբարանում ծառայությունը հին Իսրայելի ժամանակներում (Ելից 25.8)՝ ամեն բան

մատնացույց էր անում Հիսուս Քրիստոսին և իր գագաթնակետին հասավ Նրա կյանքի, մահվան, հարության և երկնային ծառայության մեջ: Հենց դրանում էր բովանդակվում մեղքի հիմնախնդրի լուծման Աստծո մեծ ծրագիրը:

Մեղքի հիմնախնդրի լրջությունը կարելի է լավագույնս հասկանալ՝ նայելով դրա լուծմանը՝ խաչին: Խաչը ցույց է տալիս մեղքի հիմնախնդիրը սեփական ուժերով լուծելու մարդու ողջ անընդունակությունը: Արտակարգ իրավիճակն արտակարգ լուծում է պահանջում, և Քրիստոսի՝ *մեր մեղքերն Իր վրա առած Աստծո* մահը աներևակայելի արտակարգ միջոցառում է:

Քրիստոսի անձնազոհ մահը Սուրբ գրքում ներկայացված է որպես փրկագնում մեղքի համար, այսինքն՝ միջոց, որի շնորհիվ մեղքի հիմնախնդիրն իր բոլոր դրսևորումներով լիովին լուծված է: Քրիստոսի մահն ինչպե՞ս կարող է մարդուն փրկություն պարգևել: Այդ հարցը դիտարկե՛ք առաջարկված տեսակետներից.

Արդարացում/հաշտեցում (ուղիղ կանգնել Աստծո առջև). տե՛ս Ղուկաս 18.9-14, Եսայիա 53.4-7, Հռոմեացիս 3.19-24,28, Զաքարիա 3.1-4: _____

_____

Սրբագործում/վերականգնում (ճիշտ կյանք Աստծո առջև). տե՛ս Ա Կորնթացիս 6.8-11, Հռոմեացիս 6.1-8: _____

_____

Փառաբանում (վստահություն հավիտենական կյանքի համար վերականգնվելու մեջ). տե՛ս Հովհաննես 5.24,25, Ա Հովհաննես 5.9-13, Ա Թեսաղոնիկեցիս 4.16,17: _____

_____

Խորհե՛ք այսպիսի մի փաստի մասին. մեղքն այնքան սոսկալի է, որ դրա հետևանքներից, մահվանից մեր փրկության համար խաչ պահանջվեց: Գողգոթայի խաչի մասին մտքերն ինչպե՞ս պետք է մեզ հետ պահեն մեղքից:

Չորեքշաբթի ***հոկտեմբերի 24***

Փրկության փորձառությունը, մաս 1

Մեղավորն արդարանում և Աստծո հետ հաշտվում է օբյեկտիվ հիմքով՝ Քրիստոսի քավչարար մահվան հիման վրա, որը բերվել է բոլորի համար (Հռոմեացիս 5.6-10): Սակայն մարդու արդարացման և

Աստծո հետ Քրիստոսի մահվան միջոցով հաշտեցման համար Աստծո ծրագիրը պետք է իրողություն դառնա քրիստոնյայի փորձառության մեջ: Բավարար չէ արդարացման մասին տեսական գիտելիքներ ունենալը: Մենք պետք է վերապրենք, թե այն ինչ է նշանակում մեզ համար:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 2.36-38, 3.19-ը: Այս տեքստերը հայտնում են, որ փրկության փորձառությունը մեղավորի կյանքում սկսվում է ապաշխարությունից: Ինչպե՞ս է ապաշխարությունը (ըստ էության՝ մեղքի համար խորը զղջման զգացումը) օգնում մեզ արդարացման *փորձառությունը* կապել Քրիստոսի մահվան հետ: _____

_____

_____

Խորհե՛ք այս գաղափարի շուրջ. «Ոչ մի բան այնքան ուժգին չի դիպչում մեր սրտին, որքան Քրիստոսի ներող սիրո գիտակցումը: Երբ մենք մտորում ենք աստվածային այդ անըմբռնելի սիրո մասին, որը հայտնվել է խաչի վրա, մեզ տիրում է ապաշխարելու ցանկությունը: Աստծո քաղցրությունը մեզ դեպի ապաշխարություն է տանում (տե՛ս Հռոմեացիս 2.4): (Սկզբում էր Բանը… Զառկսկի, «Կյանքի աղբյուր», 202, 162):

Կարդացե՛ք Հռոմեացիս 3.23-25-ը և Եփեսացիս 2.8-ը: Ո՞րն է հավատի դերը արդարացման հարցում: _____

_____

Աստվածաշնչում ասված է, որ հավատը ծագում է լսելուց, իսկ լսելը՝ Աստծո խոսքից (Հռոմեացիս 10.17): Մենք նաև տեսել ենք, որ Քրիստոսի սիրո մասին մտորումները մարդուն դրդում են ապաշխարության: Այսպիսով, ապաշխարությունը արտոնյալ փոքրամասնության առավելությունը չէ: Նկատի ունենալով այս փաստերը՝ հնարավոր չէ թերագնահատել Աստծո խոսքի ուսումնասիրության և արդարացման փորձառության հիման վրա դրա մասին մտորելու կարևորությունը:

Աստծո ողորմածությունը տանում է ապաշխարության և արդարացման, այդ պատճառով, զղջալու և արդարացման փորձառություն վերապրելու համար անհրաժեշտ է վստահել Աստծուն և կատարելապես ապավինել Նրա արժանիքներին: Փրկությունն իսկապես Աստծո ձրի պարգև է, քանի որ մենք փրկվում ենք բացառապես շնորհով հավատի միջոցով (տե՛ս Եփեսացիս 2.8-10):

Դուք ինչպե՞ս կարող եք իսկապես ձեր սիրտն ու միտքը լցնել Աստծո բարությամբ, հատկապես, մտորելով այն մասին, թե Տերն ինչ է կատարել ձեզ համար և ինչից է փրկել:

Փրկության փորձառությունը, մաս 2

Արդարացման փորձառությունը հավատացյալ մարդուն լցնում է հոգևոր իրողություններով, որոնք փոխում են նրա կյանքը: Արդարացմամբ մեղավորը ներում է գտնում (Ղուկաս 7.47, Եփեսացիս 1.7, Հռոմեացիս 4.7), ազատություն՝ մեղքի մեղադրանքներից, ստանում է արդարության պարգևը (Հռոմեացիս 5.16,18, Հռոմեացիս 8.1) և նոր կյանք (Եփեսացիս 2.1-5, Բ Կորնթացիս 5.17):

Այդ փորձառության հիմքում ընկած է վստահությունը, որ, անկախ մեր անցյալից, անկախ մեր մեղքերից, անկախ այն բանից, թե որքանով ենք մենք սխալվել և սայթաքել, մենք կարող ենք Աստծո առջև կանգնել ներված և մաքրված:

Մտորե՛ք, թե ինչ է նշանակում սա: Քրիստոսի մահը ծածկում է բոլոր մեղքերը, նույնիսկ վատթարագույնները: Ինչպես էլ ձեր խիղճը դատապարտի ձեզ (Ա Հովհաննես 3.20), երբ դուք ձեզ նվիրում եք Քրիստոսին և հավատով Նրա կատարյալ կյանքն ընդունում եք ձեր սեփական «դաշտանի շորի» փոխարեն (Եսայիա 64.6), դուք հագնում եք Քրիստոսի արդարությունը: Ձեզ է վերագրվում Նրա կատարյալ կյանքը, ասես դուք իսկապես ապրել եք այն: Մեղավորներին պատմե՛ք այդ պարգևի մասին:

Հարց է ծագում՝ կարո՞ղ է արդյոք այդպիսի բան տեղի ունենալ մարդու հետ և միաժամանակ արմատապես չփոխել նրան: Այդպիսի փոփոխությունն անվանում են «վերստին ծնունդ», և այն փրկության փորձառության անքակտելի մասն է:

Կարդացե՛ք վերը բերված պարբերություններում նշված տեքստերը և վերլուծե՛ք, թե դրանք ինչ են ասում արդարացման մասին: Արդարացումն ինչպե՞ս է դրսևորվում մեր կյանքում: _____

_____

_____

Ներման փորձառությունը վերացնում է մեղավորի խոցելիությունն Աստծո ցասման առջև՝ խորտակելով Աստծո և մարդու միջև հաշտության և բարեկամության ճանապարհին եղած ցանկացած պատնեշ: Մեղավորի առջև նոր կյանք է բացվում, արտոնություն՝ Քրիստոսի հետ բարեկամական փոխհարաբերություններ ունենալ Սուրբ Հոգու առաջնորդությամբ և ղեկավարությամբ:

Ապաշխարությունը նախորդում է ներման և արդարացման փորձա-

ռությանը: Այն ուղեկցվում է մեղքերի խոստովանությամբ և մկրտությամբ (Գործք առաքելոց 2.38, Ա Հովհաննես 1.9): Դա օգնում է բացատրել այն փաստը, որ թեև ներումը մատչելի է բոլորին, ամենքը չէ, որ կներվեն:

Դուք կունենայի՞ք որևէ հույս, եթե ձեր կյանքի յուրաքանչյուր ակնթարթում չկարողանայիք հուսալ այն խոստմանը, որ Աստված մեզ ընդունում է ոչ թե մեր գործերի ու ջանքերի շնորհիվ, այլ նրա հիման վրա, ինչ մեզ համար կատարել է Հիսուսը:

Ուրբաթ ***հոկտեմբերի 26***

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «*Դարերի փափագը*» գրքից կարդացե՛ք «Աստված մեզ հետ է» գլուխը, 19-29:

«Մեր փրկագնման ծրագիրը ուշացած, Ադամի անկումից հետո հապճեպորեն կազմված ծրագիր չէր: Այն իրենից ներկայացնում էր «խորհրդի հայտնությունը, որ հավիտենական ժամանակներից լուռ պահված էր» (Հռոմեացիս 16.25): Փրկության ծրագիրը բովանդակում էր սկզբունքներ, որոնց վրա հիմնվում է Աստծո կառավարումը հավիտենից ի վեր… Աստված նախապես չէր սահմանել մեղքի գոյությունը, սակայն Նա կանխատեսել էր այն և հոգ տարել այն մասին, որ այդ սոսկալի իրավիճակը դիմավորի ամեն կերպ նախապատրաստված: Այնքան մեծ էր Նրա սերն աշխարհի հանդեպ, որ Նա համաձայնեց Իր Միածին Որդուն տալ, «որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Է. Ուայթ, Աստծո զարմանալի շնորհը, 23):

Հարցեր քննարկման համար

1. Խորհե՛ք այն մասին, թե որքան սոսկալի է մեղքը, եթե դրա վերացման համար պահանջվեց Իր՝ Արարչի մահը: Գողգոթայի խաչն ի՞նչ է ասում մեզ ինքն իրեն փրկելու մարդու կատարյալ անընդունակության մասին: Մենք կարո՞ղ ենք ինչ-որ բան ավելացնել այն բանին, ինչ արդեն արվել է մեզ համար:
2. Ոմանք հավատում են այսպես կոչված «սուբյեկտիվ փրկագնմանը»՝ պնդելով, որ խաչի վրա տեղի ունեցածը ոչինչ չի փոխել Աստծո հետ մեր փոխհարաբերությունների մեջ: Նրանք համարում են, որ խաչը ազդել է միայն Աստծո հանդեպ մեր փոխհարաբերությունների վրա: Ինչո՞ւ է այդ աստվածաբանությունը սխալ: Այն ի՞նչ է ասում մեղքի

հիմնախնդրի մասին, եթե դրա լուծման համար (այդ աստվածաբանության հետևորդների կարծիքով) պետք եղավ միայն մեր կողմից «կարգավորումը»:

3. Հնարավո՞ր է ունենալ անհրաժեշտ գիտելիքներ փրկության մասին և, միևնույն ժամանակ, չվերապրել այդ փորձառությունը: Ուշադրություն դարձրեք է. Ուայթի այս խոսքերին. «Աստծուն նվիրումը պետք է լինի կենդանի և գործնական. ոչ թե պարզապես քննարկվող տեսություն, այլ սկզբունք, որն անցնում է մեր ողջ փորձառության միջով» (Մեր բարձրագույն կոչումը, 243): Մենք ինչպե՞ս ենք վերապրում փրկության փորձառությունը մեր ամենօրյա կյանքում:
4. Խորհե՛ք փրկության դերի մասին մեծ պայքարի համատեքստում: Ինչո՞ւ է սատանան մարդկանց խոչընդոտում ստանալ Հիսուսում փրկությունը: Ի՞նչ միջոցներ է նա օգտագործում մեր դեմ, և ինչպե՞ս մենք կարող ենք մեզ պաշտպանել նրանից:

ԱՃ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եսայիա 35.10, Մարկոս 10.45, Հռոմեացիս 6.12-23, Եփեսացիս 6.12, Կողոսացիս 1.16, Գաղատացիս 4.1-11, Կողոսացիս 2.15:

Հիշելու համարը.

«Իշխանություններին և պետություններին մերկացնելով՝ հայտնապես խայտառակեց և նրանց հաղթանակեց իրենում» (Կողոսացիս 2.15):

Հիմնական միտքը

Խաչի վրա Քրիստոսի հաղթանակը որոշեց քրիստոնյաների ամի մտահորիզոնները:

2005 թվականին Վեհաժողովի 58-րդ նստաշրջանում քվեարկությամբ ընդունված եկեղեցու հիմնարար դավանաբանությունների մեջ ներմուծված լրացումը վերնագրված էր՝ «Աճ Քրիստոսում»: Դավանաբանական այդ կետի վերլուծությունը ի հայտ է բերում որոշ կարևոր բաղադրիչներ՝

1. Հիսուսը հաղթել է սատանային և չարի ուժերին:
2. Քրիստոսի միջոցով հնարավոր դարձավ հաղթանակն այդ ուժերի նկատմամբ, ներառյալ՝ մարդու կյանքում նախկինում տեղ գտած դրանց դրսևորումները:
3. Մարդու փորձառության մեջ գոյություն ունեն այդ հաղթանակն իրագործելու պայմաններ:

Այս հարցերին են նվիրված հաջորդ երեք դասերը: Այս շաբաթ մենք կքննարկենք խաչի վրա Քրիստոսի տարած հաղթանակի բնույթը: Հաղթանակ տանելով ոչ միայն մեղքի, այլև մարդու և Աստծո արարչագործության դեմ գործող ցանկացած այլ ուժի դեմ՝ Քրիստոսը հնարավոր դարձրեց մեր փրկությունը:

Ձգտելով հասկանալ, թե ինչ է մեզ համար կատարել Քրիստոսը, մենք ավելի լավ կնախապատրաստվենք հասկանալու այն փոփոխությունները, որոնք կարող են տեղի ունենալ մեր կյանքում հիմա: Նրա հաղթանակը կարող է մեր հաղթանակը դառնալ, եթե մենք ապավինենք դրան և գիտակցաբար ընդունենք հանուն մեզ կատարած Նրա սխրանքը: Հաղթանակը ոչ ոքի մեքենաբար չի պարգևվի:

Փրկագնումը

Քրիստոնեությունը «փրկագնման կրոն» է, քանի որ Հիսուսի սխրանքի շնորհիվ մարդիկ կարող են փրկագնում ստանալ մեղքի ստրկությունից և փրկվել կործանումից: Այդպիսով, քրիստոնեական կրոնը կարելի է տարբերել «օրենքի կրոնից», որտեղ մարդը փորձում է իր ճակատագիրը փոխել սեփական ջանքերով՝ բարի գործեր կատարելով: Մենք փրկագնման կարիք ունենք, քանի որ, համաձայն Աստվածաշնչի, առանց Քրիստոսի մարդիկ մեղքի ծառաներ են (Հովհաննես 8.34) և պետք է մեռնեն (Հռոմեացիս 6.23): Նրանք իրենք իրենց չեն կարող ազատագրել ո՛չ մեղքի ստրկությունից, ո՛չ էլ մահից: Մեղավորի վիճակն արտաքին միջամտություն է պահանջում, և այդ միջամտությունը ձեռք է բերվել շատ թանկ գնով: Նոր կտակարանի հստակ ուսմունքի համաձայն՝ այդ գինը դարձավ Հիսուսի մահը խաչի վրա:

Բերված համարներն ի՞նչ են ասում մեզ փրկագնման մասին: Եսայիա 35.10, Մարկոս 10.45, Գաղատացիս 4.4,5, Տիտոս 2.14, Եբրայեցիս 9.12, Ա Պետրոս 1.18,19: _____

_____

_____

Նոր կտակարանի տեսակետից Քրիստոսի քավչարար մահը զոհաբերական և փոխարինող մահ է: Հիսուսը մեր տեղը զբաղեցրեց, Իրեն զոհաբերեց հանուն մեզ, Իր վրա կրեց մեղքի մեր պատիժը, որպեսզի մենք կարողանանք ազատագրվել մահից: Թեև ոմանք ժխտում են այդ գաղափարը, քանի որ նրանց դուր չի գալիս այն միտքը, որ ինչ-որ մեկը տառապել է ուրիշ մեկի փոխարեն (հատկապես՝ մեղավորի), այնուամենայնիվ, այն Ավետարանի սիրտն ու հոգին է:

«Երբ Նոր կտակարանը խոսում է փրկագնման մասին… նշանակում է, որ Քրիստոսը վճարել է մեր փրկագինը: Ձեռք բերվածը պետք է համապատասխանի վճարված գնին: Տվյալ դեպքում ցույց է տրվում համարժեքությունը, փոխարինումը» (Leon Morris, *The Apostolic Preaching of the Cross* (Grand Rapids: Wm. B. Eerdman {ublishing Co., 1965), էջ 61):

Խորհե՛ք ձեր կյանքում այն բանի մասին, ինչը դուք ի վիճակի չեք փոխել, ինչը ձեր մեջ առաջացնում է կատարյալ անօգնականության գիտակցում: Ճիշտ այդպես էլ մենք կատարելապես անընդունակ ենք փրկել ինքներս մեզ: Ինչպե՞ս է մեր անօգնականության գիտակցումն

օգնում մեզ ավելի լավ հասկանալ, թե Քրիստոսն ինչ է կատարել մեզ համար խաչի վրա: Ավելին, այդ զարմանալի ճշմարտությունն ինչպե՞ս պետք է ազդի մեր կյանքի վրա:

Երկուշաբթի ***հոկտեմբերի 29***

Ստրուկներն ազատություն են ձեռք բերում

Եթե մենք փրկագնումն ընկալում ենք որպես ազատագրում ստրկությունից, որն օգնություն է պահանջում «դրսից», ապա կարող ենք եզրակացնել, որ մեղավոր մարդկությունն ստրկացված է առավել զորեղ մի ուժի կողմից, քան մարդկայինն է: Ո՞րն է այդ ուժը:

Վերլուծե՛ք Հռոմեացիս 6.12-23 հատվածը: Ուշադրություն դարձրեք, որ 18, 20 և 22 համարներում Պողոսը խոսում է ազատության մասին: Ինչպիսի՞ն է այդ ազատության բնույթը: Այստեղ ինչի՞ մասին է խոսում առաքյալը: _____

_____

_____

Խորհե՛ք այն մասին, ինչ Պողոսն ասել է վերը բերված համարներում, նաև՝ Հռոմեացիս 6.1-11-ում: Պողոսը խոսում է այն մասին, ինչ տեղի է ունենում մկրտության ժամանակ: Այստեղ նա ցույց է տալիս, թե հատկապես ինչը պետք է Քրիստոսի հետ մեռնի մկրտության ժամանակ: Այլ խոսքերով, Պողոսը ցանկանում է, որ իրենք կյանքը Քրիստոսի հետ կապած քրիստոնյաները գործով հայտնեին իրենց *մեղքի զորությունից* ազատած Քրիստոսի գերիշխանությունը:

Պողոսն ընդգծում է. որ անկախ նրանից, թե որքանով է մեր բնությունը փչացել մեղքի ազդեցությունից, Քրիստոսում մենք կարող ենք ազատ լինել դրա ստրկացնող զորությունից: Մեզանից ո՞վ չի եղել այդպիսի ստրկության քայքայիչ հետևանքների վկան: Ո՞վ չի տեսել մեղքի հետևանքով կործանված կյանքեր: Ո՞վ սեփական կյանքում չի պայքարել մեղքի զորության դեմ: Դա, անկասկած, մեծագույն թշնամին է, ում մենք երբևէ բախվել ենք:

Իրավիճակն ավելի է խորացնում նաև այն, որ այդ ստրկությունը չի գալիս բացառապես դրսից, այն ավելի շուտ բխում է հենց մեզանից: Ինչպե՞ս մենք ազատվենք ստրկությունից, ստրկացումից, որը բնակվում է մեր մեջ, մեր իսկ էության մեջ:

Պատասխանը, ինչպես մենք արդեն տեսանք վերը բերված համարներում, գտնվում է բացառապես Հիսուսի զորության մեջ, ով հաղթանակ

է տարել մեզ համար և մեզ է առաջարկում այդ զորությունը: Քրիստոսի միջոցով ոչ միայն ներվում են մեր մեղքերը, այլև մենք մեռնում ենք դրանց համար, ազատագրվում ենք դրանցից: Դրանք արդեն այլևս չպետք է իշխեն մեզ: Սրանք զարմանահրաշ զորեղ խոստումներ են, որոնց կարող է դիմել Քրիստոսի անունը դավանող յուրաքանչյուրը:

Դուք սեփական փորձով զգացե՞լ եք մեղքի դաժան, ստրկացնող զորությունը: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել է՛լ ավելի ամուր կառչել Հիսուսում մեզ առաջարկված ազատության խոստումներին:

Երեքշաբթի *հոկտեմբերի 30*

Իշխանություններ և զորություններ, մաս 1

Համաձայն Աստվածաշնչի՝ աշխարհը գտնվում է չար ուժերի տիրապետության ներքո, որոնք ձգտում են վերահսկել և վերջնականապես ոչնչացնել մեզ: Մեծ պայքարը ոչ այլ ինչ է, քան այդ զորություններին Աստծո հակազդեցության արդյունքը: Բարի լուրն այն է, որ խաչի վրա Փրկչի սխրանքի շնորհիվ չար ուժերի դեմ հաղթանակը երաշխավորված է, թեև կատաղի պայքարը շարունակվում է: Դա համատիեզերական դրամատիկ, դաժան հակամարտություն է, բայց հաղթանակը պատկանում է Աստծուն, և մենք կարող ենք հավատով մասնակցել նրան:

Ուսումնասիրե՛ք հետևյալ տեքստերը՝ Ա Հովհաննես 3.8, 5.19, Հովհաննես 12.31, 16.11, Եփեսացիս 6.12, Կողոսացիս 1.16, 2.15, Հռոմեացիս 8.38,39: Դրանք մեզ ի՞նչ են ասում այդ տիեզերական պայքարի իրական լինելու մասին: Մեզ ի՞նչ մեծ հույս և խոստում են պարգևում այդ տեքստերը: _____

_____

_____

XXI դարի շատ մարդիկ իրենց աշխարհայացքը ձևավորելիս հիմնվում են միայն գիտական տեսակետի վրա: Դա նշանակում է, որ ամեն բան ուսումնասիրվում է գլխավորապես բնապաշտական տեսանկյունից, որը շատ մարդիկ համարում են միակ ճիշտը: Նրանց համար չար ուժերով լի և դիվական զորքերի կողմից կառավարվող աշխարհն իրենից ներկայացնում է սնահավատության և տգիտության ժամանակների վերապրուկ: Ի տարբերություն դրան՝ Աստվածաշունչը ներկայացնում է թշնամական զորքին, որի մեջ մտնում են դիվական իշխանությունները և զորությունները՝ որպես մեր աշխարհի իրականու-

թյուն: Թեև աստվածաշնչյան տեսանկյունը ներառում է բնապաշտական և գիտական հայեցակարգերը, նա իրականության իր ողջ ըմբռնումը չի կառուցում դրանց հիմքի վրա: Աստվածաշնչյան աշխարհայացքը բավականաչափ ընդարձակ է՝ ընդգրկելու ինչպես բնականը, այնպես էլ՝ գերբնականը:

Օրինակ, Հռոմեացիս 8.38-ում «իշխանություններ» բառը (հունարեն *«արխայ»*) կարող է վերաբերել ինչպես քաղաքացիական կառավարիչներին, այնպես էլ գերբնական ուժերին, որոնք ջանում են իրենց չար իշխանությունը տարածել մարդու վրա: Եփեսացիս 6.12-ում «այս դարի խավարի աշխարհակալների» բառացի դարձվածքը կարելի է թարգմանել նաև որպես «այս խավարի համաշխարհային իշխանների»:

«Պողոսը պարզորոշ խոսում է չար ոգիների մասին, որոնք որոշակի չափով տիրում են աշխարհին: Համեմատե՛ք «այս աշխարհի իշխանը» դարձվածքի հետ, որը Հովաննես 12.31, 14.30, 16.11-ում նկարագրում է սատանային: Սատանան առասպել չի եղել նաև Հայտնություն գրքի հեղինակի համար» (Հայտնություն 2.10, 12.9,10)» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 6, 1044):

Դուք ձեր կյանքում զգո՞ւմ եք մեծ պայքարի իրական լինելը: Այնուամենայնիվ, ինչպե՞ս կարելի է պարտություն կրել՝ չնայած հանուն մեզ Քրիստոսի տարած հաղթանակի:

Չորեքշաբթի ***հոկտեմբերի 31***

Իշխանություններ և զորություններ, մաս 2

Ինչպես մենք արդեն ասել ենք, բառը, որը թարգմանված է որպես «իշխանություն», կարող է վերաբերել և՛ աշխարհիկ կառավարիչներին, և գերբնական ուժերին, որոնք ջանում են վերահսկել մարդու կյանքը: Հռոմեացիս 8.38-ում օգտագործված մեկ այլ հին հունարեն բառ՝ *դյունամիս*, տառացիորեն նշանակում է ուժ, զորություն, հզորություն, հրաշք: Դրանք կարող են լինել ինչպես երկրային (տե՛ս Եբրայեցիս 11.34, Հայտնություն 3.8), այնպես էլ՝ գերբնական «ուժեր» (տե՛ս Մարկոս 12.24, Ղուկաս 4.36, Գործք առաքելոց 1.8):

Բացի բառացի չար ուժերից, մենք է՞լ ինչից ազատագրվեցինք Հիսուսով: Տե՛ս Կողոսացիս 2.8,14,20, Գաղատացիս 4.1-11, հատկապես՝ 3 և 9 համարները: _____

_____

_____

Նոր կտակարանը, հատկապես՝ «իշխանությունների» մասին Պողոս առաքյալի հայեցակարգը, ըստ ամենայնի, հոգևոր էակներին զուգորդում է զորությունների կամ իշխանությունների հետ, որոնք կառավարում են առանց Քրիստոսի ապրող մարդու կյանքը: Այդ զորությունները կարող են լինել քաղաքական, սոցիալական և անգամ կրոնական: Առաքյալն իր ուղերձներում բազմիցս օգտագործում է նաև *ստոյխեիա* բառը: Այն բառացիորեն նշանակում է «տարրեր», «պարզ նյութեր», «բաղկացուցիչ մաս»: Գաղատացիս 4.3,9-ում այդ բառն, օրինակ, նշանակում է հեթանոսական համակարգը, որից դուրս էին եկել Գաղատիայի քրիստոնյաները: Այն օգտագործվում է նաև հին հուդայական իրավական համակարգի վերաբերյալ, իսկ Կողոսացիս 2.8,20-ում այլաբանորեն վերաբերում է աշխարհիկ փիլիսոփայական սկզբունքներին:

«Եսայիա 24.21-ում «երկրի վրա երկրի թագավորներին» արտահայտությունը ենթադրում է, որ «բարձունքների մեջ բարձունքների զորքերին» խոսքը վերաբերում է սատանային և չար հրեշտակներին: Պողոսը սատանայի մասին խոսում է որպես իշխանի, որն իշխում է օդում (Եփեսացիս 2.2), իսկ չարի անտեսանելի առաջնորդների մասին՝ որպես «այս աշխարհի խավարի» աշխարհակալների, «այն չար հոգիների, որոնք երկնավորների մեջ են» (Եփեսացիս 6.12): Ա Կորնթացիս 15.24, 25-ում Պողոսը ցույց է տալիս, որ նրանք հաղթվել են Քրիստոսից: Եսայիան կանխատեսում է այն ժամանակը, երբ բոլոր չար հրեշտակները և չար մարդիկ պատիժ կկրեն (տե՛ս Մատթեոս 25.41, Բ Պետրոս 2.4,9, Հայտնություն 20.10-15)» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 4, 198,199):

Այսպիսով, Աստվածաշունչը սովորեցնում է, որ կյանքը կառավարում են տարբեր ուժեր՝ ինչպես անձնավորված, այնպես էլ անդեմ: Առանց Քրիստոսի մարդը տրված է նրանց կառավարմանը՝ ինչ ձևով էլ դրանք տեղի ունենան: Ապագայի վախը, կյանքի պահանջները, հասարակությունը, ավանդությունները, գաղափարախոսությունը, ճնշումը՝ ամեն բան կարող է մարդուն Աստծուց հեռացնող ազդեցություն ունենալ: Սակայն Քրիստոսի միջոցով մենք ոչ միայն մեղքերի ներում և արդարացում ենք ստանում, այլ նաև ազատվում ենք այն ստրկությունից, որում մեզ պահում են այդ «իշխանությունները»: Մենք պետք է հասկանանք Քրիստոսի հաղթանակի բնույթը և այն ընկալենք նաև որպես մեր հաղթանակ:

Բացի մեր աշխարհում գոյություն ունեցող գերբնական իրողություններից, ձեր և ձեր հավատի վրա հարձակում գործող

է՞լ ինչ ուժերի ու ներգործությունների հետ եք դուք պայքարում: Նրանց դեմ հաղթանակ տանելու համար անհրաժեշտ է ապավինել Հիսուսում մեզ շնորհված խոստումներին:

Հինգշաբթի *նոյեմբերի 1*

Մարդասպանը մերկացված է

Քրիստոսն աշխարհ եկավ սատանայի գործերը խափանելու նպատակով (*Եբրայեցիս 2.14*): Փրկիչը դա կատարեց խաչի վրա: Բայց եթե Քրիստոսը հաղթանակ տարավ սատանայի, իշխանությունների և զորությունների դեմ, ապա ինչո՞ւ ենք մենք առաջվա նման մղում այդ պայքարը: Ինչո՞ւ սատանան առաջվա պես կարող է քայլել գոռոզ առյուծի նման՝ որոնելով, թե ում կուլ տա:

Ուշադիր կարդացե՛ք Կողոսացիս 2.15-ը: Ուշադրություն դարձրեք այն երեք տարբեր բայերի վրա, որոնք Պողոսն օգտագործում է՝ նկարագրելու խաչի վրա Հիսուսի հաղթանակը: Ի՞նչ է դրանցից յուրաքանչյուրը նշանակում: _____

_____

_____

Նախ, Քրիստոսը «իշխանություններին և պետություններին մերկացրել է»: Հունարեն *ապեկուդումայ* բառը տառացիորեն նշանակում է «հանել որևէ մեկի հագուստը»: Այդ բառը նաև կարող է նշանակել (ինչպես տվյալ համարում), որ չար ուժերից խլվել է նրանց զենքն ու իշխանությունը:

Ի՞նչ զենք է դա: Քրիստոսի հաղթական կյանքը, որի գագաթնակետը դարձավ Գողգոթան, կանխորոշեց սատանայի ճակատագիրը: Սատանան դիմակազերծվեց: Նրա աշխատանքի մեթոդները մերկացվեցին հրեշտակների և ողջ տիեզերքի առջև… Խաչի վրա Հիսուս Քրիստոսը խավարի իշխանություններից և զորություններից հանեց նրանց հագուստը, իշխանությունից զրկեց այս աշխարհի իշխանին, ինչպես նաև խլեց ճշմարտության դեմ պայքարում նրանց զորության զենքը» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 7, 205):

Քրիստոսը «նրանց (իշխանություններին և պետություններին) խայտառակեց»: Ի՞նչ կերպ խաչի վրա մերկացվեց նրանց էությունը: Նրանց ո՞ր նպատակները դարձան ակնհայտ: Տե՛ս Հովհաննես 8.44: _____

_____

Տեքստը նաև ասում է, որ Քրիստոսը հաղթանակ տարավ նրանց նկատմամբ: Հունարեն *տրիամբեուո* բառը ենթադրում է հաղթական մուտք, երբ՝ հաղթանակի կապակցությամբ: Դրանում մեծ խորհուրդ է ամփոփված՝ Հիսուսը դաժանորեն տառապում և մահանում է խաչի վրա, ինչը սոսկալի պարտության տեսք ունի, բայց Աստվածաշունչը դա հաղթանակ է անվանում: Ուրիշ ինչ էլ ներառեր այդ հաղթանակը, այն մերկացնում է սատանային որպես մարդասպանի՝ հաստատելով Հիսուսի խոսքերը (Հովհաննես 8.44):

Գողգոթայի խաչի շնորհիվ մոտենում է օրը, երբ չար ուժերի իշխանությունը կատարելապես կոչնչացվի: Դա տեղի կունենա այն ժամանակ, երբ Քրիստոսը «կխափանի ամեն իշխանություն և ամեն պետություն և ամեն զորություն» (Ա Կորնթացիս 15.24), և վերջին պարտված թշնամին կլինի մահը (Ա Կորնթացիս 15.26): Իսկ մինչ այդ մենք պետք է Աստծո զորությամբ համբերենք և պայքարենք հանուն մեր հավատի, որը պարգևվում է ամեն այդ մասին խնդրողին:

Քրիստոսի մահից հետո «սատանան տեսավ, որ ինքը դիմակազերծված է: Նրա բոլոր գործերը բացահայտվեցին ընկած հրեշտակների և բոլոր աշխարհների առջև: Նա իրեն ցույց տվեց իբրև մարդասպան: Թափելով Աստծո Որդու արյունը՝ նա զրկվեց երկնաբնակների ամեն մի կարեկցանքից, և այդ ժամանակից նրա գործունեությունը սահմանափակվեց: Եվ որքան էլ այժմ ճարպկորեն ձևացներ, նա արդեն չէր կարող սպասել երկնաբնակ հրեշտակներին և զրպարտել Քրիստոսի հետևորդներին՝ մեղադրելով, թե նրանք անարատ հագուստ չեն հագել և պղծված են մեղքով: Կտրվեց սատանային երկնային աշխարհի հետ կապող վերջին թելը: Բայց սատանան չոչնչացվեց: Հրեշտակներն այդ ժամանակ էլ դեռ չէին հասկանում մեծ պայքարի բոլոր այդ հանկարծահաս փոփոխությունները: Երկու հակադիր կողմերի սկզբունքները պետք էր կատարելապես իրականացնել, և հանուն մարդկության բարօրության սատանային թույլ տրվեց շարունակել ապրել: Մարդկանց, ինչպես և հրեշտակներին, հարկ էր տեսնել լույսի Իշխանի և խավարի իշխանի տարբերությունը: Նրանք պետք է ընտրեին, թե ում ծառայեն» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 761):

Ուրբաթ ***Նոյեմբերի 2***

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի «*Քրիստոնեական դաստիարակության սկզբունքները*»

գրքից կարդացե՛ք «Գիրք գրքոց» գլուխը, 136, *«Փրկության պատմություն»* գրքից՝ «Ոգեհարցություն» գլուխը, 394, 395, *«Մեծ պայքար»* գրքից՝ «Չար հոգիների խարդավանքները», 511-517:

«Ծավալվում է մարդկային աչքի համար անտեսանելի ճակատամարտ: Տիրոջ բանակը պատերազմում է՝ ջանալով հոգիներ փրկել: Սատանան և իր դավակիցները նույնպես գործում են՝ ողջ ուժով ջանալով բոլոր հնարավոր ուղիներով խաբել և կործանել մարդկանց … Օր օրի շարունակվում է պայքարը: Եթե մեր աչքերը բացվեին, և մենք տեսնեինք բարի և չար ուժերին գործելիս, թեթևամտության և ունայնության, ծամածռությունների և կատակների հետքն անգամ չէր մնա: Եթե բոլորը Աստծո սպառազինությունը հագնեին և քաջաբար պայքարեին Տիրոջ ճակատամարտերում, կտարվեին հաղթանակներ, որոնք խավարի թագավորությանը կստիպեին դողալ» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 6, 41):

«Երբ մարդիկ սկսում են ապրել Աստծո հետ համաձայնության մեջ, նրանք իսկույն նկատում են, որ «խաչի գայթակղությունը» չի դադարել: Չարի երկնավոր իշխանությունները, զորությունները և հոգիները դուրս են գալիս բոլորի դեմ, ովքեր հնազանդ են երկնային օրենքներին: Այդ պատճառով հալածանքները պետք է Քրիստոսի աշակերտների կողմից ընկալվեն ոչ թե որպես տրտմություն, այլ՝ ուրախություն, քանի որ դրանք վկայում են, որ վերջիններս ընթանում են իրենց Տիրոջ հետքերով» (Է. Ուայթ, Քրիստոսի լեռան քարոզը, 29, 30):

Հարցեր քննարկման համար

1. Ուշադիր կարդացե՛ք Եբրայեցիս 2.14,15-ը: Այստեղ հստակ կերպով պատկերված է մահը՝ որպես ստրկացման գործոն: Նկատե՛ք նաև, որ շեշտը դրված է մահից մեր վախի վրա: Մենք ինչո՞ւ ենք այդքան վախենում նրանից: Ինչպե՞ս է այդ վախը, համաձայն համարի, մեզ ինչ-որ ստրկության մեջ պահում: Ինչպե՞ս պետք է Քրիստոսում ազատ քրիստոնյաները վերաբերվեն մահվանը:
2. Որոշ մարդկանց դիվական ուժերի գոյության գաղափարն իսկ հիմար նախապաշարմունք է թվում: Իսկ ուրիշները կատարելապես ճնշված են այդ ուժերի հանդեպ վախից: Լինելով քրիստոնյաներ՝ մենք ինչպե՞ս կարող ենք հավասարակշռված մոտեցում ունենալ այդ ուժերի իրական լինելը հասկանալու հարցում և, միևնույն ժամանակ, գիտակցել, թե Քրիստոսն ինչ կատարեց մեզ համար՝ նրանց դեմ պայքարում:

3. Օրինակներ բերեք, թե ինչպես են չար ուժերը վերահսկում տարատեսակ երկրային իշխանություններին կամ ազդեցություն գործում դրանց վրա:
4. Ինչպե՞ս է մեծ պայքարի մասին ճշմարտությունն օգնում մեզ հասկանալ, թե ինչու գոյություն ունի չարը՝ չնայելով այն բանին, որ Քրիստոսը նրան հաղթել է խաչի վրա:

ՀԱՂԹԱՆԱԿ ՉԱՐԻ ՈՒԺԵՐԻ ԴԵՄ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եփեսացիս 1.18-22, Հռոմեացիս 8.26-39, Հակոբոս 4.7, Ա Պետրոս 5.6-10, Ղուկաս 10.1-20, Գործք առաքելոց 5.12-16:

Հիշելու համարը.

«Բայց այս ամեն բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց» (Հռոմեացիս 8.37):

Հիմնական միտքը.

Քրիստոսում մենք հաղթանակ ենք ձեռք բերում մեզ ճնշող բոլոր ուժերի դեմ:

Մեր աշխարհի որոշ անկյուններում կրոնը գլխավորապես ուժի աղբյուր է, որի միակ կոչումն է՝ օգնել մարդուն հաղթահարելու առօրյա դժվարությունները: Մեղքից փրկության քրիստոնեական պատկերացումն, օրինակ, խորթ է շատ ավանդական կրոնների համար: Այդպիսի տարածաշրջաններում քրիստոնեությունը ենթակա է պարզապես առօրյա խնդիրների լուծման մեթոդներից մեկը դառնալու վտանգին: Չնայելով այն բանին, որ քրիստոնեական կենսակերպն իր մեջ բազում գործնական առավելություններ ունի, մենք միշտ պետք է հիշենք, որ այն անհրաժեշտ է դիտարկել ոչ երկրային տեսանկյունից: Քրիստոնեությունն իրականության մեկ այլ չափում է ներկայացնում, որը չի վերաբերում նյութական աշխարհին: Իհարկե, երկու ոլորտներն էլ կարևոր են, և երկուսն էլ հակազդում են միմյանց: Որքա՜ն երախտապարտ մենք պետք է լինենք հաղթանակի խոստումների համար, որոնք մեզ պարգևված են երկու ոլորտներում էլ:

Եվ կրկին մենք ընդգծում ենք, որ Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարի համընդգրկուն պատումը պետք է որոշ հիմնարար նմուշօրինակ ճնավորի աշխարհի և նրանում իբրև քրիստոնյաներ մեր տեղը հասկանալու համար: Այդ հակամարտության մեջ քրիստոնեությունն իր կողմնակիցներին չի թողնում հակառակորդի ողորմածությանը: Ընդհակառակը, Քրիստոսում մենք թշնամուն հաղթելու խոստում ունենք:

Մի ասպիճան դեպի մեր հաղթանակը

Քրիստոնյաները չարի ուժերի դեմ հաղթանակի հույս չէին ունենա, եթե դրա համար հող նախապատրաստված չլիներ: Անցյալ շաբաթվա դասին մենք տեսանք, որ Քրիստոսը խաչի վրա Իր մահով և մեռելներից հարություն առնելով հաղթանակ տարավ ամեն չարի և Աստծուն դիմադրող բոլոր «ուժերի» հանդեպ: Այդ «ուժերի» մերկացումն ու զինաթափումն ուղղակիորեն սահմանափակել է նրանց հնարավորությունները: Նրանք հնազանդեցվել են, և այդ փաստը հող է նախապատրաստել քրիստոնյաների հաղթանակի համար:

Ուսումնասիրե՛ք Եփեսացիս 1.18-22 հատվածը: Պողոսն աղոթում է Եփեսոսի քրիստոնյաների սրտի աչքերի լուսավորման համար: Համաձայն առաքյալի խոսքերի՝ ի՞նչ կատարեց Քրիստոսը մեզ համար: Մենք ինչպե՞ս ենք այդ խոսքերը հասկանում մեծ պայքարի համատեքստում: Մեզ ի՞նչ է խոստացված բերված համարներում: Մենք ինչպե՞ս ենք այդ խոստումները կիրառում մեր կյանքում: _____

_____

_____

Պողոսն աղոթում է նրա համար, որ քրիստոնյաներին նոր խորը հոգևոր լույս ուղեկցի: Երբ դա տեղի ունենա, նրանց կյանքը կլցվի քրիստոնեական հույսով: Որպես Աստծո ժառանգորդներ՝ նրանք կիմանան իրենց առավելությունների մասին և սեփական փորձով իրենք կյանքում կզգան Աստծո զորությունը՝ նույնքան մեծ, որքան և Հիսուսին մեռյալներից հարություն տված զորությունն է:

Հատուկ ուշադրություն դարձրեք Եփեսացիս 1.20-22-ին: Այդ խոստումների հիման վրա ինչի՞ մասին մենք կարող ենք խնդրել թշնամու ուժերի դեմ մեր պայքարի և մեզ համար: _____

_____

_____

Քրիստոսի խաչելության և հարության արդյունքը եղավ այն, որ այս աշխարհում ամեն ինչ, ներառյալ իշխանությունները և զորությունները, դարձավ Նրան ենթակա: Հիսուսն իսկապես հող նախապատրաստեց մեր անհատական հաղթանակի համար այն ամենի դեմ, ինչը հոգևոր ճնշում է գործադրում մեզ վրա:

Կարդացե՛ք այսօրվա համար առաջարկված համարները: Ինչ

ապրումներ էլ որ ձեզ ճնշեն տվյալ պահին, դուք ձեզ համար ի՞նչ կարող եք քաղել ընթերցված համարներից: Մեզ ի՞նչ է խոստացված Քրիստոսում: Ինչպե՞ս մենք մեր իրական փորձում կարող ենք կիրառել համարներում շարադրված խորը աստվածաբանական ճշմարտությունները:

Երկուշաբթի *Նոյեմբերի 5*

Հաղթանակի հույս

Չարի ուժերի դեմ քրիստոնյաների հաղթանակի համար ոչ միայն հող է նախապատրաստված, այլև Աստվածաշունչն է մեզ արտահայտիչ կերպով այդ հաղթանակի հույսը տալիս:

Ուսումնասիրե՛ք Հռոմեացիս 8.26-39-ը: Ինչի՞ վրա է Պողոսը ջանում հրավիրել իր ընթերցողների ուշադրությունը: Ի՞նչ պատճառներ է նա թվարկում՝ քրիստոնյաներին հրավիրելով վստահությամբ նայել ապագային: Վերլուծե՛ք համարներում բովանդակվող բոլոր հրաշալի խոստումները և քաջալերանքի խոսքերը: Մենք ինչպե՞ս կարող ենք ոչ միայն դրանք ընկալել որպես աստվածաբանություն, այլև ապրել այստեղ ներկայացված հստակ աստվածաշնչյան ուսմունքներին համապատասխան: _____

_____

_____

_____

_____

Հռոմեացիս 8.29 և 30 համարները մարտադաշտն են, որտեղ քննարկումներ են ծավալվում նախասահմանության հարցի շուրջ: Բայց այս հատվածը ներկայացված է մեծ խոստման համատեքստում: Պողոսն առնվազն երկու հիմնարար պատճառ է ներկայացնում, որոնք քրիստոնյաներին թույլ են տալիս վստահել Տիրոջը: Նախ, Սուրբ Հոգին օգնում է մեզ մեր փորձությունների և տրտմությունների մեջ (հմ. 26): Երկրորդ, Աստծո հավիտենական նպատակի համաձայն՝ ամեն բան, նույնիսկ փորձությունները նպաստում են քրիստոնյաների վերջնական բարօրությանը (հմ. 28) (անկախ ներկայում այդ փորձությունների ողջ դժվարությունից):

Աստծո հանդեպ վստահությունը դժվար հանգամանքներում իսկապես հանդիսանում է հավատով, ոչ թե երևացածով կյանքի կարևորագույն բաղադրիչը:

29 և 30 համարներում Պողոսը բացատրում է 28 համարում արտահայտված իր վստահությունը: Այս համարներում նա ցույց է տալիս Աստծո մտադրության զարգացումը Նրան սիրողների համար: Այդ նպատակը ներառում է փրկության բոլոր գործընթացները:

Ինչպե՞ս է քրիստոնյաների վստահությունը հիմնավորող Պողոսի փաստարկը հասնում իր գագաթնակետին 31-34 համարներում: Հատուկ ուշադրություն դարձրեք 31 համարին: Մենք ի՞նչ կարող ենք քաղել անձամբ մեզ համար՝ մեծ պայքարի համատեքստում: _

_____

_____

_____

_____

Հռոմեացիս 8.35-39-ում Պողոսը թվարկում է այն, ինչի նկատմամբ քրիստոնյաները կարող են հաղթանակ տանել: Ուշադրություն դարձրեք, որ այդ ցանկում ներառված են նաև «իշխանությունները և զորությունները»: Պողոսի այսքան լիակատար ցանկը ցույց է տալիս, որ տիեզերքում չկա ոչինչ, ինչի հանդեպ քրիստոնյաները չեն կարող հաղթանակ տանել Հիսուսի շնորհիվ:

Երեքշաբթի ***Նոյեմբերի 6***

Քրիստոնյաները սատանայի դեմ

Կարդացե՛ք Հակոբոս 4.7-ը: Ի՞նչ հստակ խոստում է տրված նրան, ով կդիմակայի սատանային: Մարդն ինչպե՞ս կարող է դիմակայել այն ուժին, որը շատ անգամ ավելի հզոր է իր սեփական ուժից: Հռոմեացիս 8.37: Տե՛ս նաև Երկրորդ օրինաց 4.4-ը: ____

_____

_____

_____

_____

Քրիստոնյան սատանայի ողորմածությանը հանձնված անօգնական զոհ չէ (հիմա դուք հասկանում եք, թե ինչու է այդքան կարևոր սատանայի և ընկած հրեշտակների իրական գոյությունը հասկանալը): Բայց քրիստոնյան կոչված չէ սատանայի հետ ինքնուրույն ճակատամարտելու: «Հակառակ կենալ» թարգմանված բառը՝ հունարեն *անտիստեմի*, նշանակում է «պաշտպանել սեփական տեսակետը՝ ինչ-որ բանի հակառակ»: Քրիստոնյայի գրված դիրքը սատանային ստիպում է նա-

հանջել: Այդ դիրքն ամփոփվում է Հիսուսին կատարելապես նվիրվելու մեջ, քանի որ միայն Նա կարող է սատանային ստիպել նահանջել:

Կարդացե՛ք Ա Պետրոս 5.6-10-ը: Ի՞նչ խոստում է տրված քրիստոնյաներին՝ թշնամու դեմ, ինչը համեմատվում է գոռոզ առյուծի հետ, որը որոնում է, թե ում կուլ տա: Այդ համարներն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ Հակոբոսի վերը բերված խոսքերը: Տե՛ս նաև Եփեսացիս 4.27 և 6.11-ը: _____

_____

_____

Պետրոսն այդ խոսքերը գրել է որպես խորհուրդ հալածանքներ վերապրող քրիստոնյաներին: Անկասկած, նա գիտեր, որ այն բոլոր հալածանքների ետևում, որոնց միջով անցնում էին իր ընթերցողները, թաքնված է նրանց երդվյալ թշնամին՝ սատանան: Առաքյալն իր ընթերցողներին կոչ է անում դիմակայել սատանային: Այստեղ Պետրոսը, ինչպես և Հակոբոսը, օգտագործում է *անտիստեմի* բառը, բայց ավելացնում է *ստերոյ տե պիստեյ* դարձվածքը, որը նշանակում է *հաստատ* (ամուր) *հավատքով*: Այդպիսով, նա վստահեցնում է, որ սատանան կփախչի նրանցից, ովքեր հաստատ և աներեր կերպով կդիմակայեն նրա հարձակումներին: Փոքրոգությունն այստեղ չի օգնի: Սակայն Պետրոսը գիտի, որ, չնայելով քրիստոնյաների ամուր դիրքերին, տառապանքները կարող են որոշ ժամանակ շարունակվել:

Այնուամենայնիվ, Աստված Ինքը կկատարելագործի, կհաստատի, կամրապնդի քրիստոնյաներին և անսասան կդարձնի (Ա Պետրոս 5.10):

Չնայած բոլոր խոստումներին՝ մեզ խոստացված չէ, որ մենք չենք տառապելու, այնպես չէ՞: Ո՞ր քրիստոնյան սեփական փորձով չի զգացել տառապանքները: Հավանաբար, ամեն մարդու կյանքը այս կամ այն չափով լի է տառապանքներով, բայց ի՞նչ վճռորոշ նշանակություն ունի մեր հավատը, որը դրսևորվում է ցավի և տառապանքի մեջ:

Հորեքշաբթի *Նոյեմբերի 7*

Հաղթանակի օրինակներ

Մինչ այս պահը մենք արդեն բազմիցս ասել ենք, որ Աստվածաշունչը հույս և հաղթանակի խոստումներ է առաջարկում, որոնք կարող են դառնալ քրիստոնյաների սեփականությունը: Բայց, բացի դրանից, մենք ունենք իրական օրինակներ, թե ինչպես են Քրիստոսի հետևորդները

հաղթանակներ տարել չարի ուժերի դեմ, և այդ օրինակները գրի են առնված Աստվածաշնչի էջերում: Մենք կսկսենք Հիսուսի առաջին աշակերտների ծառայության օրինակներից:

Կարդացե՛ք Մատթեոս 10.1-8, Մարկոս 6.7,12,13, Ղուկաս 9.1,2, Ղուկաս 10.1-20-ը: Վերլուծե՛ք, թե ինչ էր հանձնարարված այդ մարդկանց: Ինչպե՞ս պետք է հասկանալ բերված համարները մեծ պայքարի համատեքստում: Բացի դրանից, ինչի՞ մասին են այդ համարներն ասում այսօր մեզ՝ Հիսուսի մասին լուրն աշխարհին քարոզել կոչվածներիս: _____

_____

_____

Բավականին հետաքրքիր է այս փաստը. երբ Հիսուսը տասներկու աշակերտներին ուղարկեց հռչակելու Աստծո թագավորության մոտենալու մասին լուրը, Նա անհրաժեշտ համարեց նրանց պիղծ ուժերի վրա իշխանությամբ օժտել: Եվ դա զարմանալի չէ, քանի որ ավետարանի քարոզն անպայմանորեն հանգեցնում է այդ ուժերի մերկացմանը: Ավետարանի հռչակման ժամանակ սպասվում էր, որ չարի ուժերը կդրսևորեն իրենց, հետևաբար, անհրաժեշտ էր նրանց նկատմամբ իշխանություն տալ տասներկու առաքյալներին: Եվ իսկապես, պիղծ հոգիները դրսևորեցին իրենց, երբ աշակերտները գնացին քարոզելու, սակայն շատ դևեր վռնդվեցին, իսկ չարի ուժերը պարտվեցին:

Որքան մենք կարող ենք տեսնել Սուրբ գրքից, Հիսուսը յոթանասուն աշակերտներին դևերին վռնդելու որոշակի հանձնարարություն չէր տվել (Ղուկաս 10.9): Սակայն, առաքելության հենց այդ կողմը, ըստ երևույթին, ամենից ավելի էր ոգևորել նրանց (Ղուկաս 10.17): Յոթանասուն աշակերտներն ուրախությամբ զեկուցեցին, որ երբ իրենք գնում և քարոզում էին, դևերը հնազանդվում էին իրենց: Իհարկե, նրանք հասկանում էին, որ դա հնարավոր էր միայն իրենց մեջ գործող Հիսուսի զորության շնորհիվ:

Թեև բերված համարները կարելի է երկար քննարկել, և դրանց շուրջը շատ կարելի է բանավիճել, այսօր մենք՝ որպես քրիստոնյաներ, որ կոչված ենք ավետարանը հռչակել աշխարհին, պետք է հասկանանք, որ նույնպես օժտված ենք զորությամբ, որը մեզ պարգևում է Քրիստոսը:

Կարդացե՛ք Ղուկաս 10.20-ը: Ի՞նչ կարևոր ճշմարտություն մենք պետք է յուրացնենք Հիսուսի խոսքերից: Նրա պատասխանն ինչպե՞ս է ցույց տալիս, թե ինչը պետք է մեզ համար առաջին տեղում լինի: Ինչպե՞ս մենք կարող ենք համոզվել, որ իսկապես հետևում ենք այդ պատվերին:

Հաղթանակի օրինակներ (Գործք առաքելոց գիրքը)

Դիվական ուժերի դեմ հաղթանակները, որոնց մասին մենք խոսում էինք չորեքշաբթի օրվա դասին, տեղի են ունեցել այն օրերին, երբ Տերը երկրի վրա էր: Բայց դրանք չեն սահմանափակվել այդ ժամանակահատվածով: Գործք առաքելոց գրքում մենք գտնում ենք, որ Հիսուսի հետևորդները շարունակում էին ջախջախել չարի ուժերին: Իհարկե, մեզ դա չպետք է զարմացնի, չէ՞ որ Հիսուսն Իր հետևորդներին խոստում է թողել Սուրբ Հոգու ներկայության մասին (տե՛ս, օրինակ, Հովհաննես 14.16-ը):

Միևնույն ժամանակ, մենք գիտենք, որ Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարը, թեկուզ և վերջնականապես լուծվեց խաչի վրա, կշարունակվի մինչև ժամանակի վերջը: Այդպիսով, Քրիստոսի հետևորդները նույնիսկ Նրա երկինք համբարձվելուց հետո պետք է մասնակցեին այդ հակամարտությանը, հատկապես՝ երբ ջանում էին կատարել ավետարանական հանձնարարությունը:

Վերլուծե՛ք չարի ուժերի դեմ հաղթանակների բերված օրինակները: Մենք մեզ համար ի՞նչ դաս կարող ենք քաղել դրանցից վկայության և ավետարանչության ժամանակակից համատեքստում:

Գործք առաքելոց 5.12-16 _____

_____

Գործք առաքելոց 3.1-11 _____

_____

Գործք առաքելոց 16.16-18 _____

_____

Գործք առաքելոց 16.16-18-ում անսովոր դեպք է նկարագրված: Երբ աղախինը բացականչում էր՝ «այս մարդիկ բարձրյալ Աստծո ծառաներն են», նա ճշմարտությունն էր ասում: Բայց Պողոսն արգելեց նրան այդ անել: Նա տեսնում էր, թե ինչ էր տեղի ունենում իրականում: Սպասուհուն տիրած և նրա տերերին եկամուտ բերող գերբնական ուժը Տիրոջ զորությունը չէր, և Պողոսը գիտեր դա: Երբ կինը բացականչում էր, որ այդ այրերը «Բարձրյալ Աստծո ծառաներն են», նա, ամենայն հավանականությամբ, խոսում էր ոչ թե ճշմարիտ Աստծո, այլ քանանայան աստվածության մասին, որին նույնպես *Էլիոն* (բարձրյալ) էին անվանում: Ուշադրություն դարձրեք, թե որքա՜ն հեշտ, պարզապես հա-

մահունչ եզրույթների օգնությամբ էր սատանան ցանկանում արատավորել ճշմարտությունը:

Եվս մեկ անգամ նայեք Գործք առաքելոց 5.12-16-ը: Ուշադրություն դարձրեք այն զարմանալի փաստին, որ մարդիկ հույս ունեին բժշկություն ստանալ՝ նույնիսկ լինելով անցնող Պետրոսի ստվերի ներքո: Դրանում ի՞նչ նախազգուշացում կա Տիրոջը ծառայող ցանկացած քրիստոնյայի համար, հատկապես՝ երբ նրա աշխատանքը հաջող է համարվում:

Ուրբաթ *նոյեմբերի 9*

Հեպագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի *«Դարերի փափագը»* գրքից կարդացե՛ք «Ձեր սրտերը թող չխռովվեն» գլուխը, 662-680, *«Հավատք և գործեր»* գրքից՝ «Քրիստոսի արդարության ընդունումը» գլուխը, 93, *«Հատընտիր լուրեր»* գրքից, հտ.3՝ «Դիտությունը և հայտնությունը» գլուխը, 310:

«Հիսուսը հաղթեց՝ ենթարկվելով և վստահելով Աստծուն, և Իր առաքյալի միջոցով Նա ասում է մեզ. «Արդ հնազանդեցե՛ք Աստծուն, հակառա՛կ կացեք սատանային, և նա կփախչի ձեզանից: Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: Սրբեցե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ, և ձեր սրտերը մաքրեցե՛ք, ո՛վ երկմիտներ» (Հակոբոս 4.7,8)»: Մենք ինքներս չենք կարող հակառակվել փորձչին, նա հաղթել է մարդկությանը, և, եթե մենք փորձենք հենվել մեր սեփական ուժերի վրա, ապա նրա խարդավանքների զոհը կդառնանք: Բայց «Ամուր աշտարակ է Տիրոջ անունը, նրա մեջ է փախչում արդարը և ապաստան գտնում» (Առակաց 18.10): Սատանան սարսռում և փախչում է անգամ ամենաանզոր մարդուց, ով ապաստան է գտնում այդ հզորագույն անվան մեջ» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 130, 131):

«Սուրբ Հոգու տիեզերական իշխանությունը պաշտպանություն է բոլոր պայքարողների համար: Քրիստոսը թույլ չի տա, որ որևէ մեկը, ով ապաշխարությամբ և հավատով Իրենից պաշտպանություն է խնդրում, հայտնվի թշնամու իշխանության ներքո՝ գայթակղության և փորձության մեջ: Փրկիչը գտնվում է Իր զավակների կողքին: Նրա հետ հնարավոր չեն անհաջողություններ, կորուստներ, անզորություն կամ պարտություն: Մենք կարող ենք ամեն բան անել Նրա միջոցով, ով ամրապնդում է մեզ: Երբ գալիս են գայթակղությունն ու փորձությունը, մի՛ սպասեք, մինչև բոլոր խնդիրները հարթվեն, այլ նայե՛ք Հիսուսին՝ ձեր օգնականին:

Կան քրիստոնյաներ, ովքեր չափազանց շատ են խոսում սատանայի ուժի մասին: Նրանք մտածում են իրենց հակառակորդի մասին, նրան հիշում են իրենց աղոթքներում, խոսում են նրա մասին, և նա նրանց ավելի ու ավելի հզոր է թվում: Սատանան իսկապես էլ ուժեղ է, բայց, շնորհակալություն Աստծուն, մենք ունենք Ամենակարող Փրկիչ, ով բանսարկուին վռնդել է երկնքից: Սատանան գոհ է, երբ մենք գովաբանում ենք նրա ուժը: Ինչո՞ւ չխոսել Հիսուսի մասին: Ինչո՞ւ չփառաբանել Նրա զորությունն ու Նրա սերը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 490, 493):

Հարցեր քննարկման համար

1. Անցած դասից հիշե՛ք հաղթանակի մի քանի աստվածաշնչյան օրինակներ: Որևէ նմանատիպ բան տեղի ունենո՞ւմ է այսօր: Մենք ի՞նչ կարող ենք անել, որպեսզի մեր օրերում է՛լ ավելի շատ նման օրինակներ տեսնենք:
2. Ի՞նչ է նշանակում «մոտեցե՛ք Աստծուն» կոչը (Հակոբոս 4.8): Մենք ինչպե՞ս կարող ենք մոտենալ Նրան: Իսկ ի՞նչ է տեղի ունենում դրանից հետո: Ձեր պատասխանները քննարկե՛ք դասարանում:
3. Պատկերացրե՛ք, որ դուք Պետրոսն եք, և մարդիկ ծարավի են, որ ձեր ստվերն ընկնի իրենց վրա: Խորհեցե՛ք, թե ինչ հետևանքներ դա կարող է ունենալ ձեր հոգևորության վրա: Ի՞նչ միակ ճանապարհ գոյություն ունի՝ նման իրավիճակում սեփական անձը վտանգազերծելու համար:

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եփեսացիս 5.9, 6.14-18, Բ Կորնթացիս 6.7, Հռոմեացիս 10.15, Ա Թեսաղոնիկեցիս 5.8, Մարկոս 14.38:

Հիշելու համարը.

«Սրա համար Աստծո սպառազինությունն առեք, որ կարողանաք հակառակ կենալ չարության օրերում, և ամենը կատարելով՝ հաստատ կանգնել» (Եփեսացիս 6.13):

Հիմնական միտքը.

Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է Աստծո սպառազինությունը հագնի, քանի որ մենք բոլորս գտնվում ենք մարտի դաշտում:

Սատանայի վերջնական նպատակն այն հավատարմության զավթումն է, որը բոլոր ճշմարիտ քրիստոնյաներն ունեն Քրիստոսի հանդեպ: Նախքան վերածնվելը մարդիկ պատկանում էին սատանայի թագավորությանը, և նա իշխում էր նրանց: Թեև առ Քրիստոս դարձի գալը հավատացյալին ազատագրում է սատանայի իշխանությունից, այն լիովին չի չեզոքացնում սատանայի ուժը: Յուրաքանչյուր հնարավորության դեպքում սատանան բազմապատկում է մեր հավատի քայքայմանն ուղղված իր ջանքերը՝ մեզ իր մոտ վերադարձնելու համար: Նա խաբուսիկ հնարքների լայն տեսականի ունի. Սուրբ գիրքը դրանք անվանում է սատանայի հնարքներ (Եփեսացիս 6.11): Սակայն, վերջին հաշվով, անկախ խաբեություններից, հնարքներից և խարդավանքներից, թշնամին չի կարող Քրիստոսից անջատել մեկին, ով որոշել է հավատարիմ մնալ Տիրոջը: Տվյալ դասը կենտրոնացված է քրիստոնեական «սպառազինության» վրա, որն անհրաժեշտ է հոգևոր պայքարի համար: Մեր միակ պաշտպանությունը *ողջ* հոգևոր ասպազենքը հագնելն է: Մենք պետք է հասկանանք այդպիսի զենքի բնույթը, քանի որ դրանով մեր հաղթանակը երաշխավորված է, իսկ առանց դրան մենք զոհ կգնանք թշնամուն:

Անձնական սպառազինության անհրաժեշտությունը

Եփեսացիս 6.12 համարում Պողոսը քրիստոնյայի կյանքը նկարագրում է որպես պայքար՝ այն անվանելով «մեր պատերազմը»: Ուշադրություն դարձրեք, որ առաքյալը դերանունն օգտագործում է հոգնակի թվով և ասում է՝ «**Մեր** պատերազմը արյան և մարմնի հետ չէ»: Դա վերաբերում է յուրաքանչյուր քրիստոնյայի: 13-րդ համարում նա քրիստոնյաներին հորդորում է Աստծո սպառազինությունը հագնել, և այն մատչելի է մեզ: Պողոսը 13-րդ համարն սկսում է «սրա համար» բառերով՝ ենթադրելով, որ տվյալ հակամարտության բնույթը այդպիսի ասպազենքն է պահանջում: Հետո առաքյալը նկարագրում է, թե ինչպես պետք է քրիստոնյան սպառազինվի՝ օգտագործելով ճակատամարտի պատրաստվող հռոմեացի զինվորի համոզիչ կերպարը:

Ուշադիր վերլուծե՛ք Եփեսացիս 6.14-17-ում ներկայացված պատկերը: Այդ պատկերի մեջ առանձնահատուկ կերպով ի՞նչ է ցույց տալիս այն փաստը, որ հոգևոր պայքարը ոչ միայն ներքաշում է բոլոր քրիստոնյաներին, այլև նրանց անձնական մասնակցությունն է պահանջում: Ինչո՞ւ մենք անձամբ պետք է մասնակցենք ճակատամարտին: _____

_____

_____

_____

«Պատերազմ» թարգմանված բառը սկզբում վերաբերում էր ձեռնամարտին, բայց ավելի ուշ սկսեց կիրառվել նաև այլ տեսակի մարտերի վերաբերյալ: Տվյալ համատեքստում այդ բառի օգտագործումը, հնարավոր է, չի ենթադրում դևերի հետ իրական ձեռնամարտեր, բայց այն պարզորոշ ցույց է տալիս յուրաքանչյուր քրիստոնյայի անձնական պայքարը:

Մատթեոս 25.1-13-ում տասը կույսերի մասին առակը թեկուզև մատուցված է այլ, մերից տարբեր համատեքստում, սակայն նույնպես վերաբերում է հոգևոր հարցերում *անձնական* մասնակցության խնդրին: Էլեն Ուայթը հինգ կույսերի հոգևոր վիճակը համադրում է Պողոսի նկարագրած վերջին ժամանակների մարդկանց նկարագրության հետ, ովքեր աստվածապաշտության տեսք ունեն, բայց չունեն նրա զորությունը (Բ Տիմոթեոս 3.1-5): «Դա մարդկանց մի դասակարգ է, ովքեր տագնապ-

ների և դժվարությունների ժամանակներում խաղաղություն և անվտանգություն են հռչակում: Նրանք հանգստացնում են սեփական սրտերը՝ վանելով վրա հասնող վտանգների մասին մտքերը: Իսկ հանկարծակի իրենց քնից արթնանալով ՝ նրանք հայտնաբերում են, որ հայտնվել են աղետալի վիճակում, և ուրիշներին են դիմում նրա համար, ինչ իրենք չունեն: Բայց ոչ ոք ի վիճակի չէ մարդուն հատուցել հոգևորության կորուստը» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 411):

Թվարկե՛ք այն, ինչ ուրիշ ոչ ոք չի կարող անել ձեր փոխարեն (օրինակ, ոչ ոք չի կարող ուտել ձեր փոխարեն): Այդ սկզբունքն ինչպե՞ս է կիրառելի հոգևոր Աստծո սպառազինությունը հագնելու համար՝ դիմակայելու հակամարտությանը, որին մասնակցում է մեզանից յուրաքանչյուրը:

Երկուշաբթի *Նոյեմբերի 12*

Ճշմարտության գոտին և արդարության զրահը

«Այսպիսով, հաստատ կանգնեցեք՝ ձեր մեջքերը ճշմարտությամբ գոտևորված, և արդարության զրահը հագած» *(Եփեսացիս 6.14):*

Այսօր մեզ համար դժվար է ճշգրտորեն որոշել, թե ո՛ր գոտու մասին է գրում Պողոսը: Բայց, ըստ ամենայնի, Եփեսացիս 6.14-ում նա խոսում է կաշվե գոտու մասին, որը պաշտպանում էր փորի ստորին մասը և միևնույն ժամանակ չէր նեղում շարժվելիս, այնպես որ մարդը կարող էր ազատ կատարել իր աշխատանքը: Այս իմաստով գոտին իրենից ներկայացնում էր հիմնական զրահազգեստի մի մասը, որը, ըստ Պողոսի խոսքերի, ճշմարտությունն է: Բացի ճշմարտության գոտուց, անհրաժեշտ է նաև *արդարության* զրահազգեստը: Այդպիսով, այդ համարում Պողոսը կապում է ճշմարտության և արդարության հայեցակարգերը:

Կարդացե՛ք հետևյալ համարները: Դրանք ինչպե՞ս կարող են օգնել մեզ հասկանալ ճշմարտության և արդարության փոխադարձ կապը, և ինչո՞ւ են դրանք այդքան կարևոր մեր հոգևոր պաշտպանության համար մեծ պայքարում: Գ Թագավորաց 3.6, Սաղմոս 15.2, 96.13, Առակաց 12.7, Եսայիա 48.1, Բ Կորնթացիս 6.7, Եփեսացիս 5.9: _____

_____

_____

Հոգևոր պայքարի համատեքստում խոսելով արդարության մասին՝ իբրև զրահի, Պողոսը նկատի ունի հոգևոր հարցերը: Ճիշտ վարվել և ար-

դար գործել, այսինքն՝ ապրել ճշմարտության համաձայն. սա նույնքան կենսականորեն կարևոր է քրիստոնյաների համար՝ չարի ուժերի դեմ պայքարում, քանի որ զրահը ռազմիկին անհրաժեշտ է մարտի դաշտում: Անտեսելով ճիշտ արարքները, արհամարհելով ճշմարտությունը՝ մենք դառնում ենք սատանայի հեշտ ավարը, քանի որ մեր սպառազինության մեջ խոշոր ճեղք է մնում: Միևնույն ժամանակ, թեև «արդարությունը» ներառում է արդար կյանքը, մենք պետք է միշտ հիշենք արդարության մեկ այլ տեսանկյան մասին, և այդ տեսանկյունը Քրիստոսի արդարությունն է, որը ծածկում է քրիստոնյային և մնում է նրա փրկության վերջին հույսը: Քանի դեռ մենք հետևում ենք ճշմարտությանն այն մասին, որ մեր փրկությունն ամփոփված է Հիսուսի մեջ, մենք կարող ենք պաշտպանված լինել մեր դեմ ուղղված սատանայի ամենագործուն հարձակումներից մեկից՝ հիասթափությունից:

Դուք երբևէ զգացե՞լ եք Հիսուսի հետ հարաբերությունները խզելու փորձությունը, քանի որ հիասթափված եք եղել սեփական կյանքից, բնավորությունից և արարքներից: Ինչո՞ւ Քրիստոսի արդարության վերաբերյալ ճշմարտության ըմբռնումն այդքան մեծ նշանակություն ունի սատանայի հարձակումներից արդյունավետ պաշտպանության համար:

Երեքշաբթի ***Նոյեմբերի 13***

Նախապատրաստումը և հավատի վահանը

Հռոմեական զինվորները սպառազինվում էին այնպես, որ համազգեստն իրենց չխանգարեր քայլել անհարթ տեղանքում: Ամենատարբեր ճանապարհներով շարժումը հեշտացնելու համար նրանք կրում էին կոշիկներ, որոնց ներբանների տակ մեծ քանակով մեխեր էին խփված: Դա նպաստում էր կոշիկների դիմացկունությանը, և Պողոսը դրանով խորհրդանշում է ավետարանելու պատրաստակամությունը (Եփեսացիս 6.15):

Կարդացե՛ք Եսայիա 52.7, Հռոմեացիս 10.15 և Եփեսացիս 6.15-ը: Պողոսը գրում է քրիստոնեական դժվարին կյանքում անսասանության մասին: Ի՞նչ իմաստով է ավետարանումը նպաստում հոգևոր պայքարում քրիստոնյայի դիմացկունությանը:

Եփեսացիս 6.15 համարը կարելի է թարգմանել տարբեր կերպ՝ «կոշիկներ հագնելով՝ *պատրաստակամ* ավետարանելու աշխարհին», «ոտքերը պատրաստ պահելով՝ ավետարանելու համար աշխարհին»,

«կոշիկներ հագնելով՝ *զինված* աշխարհին ավետարանելու համար»: Հիմնականը հունարեն *հէյտոմասիա* բառն է, որը կարող է նշանակել նախապատրաստվածություն, նախապատրաստված հիմք, պատրաստի հիմունք:

Այդպիսի հիմք է ծառայում խաղաղությունը, որը քրիստոնյան ունենում է Քրիստոսի արյան միջոցով Աստծո հետ հաշտվելու արդյունքում: Հաշտությունը քրիստոնյաներին ամուր հենարան է տալիս, հիմք, հենարան, որի վրա կանգնած՝ նրանք կարող են մղել իրենց հոգևոր պատերազմը:

Սպառազինության հաջորդ մասը վահանն է, որը Պողոսը համեմատում է հավատի հետ (Եփեսացիս 6.16): Ներկայացնելով ասպազենքի այդ մասը՝ առաքյալը տեքստն սկսում է դարձվածքով, որը կարող է թարգմանվել որպես «ավելին», «առավել ևս»: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ նկատի ունի առաքյալը՝ իր միտքն սկսելով այդ բառերից: _____

«Վահան» թարգմանված բառը ծագում է դուռ նշանակող բառից: Վահանը՝ մոտ 75 սմ լայնությամբ և մոտ 1,2 մ բարձրությամբ, բաղկացած էր տախտակի երկու իրար սոսնձված շերտերից և ուներ դռան ձև: Քանի որ նետերը այն օրերին թաթախում էին խեժի մեջ, իսկ հետո՝ այրում, փայտե վահանը պաստառում էին կաշվով՝ հանգցնելու այրվող նետերը և բթացնելու համար դրանց ծայրերը: Դա ինքնապաշտպանության գլխավոր միջոցն էր:

Հոգևոր համանմանությունը դժվար չէ նկատել: Սատանայի բոցավառ նետերից կարելի է թվարկել ցանկասիրությունը, կասկածները, ագահությունը, սնափառությունը և այլն: «Բայց Աստծո հավատը՝ վահանի նման բարձրացված, անդադարձնում է դրանք, հանգցնում է կրակը, և դրանք ընկնում են երկրի վրա՝ առանց վնաս պատճառելու» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 6, 1045): Այսպիսի հավատը ոչ միայն ներառում է դավանաբանական ճշմարտությունն ընդունելը, այլև ավելի հեռուն է գնում՝ այն իրենից ներկայացնում է հավատը գործողության մեջ: Դա հավատ է, որն ի հայտ է գալիս թշնամական հարձակումներից եռանդուն կերպով պաշտպանվելու մեջ: Իհարկե, մենք չենք կարող ո՛չ փրկել մեզ, ո՛չ սեփական ուժերով հաղթել թշնամուն, մեր ճակատամարտն ամփոփվում է նրանում, որպեսզի ամեն օր ընտրենք Տիրոջը և Նրա ճանապարհը՝ չնայելով սատանայի հնարքներին:

Սաղավարտը և սուրը

Փրկության սաղավարտը Եփեսացիս 6.17-ում, ավելի շուտ, վերցված է Եսայիա 59.17-ից, թեև Պողոսն այդ փոխաբերությունն այլ կերպ է կիրառում: Եսայիա 59-ում փրկության սաղավարտը կրում է Աստված, իսկ Եփեսացիս 6.17-ում առաքյալը քրիստոնյաներին կոչ է անում ստանալ և ընդունել: Այն դեպքում, երբ մնացած ողջ սպառազինությունը մարտիկը հերթով հագնում է, սաղավարտը նրա ձեռքն են տալիս: Հնարավոր է, Պողոսն ընդգծում է այդ փաստը՝ ցանկանալով ցույց տալ, որ փրկությունը հատկապես *պարգևված* է մարդկությանը:

Ա Թեսաղոնիկեցիս 5.8-ում Պողոսը խոսում է սաղավարտի մասին՝ որպես փրկության *հույսի*: Եփեսացիս 6.17-ում սաղավարտը պատկերված է պարզապես որպես փրկություն: Շեշտերի այդպիսի տեղափոխությունն ինչպե՞ս է օգնում բացատրել, թե ինչ կերպ փրկությունը կարող է լինել պաշտպանության զենք: _____

_____

_____

Փրկությունը Նոր կտակարանում ներկայի փորձառություն է, որն ամեն տեսակի չարից ազատագրման շնորհիվ իր գագաթնակետին կհասնի հավիտենության մեջ: Հաղթական սաղավարտը, որ Աստծո գլխին է (Եսայիա 59.17), հավատացյալ մարդուն տրվում է որպես պաշտպանություն: Քանի որ սատանայական հարձակման վերջնական նպատակը քրիստոնյաներին փրկությունից զրկելն է, փրկության մեջ իսկական վստահությունը, որը մեզ պարգևված է գործերից անկախ, դառնում է հզոր զենք: Այն օգնում է կանգուն մնալ այդ համակարտության մեջ: Իսկապես, ցանկացած հոգևոր հակամարտության մեջ քրիստոնյան կարող է սաղմոսերգուի հետ միասին բացականչել. «Ո՛վ Եհովա Տեր, իմ փրկության զորությունը. դու հովանի ես իմ գլխին կռվի օրում» (Սաղմոս 140.7):

Փրկության սաղավարտի մասին հիշատակելուց հետո Պողոսը խոսում է հոգևոր սրի մասին, որն Աստծո խոսքն է: Եփեսացիս 6.17 համարի երկրորդ մասը համեմատե՛ք Եբրայեցիս 4.12-ի հետ: Ի՞նչ կարևոր ճշմարտություն է բովանդակվում այդ համարներում, հատկապես՝ սատանայի հետ մեր պայքարի համատեքստում: _____

_____

Մատթեոս 4.1-10-ում նկարագրված Քրիստոսի փորձությունը վառ լուսաբանումն է այն բանի, թե ինչպես Աստծո խոսքը կարող է արդյունավետ զենք լինել: Այդ հատվածը նաև պետք է դրդի քրիստոնյաներին ամրապնդվել Սուրբ գրքում նրանց բացված ճշմարտության մեջ:

Այնքա՞ն շատ ուժեր են ծգտում թուլացնել Աստվածաշնչի հանդեպ մեր վստահությունը: Ի՞նչ ուժեր են գործում ձեր հասարակության մեջ, եկեղեցում կամ մշակույթում: Դուք ինչպե՞ս կարող եք ինքներդ ձեզ պաշտպանել Աստծո խոսքի հանդեպ ձեր հավատը թուլացնող ամեն տեսակ փորձերից:

Հինգշաբթի ***նոյեմբերի 15***

Մշտապես աղոթել

Եփեսացիս 6.18 տեքստը սկսվում է «Աղոթք արեք ամեն ժամանակ» դարձվածքով, ինչի հիման վրա կարելի է ենթադրել, որ աղոթելու կոչը կապված է նախորդ համարների հետ: Առաքյալն ընդգծում է, որ երկնային սպառազինությունն ստանալու համար անհրաժեշտ է ապավինել Աստծուն: «Աղոթքը նոր զենք չէ. դա ավելի շուտ հոգի է, կենսակերպ, որում անհրաժեշտ է կրել ողջ սպառազինությունը, և պետք է տեղի ունենա մարտը: Այստեղ Պողոսը խոսում է աղոթքի՝ որպես մտքի մշտական վիճակի, Աստծո հետ չդադարող հաղորդակցության մասին» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություն, հտ. 6, 1046):

Ուշադիր ուսումնասիրե՛ք Եփեսացիս 6.18-ը: Աղոթքի կյանքով ապրելու հորդորանք արտահայտող ո՞ր բառերն ու դարձվածքներն են զգոնություն և կարգապահություն ենթադրում: _____

_____

_____

Աստվածաշունչը հաճախ է մարդկանց կոչ անում՝ չդադարել աղոթել (Ղուկաս 18.1, Հռոմեացիս 12.12, Փիլիպեցիս 4.6, Կողոսացիս 4.2, Ա Թեսաղոնիկեցիս 5.17): Բայց չար ուժերի դեմ պայքարի համատեքստում, ինչի մասին խոսում է Պողոսը Եփեսացիս 6-ում, նա ընդգծում է՝ կյանքի յուրաքանչյուր դեպքը պետք է ուղեկցվի աղոթքով: Աղոթքի հանդեպ այդպիսի վերաբերմունքն իրենից ներկայացնում է քրիստոնյաների հանդեպ բավականին բարձր պահանջ, քանի որ մեր առաջին դրդումը դժվար պահերին լինում է ընկերների և գործընկերների հետ խորհրդակցելը: Բարեկամների խորհուրդները պետք է իրենց տեղն

ունենան, սակայն աղոթքը միշտ պետք է լինի պաշտպանության առաջին գիծը, գործ, որը մենք կատարում ենք «ամեն ժամանակ»:

Եփեսացիս 6.18 համարի առաջին մասում մենք կարդում ենք «աղոթք արեք ամեն ժամանակ» բառերը, այնուհետև խոսքը կրկին վերաբերում է հարատևությանը, ինչը ենթադրում է մեր արթնությունը աղոթքի մեջ: Մեզ ինչո՞ւ է անհրաժեշտ արթուն լինել: _____

Երբ Հիսուսը Գեթսեմանում էր, Նա Պետրոսին և մյուս աշակերտներին, ում քնած էր գտել, խնդրեց արթուն մնալ և աղոթք անել (Մարկոս 14.38): Դեռևս դրանից առաջ Հիսուսն աշակերտներրին նախազգուշացնում էր արթուն լինելու և աղոթելու անհրաժեշտության մասին (Մարկոս 13.33-37): Եփեսացիս 6.18 համարում շեշտադրվում է շրջապատի մարդկանց համար աղոթելը: Աղոթելով ուրիշների մասին՝ մենք, անկասկած, ինքներս ամրապնդվում ենք հոգեպես և դառնում առավել լավ նախապատրաստված հետագա պայքարին, որտեղ էլ այն դրսևորվի:

Ինչո՞ւ իր մասին մարդու անձնական աղոթքներն ավելի կարևոր են, քան նրա համար շրջապատի մարդկանց աղոթքները (թեև երկրորդը նույնպես կարևոր է): Ի՞նչ է մեզ տալիս անձնական աղոթքը, ի՞նչ չեն կարող տալ շրջապատի մարդկանց աղոթքները:

Ուրբաթ ***Նոյեմբերի 16***

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի *«Վկայություններ եկեղեցու համար»* գրքից, հտ. 8, կարդացե՛ք «Ճշմարիտ գիտելիքի որոնման կարևորությունը» գլուխը, 312-314, *«Վկայություններ եկեղեցու համար»* գրքից, հտ. 9՝ «Աշխատանքը գունամորթ ազգաբնակչության շրջանում» գլուխը, 219, 220, *«Իմ կյանքն այսօր»* գրքից՝ «Աստվա՛ծ իմ, օգնի՛ր ինձ ավելի վեր բարձրանալ» գլուխը, 105, *«Առաքյալների գործերը»* գրքից՝ «Լավագույնին ձգտելու կոչվածները» գլուխը, 311-315:

«Ամեն հոգում հաղթանակի համար պայքարում են երկու ուժեր: Անհավատությունը իր զորագնդերն է հավաքում սատանայի ղեկավարության ներքո, որպեսզի մեզ բաժանի մեր զորության Աղբյուրից: Հավատը նույնպես իր ուժերն է հավաքում Քրիստոսի՝ հավատի Առաջնորդի դրոշի ներքո: Ժամ առ ժամ ողջ տիեզերքի աչքի առջև աճում է հակամարտությունը: Դա ճեռնամարտ է, որտեղ լուծվում է կարևորագույն հարցը՝ ո՞վ կհասնի առավելության: Այդ հարցը յուրաքանչյուրը պետք

է լուծի անձամբ իր համար: Այս ձեռնամարտում պետք է մասնակցեն բոլորը՝ այս կամ այն կողմում: Հակամարտությունից խուսափել հնարավոր չէ… Մեզ դիմել են պայքարի պատրաստվելու հաստատակամ կոչով: «Այսուհետև, եղբայրներս, զորացե՛ք Տերով և Նրա զորության կարողությունով: Եվ Աստծո սպառազինությունը հագե՛ք, որ կարող լինեք սատանայի հնարքներին հակառակ կենալ»: Եվս մեկ անգամ հնչում է նախազգուշացումը. «Սրա համար Աստծո սպառազինությունն առեք, որ կարող լինեք հակառակ կենալ չարության օրում, և ամենքը կատարելով՝ հաստատ կենալ»» (Է. Ուայթ, Աստծո որդիներն ու դուստրերը, 328):

«Մենք պետք է սպառազինվենք և աներեր կանգնենք: Տերը պատվել է մեզ՝ մեզ ընտրելով որպես Իր մարտիկներ: Եկե՛ք խիզախորեն կռվենք հանուն Նրա՝ արդարությունը պաշտպանելով յուրաքանչյուր գործում: Ազնվությունն ամեն ինչում կարևոր է հոգու բարօրության համար: Երբ դուք ձգտեք սեփական հակումների դեմ հաղթանակին, Նա Իր Սուրբ Հոգով կօգնի շրջահայաց լինել յուրաքանչյուր արարքի մեջ, որպեսզի դուք թշնամուն ճշմարտությունը հայհոյելու առիթ չտաք: Զրահի նման Աստծո կողմից պաշտպանված այդ արդարությունը հագեք: Այդ արտոնությունը մատչելի է բոլորին: Այն կպաշտպանի ձեր հոգևոր կյանքը» (Է. Ուայթի մեկնությունները, *ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ,* հտ. 6, 1119):

Հարցեր քննարկման համար

1. Թեև դասին մենք ընդգծել ենք մեծ պայքարին անձնական մասնակցության տեսանկյունը, մենք՝ որպես քրիստոնյաներ, մեծ համայնքի մի մասն ենք: Ինչպե՞ս համայնքն ընդհանուր առմամբ կարող է օգնել առանձին մարդուն իր անհատական պայքարում: Որոշակի ի՞նչ կարող է անել համայնքը՝ հոգևոր տարբեր կարիքներ ունեցողներին օգնելու համար:
2. Պողոսի օգտագործած մարտական կերպարներն ինչպե՞ս են ուժեղացնում մեծ պայքարի իրական լինելու՝ Աստվածաշնչի գլխավոր լեյտմոտիվի մեր գիտակցումը: Ինչո՞ւ է կարևոր միշտ գիտակցել այդ իրողությունը: Կարելի՞ է պատկերացնել, որ զինվորը, գտնվելով մարտադաշտում, մոռացել է, որ ինքը պատերազմի մեջ է: Որքանո՞վ է կարևոր միշտ հիշելը, որ մենք հոգևոր պայքարի մասնակիցներ ենք:

ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆԸ ԾԱՌԱՅԵԼԻՍ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հռոմեացիս 16.5, Ա Կորնթացիս 1.2, Ա Պետրոս 2.9, Մատթեոս 28.19,20, Հովհաննես 17.21,22, Գործք առաքելոց 15.1-29:

Հիշելու համարը.

«Սա գրում եմ քեզ՝ հուսալով, որ շուտով քեզ մոտ կգամ: Իսկ եթե ուշանամ, որ իմանաս, թե ինչպես պետք է Աստծո տան մեջ վարվել, որն է կենդանի Աստծո եկեղեցին, այուն և հաստատություն ճշմարտության» (Ա Տիմոթեոս 3.14,15):

Հիմնական միտքը.

«Մենք պետք է հիշենք, որ եկեղեցին, որքան էլ նա անզոր ու սակավաթիվ լինի, երկրի վրա Քրիստոսի կողմից մեծագույն ուշադրության միակ առարկան է» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 2, 396):

Շատերը համարում են, որ այսօր եկեղեցին արդեն այն չէ, ինչ նախկինում էր: Ոմանք նույնիսկ խոսում են «եկեղեցուց դուրս քրիստոնեության»՝ ըստ էության հակասական հայեցակարգի մասին: Ուրիշները հանդես են գալիս «կազմակերպված կրոնի» դեմ (ասես «չկազմակերպված կրոնն» ավելի լավ է): Աստվածաշունչն ուղղակի խոսում է եկեղեցու կարևորության մասին: Դա երկընտրանք չէ, այլ փրկության ծրագրի կարևորագույն բաղադրիչ: Այդ պատճառով զարմանալի չէ, որ մեծ պայքարի ծավալմանը զուգընթաց սատանան այդքան ջանադրաբար պայքարում է եկեղեցու դեմ. չէ՞ որ նրա շնորհիվ մեղավորները շփվում են փրկության Աստծո պարգևի հետ: Պողոսը գրել է, որ եկեղեցին Աստծո տունն է, նույնիսկ ավելին՝ «այուն և հաստատություն ճշմարտության» (Ա Տիմոթեոս 3.15): Եկեղեցին մարդկային հայտնագործություն չէ, այն ստեղծել է Աստված՝ նպատակ ունենալով մոլորյալ մեղավորներին բերել Իր հետ փրկարար փոխհարաբերությունների:

Եկեղեցու բնույթը, մաս 1

Չգտելով ըմբռնել որևէ երևույթի կամ առարկայի բնույթը՝ մենք սովորաբար հետաքրքրվում ենք դրանց ծագման, գործառնման գործառույթի և նպատակի հարցերով: Բացի որոշ կերպարներից, որոնք օգնում են հասկանալ եկեղեցու բնույթը, Աստվածաշունչը դրա վերաբերյալ օգտագործում է *էկկլեսիա* առանձնահատուկ բառը, որը նշանակում է «կանչվածներ ինչ-որ բանից» կամ «կանչվածներ ինչ-որ բանի համար»: Առօրյա կյանքում այդ հունարեն բառն օգտագործվում էր գլխավորապես անվանելու քաղաքացիների խմբերը, որոնք ժողովի համար հրավիրվում էին հասարակական վայր: Նոր կտակարանն այդ բառն օգտագործում է նույնպիսի ընդհանուր իմաստով:

Յոթանասնից թարգմանության մեջ (Հին կտակարանի հունարեն թարգմանությունը) Իսրայելի «ժողովը» թարգմանվում է *էկկլեսիա* բառով, հատկապես երբ ժողովուրդը Տիրոջ առջև հավաքվում էր կրոնական նպատակներով:

Հրեաները «դուրս էին կանչվել»՝ ներկայացնելու Աստծո հատուկ ժողովուրդը: Նույն իմաստով առաջին քրիստոնյաներն օգտագործում էին այդ բառը՝ մատնանշելով այն հրեաներին և հեթանոսներին, ովքեր ստացել էին Աստծո շնորհը և կոչ՝ դառնալ Քրիստոսի հետևորդներ: Նոր կտակարանում եկեղեցին ողջ աշխարհի հավատացյալ մարդկանց համայնքն է: Կարևոր է նկատել, որ *էկկլեսիա* բառը երբեք չի օգտավորվել այն շենքի վերաբերյալ, որտեղ կատարվում է երկրպագությունը: Պետք է նշել, որ *սինագոգ* բառը նույնպես նշանակում էր մարդկանց հավաք՝ հատուկ նպատակի համար, բայց քրիստոնյաները նախընտրեցին օգտագործել *էկկլեսիա* բառը: Այդուհանդերձ, երկու բառերն էլ ցույց են տալիս, որ նորկտակարանյան եկեղեցին պատմականորեն կապված էր հինկտակարանյան եկեղեցու՝ Իսրայելի «ժողովի» հետ (Գործք առաքելոց 7.38):

***էկկլեսիա* բառն իր ընդհանուր իմաստով ցույց է տալիս Աստծո նախաձեռնությամբ դուրս կանչված մարդկանց խումբը: Ինչպե՞ս է բառի այդպիսի իմաստը բացատրում այն, որ Պողոսը դա օգտագործում է երեք տարբեր մակարդակներում՝ 1) եկեղեցի՝ լայն աշխարհագրական տարածքներում (Գործք առաքելոց 9.31), 2) եկեղեցի՝ որոշակի քաղաքներում (Ա Կորնթացիս 1.2, Գաղատացիս 1.2), 3) եկեղեցի՝ մասնավոր տներում (Հռոմեա-**

ցիս 16.4, Ա Կորնթացիս 16.19), որն, այնուամենայնիվ, Քրիստոսի եկեղեցու ողջ մարմնի մի մասն է: _____

_____

_____

«Էկկլեսիա» նշանակում է մարդկանց խումբ, ովքեր հավաքվել են միասին և կիսում են Քրիստոսի հետ փրկարար փոխհարաբերությունները: Եկեղեցին մեկն է ողջ աշխարհում, և միևնույն ժամանակ այն ներկայացված է տեղական համայնքներում:

Խորհե՛ք ձեր համայնքի մասին, որը գործում է որպես ողջ եկեղեցու ներկայացուցիչ: Ինչպիսի՞ պատասխանատվություն է դա դնում ձեզ վրա՝ որպես եկեղեցու մարմնի անդամի, և նաև՝ տեղական համայնքի վրա:

Երկուշաբթի *Նոյեմբերի 19*

Եկեղեցու բնույթը, մաս 2

Բացի «էկկլեսիա» բառից, Նոր կտակարանը եկեղեցին նկարագրում է որոշ պատկերներով, որոնք ավելի խորն են բացատրում նրա բնույթն ու նշանակությունը: Այսօր մենք կքննարկենք եկեղեցու վերաբերյալ միայն երկու կարևոր հայեցակարգ. եկեղեցին՝ որպես Աստծո ժողովուրդ, և եկեղեցին՝ որպես Քրիստոսի մարմինը:

1. «Աստծո ժողովուրդը»՝ որպես հայեցակարգ, Աստվածաշնչում օգտագործվում է Իսրայելի զավակների վերաբերյալ (Երկրորդ օրինաց 14.2): Կարդացե՛ք Ա Պետրոս 2.9-ը, որտեղ այդ հայեցակարգը կիրառվում է քրիստոնյաների վերաբերյալ: Դա ի՞նչ է նշանակում մեզ համար այսօր: _____

_____

_____

Ուշադրություն դարձրեք, որ նույնիսկ որպես քրիստոնյաների վերաբերյալ կիրառվող հայեցակարգ՝ այն նախկինի պես օգտագործվում է Իսրայել ժողովրդի նկարագրության համար (Ղուկաս 1.68, Հռոմեացիս 11.1,2): Ակնհայտ է, որ Նոր կտակարանը տվյալ հայեցակարգը կիրառում է եկեղեցու վերաբերյալ՝ ենթադրելով եկեղեցու ամբողջականությունը և նրա վերջնական նպատակի իրականացումը (տե՛ս Գաղատացիս 3.29):

2. «Քրիստոսի մարմին» արտահայտությունը (տե՛ս Հռոմեացիս 12.5, Ա Կորնթացիս 12.27 և Եփեսացիս 1.22,23) եկեղեցին պատկերում է որպես Քրիստոսի մարմին: Այդ համարներն

ինչպե՞ս են օգնում մեզ՝ ավելի լավ հասկանալու նրա բնույթն ու նշանակությունը: _____

_____

_____

Այս համարներից կարելի է մի շարք գաղափարներ քաղել և, հավանաբար, դրանցից ամենաակնհայտը եկեղեցու միասնությունն է (տե՛ս չորեքշաբթի օրվա դասը): Այդ գաղափարը դիտարկվում է նաև Նոր կտակարանի այլ հատվածներում, հատկապես՝ Ա Կորնթացիս 12-րդ գլխում, որտեղ Պողոսը գրում է. «Ինչպես էլ մարմինը մեկ է և անդամներ շատ ունի, և մեկ մարմնի բոլոր անդամները շատ լինելով՝ մարմինը մեկ է, այնպես էլ Քրիստոսը: Որովհետև մենք էլ ամենքս մեկ Հոգով մկրըտվեցինք մեկ մարմին լինելու՝ թե՛ հրեաներ, թե՛ հույներ, թե՛ ծառաներ, թե՛ ազատներ, և ամենքս մեկ Հոգիից խմեցինք: Որովհետև մարմինն էլ մեկ անդամ չէ, այլ շատ: Եթե ոտքն ասի՝ որովհետև ձեռք չեմ՝ մարմնից չեմ՝ մի՞թե նրանով մարմնից չի լինի, և եթե ականջն ասի՝ որովհետև աչք չեմ, մարմնից չեմ՝ մի՞թե նրանով մարմնից չի լինի: Եթե բոլոր մարմինն աչք լիներ, որտե՞ղ էր լսելիքը, և եթե բոլոր մարմինը լսելիք լիներ, որտե՞ղ էր հոտոտելիքը» (Ա Կորնթացիս 12.12-17):

Որոշ մարդիկ տառապում են այսպես կոչված աուտոիմունային հիվանդություններով՝ նրանց իմունային համակարգը, որը պետք է պաշտպանի օրգանիզմը, ընդհակառակը, գրոհում է այն: Խորհե՛ք, թե ինչպե՞ս նմանատիպ երևույթ կարող է տեղի ունենալ «Քրիստոսի մարմնում»:

Երեքշաբթի ***Նոյեմբերի 20***

Եկեղեցու առաքելությունը

Եթե եկեղեցին «Քրիստոսի մարմինն» է, նշանակում է, որ այն պետք է անի այն, ինչ կաներ Քրիստոսը, եթե նախկինի պես մարմնով լիներ երկրի վրա: Հենց դրա համար էլ ստեղծվել է եկեղեցին՝ որպես «ժողով»: Եկեղեցին ոչ թե պարզապես առաքելություն ունի, եկեղեցին ինքը առաքելություն է:

Կարդացե՛ք Մատթեոս 28.19,20-ը: Այդ կոչն ինչպե՞ս է արտացոլում եկեղեցու առաքելությունը: _____

_____

Առաքելությունը ներառում է մարդկանց ուղարկելու անհրաժեշտությունը, որպեսզի նրանք խոսեն Աստծո մասին: Դա անում էր Ինքն

Աստված՝ ծառայության ուղարկելով Իսրայելի մարգարեներին (Երեմիա 7.25) և առաքյալներին (Ղուկաս 9.1,2, 10.1,9): Հիսուսն ուղարկում էր Իր աշակերտներին, ինչպես Հայրն էլ ուղարկել էր Իրեն (Հովհաննես 20.21): Այսօր եկեղեցին կարող է անել ոչ պակաս և հավատարիմ մնալ իր կոչմանը:

Բերված համարներն ի՞նչ են ասում եկեղեցու առաքելության մասին: Եփեսացիս 4.11-13, Մատթեոս 10.5-8, Հակոբոս 1.27, Ա Պետրոս 2.9: _____

_____

Միանգամայն պարզ է , որ ավետարանումը կենտրոնական տեղ է զբաղեցնում եկեղեցու առաքելության մեջ: Եկեղեցին գոյություն ունի նաև քրիստոնյաների ուսուցման, ճշմարիտ երկրպագություն կատարելու և սոցիալական կարիքները հոգալուն մասնակցելու համար:

Թեև եկեղեցին բախվում է տարբեր խնդիրների, դրանցից ամենադժվարներից մեկը սեփական առաքելությունն ըմբռնելու մեջ ճիշտ հավասարակշռություն պահպանելն է: Մի կողմից, այնքա՜ն հեշտ կլիներ լիովին նվիրվել սոցիալական բարենորոգմանը, հասարակության վիճակի բարելավմանն ուղղված աշխատանքներին և նրա խնդիրների լուծմանը: Թեև այդ աշխատանքն ինքնին կարևոր է, այն երբեք չպետք է կլանի եկեղեցու գլխավոր առաքելությունը, որն ամփոփվում է կործանվողներին դեպի Հիսուսը տանելու և մարդկանց Նրա վերադարձին նախապատրաստվելու մեջ: Միևնույն ժամանակ, մեզ հարկ է խուսափել ծայրահեղություններից՝ համարելով, որ աշխարհի վերջն արդեն եկել է, և անհրաժեշտ է անտեսել առօրյա կյանքի հիմնական պարտականությունները: Մեզ անհրաժեշտ է աստվածային իմաստություն՝ իմանալու համար, թե ինչպես պահպանել ճիշտ հավասարակշռությունը:

Ինչպե՞ս եք դուք մասնակցում եկեղեցու առաքելությանը: Դուք ինչպե՞ս կարող եք անել ավելին, քան հիմա եք անում: Ինչո՞ւ է եկեղեցու առաքելության իրականացմանը մասնակցելը կարևոր ձեր հոգևոր աճի համար:

Չորեքշաբթի ***նոյեմբերի 21***

Եկեղեցու միասնականությունը

Եկեղեցին, որը ներկայացված է ինչպես Աստծո կողմից «կանչվածներ», «Աստծո ժողովուրդ», «Քրիստոսի մարմին», «Սուրբ Հոգու տա-

ճար», ունի ամեն անհրաժեշտը՝ ծառայությունը կամ առաքելությունն իրականացնելու համար: Միասնությունը շատ կարևոր է եկեղեցու համար, քանի որ, հակառակ դեպքում նա չի կարող հաջողությամբ իրականացնել իր առաքելությունը: Զարմանալի չէ, որ միասնականության հարցը հուզում էր Քրիստոսին, երբ Նրա երկրային ծառայությունը մոտենում էր իր ավարտին (Հովհաննես 17.21,22):

Հիսուսն աղոթում էր եկեղեցու միասնականության համար (Հովհաննես 17.21,22): Պողոսը նույնպես քրիստոնյաներին միասնականության էր կոչում (Հռոմեացիս 15.5,6): Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք միասնականությունը՝ հիմնվելով բերված տեքստերի վրա: Ի՞նչ է ենթադրում այդ միասնականությունը: _____

_____

_____

Միասնականությունը, որի համար աղոթում էր Քրիստոսը, և ինչին կոչ էր անում Պողոսը, ներառում է միասնությունը զգացմունքներում, մտքերում, գործողություններում և շատ այլ բաներ: Այդպիսի ներդաշնակության հնարավոր չէ հասնել սոցիալական փոխհարաբերությունների կերտման, դիվանագիտության կամ քաղաքական հնարքների օգնությամբ: Դա պարգև է, որը հավատացյալների վրա հեղվում է նրանցում բնակվող Քրիստոսից (Հովհաննես 17.22,23) և պաշտպանվում է Հայր Աստծո զորությամբ (Հովհաննես 17.11):

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 1.10 և Բ Կորնթացիս 13.11-ը: Մենք ինչպե՞ս կարող ենք հասնել այնպիսի միասնականության, որին կոչ է անում է Պողոսը: _____

_____

Պարզ է, որ մենք բոլորս տարբեր ենք, մենք շատ հարցերի վերաբերյալ տարբեր կարծիքներ ունենք, այդ պատճառով ժամանակ առ ժամանակ դժվարանում ենք միասնության հասնել: Թեև սթրեսները և փոխհարաբերություններում որոշակի լարվածությունը անխուսափելի են ներեկեղեցական փոխհարաբերությունների ցանկացած մակարդակում, մեզ բոլորիս անհրաժեշտ է մեր մեջ դաստիարակել խոնարհություն, ինքնուրացություն և փոխըմբռնման ձգտում, որը պետք է գերիշխի մեր սեփական շահերի վրա: Այնքա՜ն շատ բաժանումներ են ծագում եսասիրության, հպարտության, ուրիշների հանդեպ ինքն իրեն և սեփական կարծիքները մեծարելու ցանկության պատճառով: Մեզանից ոչ ոք կատարյալ չէ, ոչ ոք ամեն բան հիմնավորապես չի հասկանում: Ինչպիսի տարաձայնություններ էլ ծագեն մեր միջև, մենք ամենքս պետք է ամեն օր վերցնենք և կրենք մեր խաչը, մեռնենք սեփական «ես»-ի

համար, բարին փնտրենք ոչ միայն մեզ, այլ նաև շրջապատողների և ողջ եկեղեցու համար: Այդ ժամանակ շատ խնդիրներ, որոնց դեմ մենք պայքարում ենք, և որոնք դժվարացնում են Աստծո գործը, կանհետանան:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարելի է այսպիսի եզրակացություն անել. միասնականությունն սկսվում է անձամբ ամեն մեկից: Մենք պետք է ոչ թե պարզապես կոչվենք Քրիստոսի հետևորդներ, այլ ապրենք ինքնուրացության կյանքով՝ այն կյանքով, որը նվիրված է առաքինության մեծագույն նպատակին, իսկ այդ նպատակը բարձր է մեզանից յուրաքանչյուրից:

Հինգշաբթի ***նոյեմբերի 22***

Եկեղեցու ղեկավարումը

Կառավարումն անհրաժեշտ է, որպեսզի ամեն բան գործի: Դա վերաբերում է ինչպես սովորական հասարակական, այնպես էլ եկեղեցական կյանքին: Կառավարումը ներառում է կազմակերպումը, այսինքն՝ ամեն ինչ այնպես կազմակերպելու անհրաժեշտությունը, որպեսզի ապահովվի կանոններին, սահմանված կարգին և կառուցվածքներին համապատասխան անհրաժեշտ գործառնություն՝ ստեղծված առաջադրված նպատակին հասնելուն աջակցելու համար: Լիազորությունների հարցերը նույնպես մեծ նշանակություն ունեն կառավարման մեջ: Եկեղեցու գործնական կյանքի մակարդակում դրանք այսպիսի հարցեր են. ո՞վ իրավունք ունի վավերացնել այս կամ այն գործողությունները, և ո՞վ կարող է լիազորված լինել դրանք իրականացնելու համար: Այս հարցերի նկատմամբ տարբեր մոտեցումները հանգեցրել են եկեղեցու ղեկավարման տարբեր ձևերի:

Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցում գործում է կառավարման ներկայացուցչական համակարգը: Փաստացի ղեկավարումն իրականացվում է միայն իր լիազորությունները եկեղեցու անդամներից ստացած և որոշակի պատասխանատվություն կրող ներկայացուցիչների կողմից: Բավական չէ պարզապես ասել, որ եկեղեցու կառավարման համակարգը հիմնված է Աստվածաշնչի վրա, համակարգի ներսում իշխանության կիրառումը պետք է բնորոշվի աստվածաշնչյան արժեքների հանդեպ նրբանկատությամբ:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 15.1-29-ը: Մենք այդ համարներից ի՞նչ ենք իմանում եկեղեցու կազմակերպման և ղեկավար-

ման հիմնարար սկզբունքների մասին: _____

_____

_____

Ինչ էլ որ մենք այս համարներից յուրացնենք եկեղեցու կառավարման վերաբերյալ, մի բան պետք է հստակ որոշվի. եկեղեցու կազմակերպման հանդեպ ուշադրության կենտրոնում պետք է լինի Ավետարանի տարածումը: Աստվածաշնչյան տեսանկյունից եկեղեցու ղեկավարումը հաջողակ է այնքանով, որքանով իրականացվում է եկեղեցու առաքելությունը՝ Ավետարանի քարոզը:

Մենք նաև պետք է հիշենք, որ թեև Քրիստոսն Իր իշխանությունն իրականացնում է եկեղեցու և նրա ղեկավարների միջոցով, Նա երբեք նրանց չի փոխանցում Իր լիազորությունները: Նա մնում է եկեղեցու Գլուխը (Եփեսացիս 1.22): Վաղ եկեղեցին գիտակցում էր, որ չի կարող իշխանություն իրականացնել Քրիստոսից և Նրա խոսքից անկախ: Գործք առաքելոց 15.28 տեքստում ընդգծված է՝ ժողովքի համար կարևոր էր, որ իրենց որոշումը «հաճո երևաց Սուրբ Հոգուն»՝ Քրիստոսի ճշմարիտ Ներկայացուցչին: Այսօր ինչպես եկեղեցու ղեկավարները, այնպես էլ նրա շարքային անդամները չեն կարող այլ կերպ գործել:

Վերլուծե՛ք Մատթեոս 20.24-28 և 23.8-ը: Այստեղ ի՞նչ է ասվում եկեղեցու կյանքի բոլոր մակարդակներում իշխանություն իրականացնելու մասին:

Դուք ցանկանո՞ւմ եք ծառայել շրջապատողներին: Խորը մտորե՛ք եկեղեցում ձեր ծառայության շարժառիթների մասին: Որո՞նք են ձեր դրդապատճառները, և ինչպե՞ս դուք կարող եք դրանք է՛լ ավելի ներդաշնակ դարձնել Աստծո խոսքում բացահայտված սկզբունքներին:

Ուրբաթ ***Նոյեմբերի 23***

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի *«Վկայություններ քարոզիչների համար»* գրքից կարդացե՛ք «Բացի Ինձանից ուրիշ աստվածներ չունենա՛ս» գլուխը, 361-364, *«Վկայություններ եկեղեցու համար»* գրքից, հտ. 5՝ «Եկեղեցին աշխարհի լույսն է» գլուխը, 455-467:

«Եթե մարդը վստահ է իր իշխանությանը և ձգտում է կառավարել եղբայրակիցներին՝ զգալով, որ իրեն իրավունք է տրված իր կամքը պարտադիր համարել բոլորի համար, այդ դեպքում ամենից լավը և

ամենից հուսալին նրան իր պաշտոնից հեռացնելն է, որպեսզի նա վնաս չպատճառի, չկորցնի իր հոգին և վտանգի չենթարկի ուրիշների հոգիները… Աստծո ժառանգության վրա իշխելու ձգտումը հակազդեցություն կառաջացնի, եթե նման առաջնորդները չփոխվեն… Մարդու զբաղեցրած դիրքը նվազագույն իսկ չափով նրան ավելի նշանակալից չի դարձնում Աստծո աչքերում: Աստված գնահատում է միայն բնավորությունը» (Է. Ուայթ, Վկայություններ քարոզիչների համար, 362):

«Քրիստոսի եկեղեցու առաքելությունը կործանվող մեղավորներին փրկելն է: Այն պետք է մարդկանց հռչակի Աստծո սերը նրանց հանդեպ և նրանց գտնի Քրիստոսի համար՝ այդ սիրո գործունեության շնորհիվ: Ներկա ժամանակի ճշմարտությունը պետք է հասցվի երկրի ամենահեռավոր անկյունները, և այդ աշխատանքը պետք է սկսել սեփական տնից» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 3, 381):

Հարցեր քննարկման համար

1. Բոլորին հայտնի է, որ եկեղեցին ունի իր խնդիրները: Հիսուսը դա բացատրեց հետևյալ կերպ. «Մի ուրիշ առակ նրանց առաջ դրեց և ասաց. Երկնքի արքայությունը նմանվեց մի մարդու, որ իր արտում բարի սերմ ցանեց: Եվ մարդիկ քնելիս՝ նրա թշնամին եկավ և նրա ցորենի մեջ որոմներ ցանեց և գնաց» (Մատթեոս 13.24,25): Առակը կարդացե՛ք մինչև վերջ: Մենք Հիսուսի խոսքերն ինչպե՞ս ենք կիրառում մեր եկեղեցու վերաբերյալ և ինչպե՞ս ենք լուծում հարցերը նրանց հետ, ովքեր խնդիրներ են առաջացնում: Այդ առակը խոսո՞ւմ է այն մասին, որ ոչ մի դեպքում չի կարելի մարդուն հեռացնել եկեղեցուց: *Տե՛ս, օրինակ, Մատթեոս 18.17, Բ Թեսաղոնիկեցիս 3.6,14, Տիտոս 3.10,11 և Հռոմեացիս 16.17-ը:*
2. Դուք ի՞նչ կասեիք այն մարդուն, ով համարում է, որ եկեղեցին կորցրել է մաքրությունը, այդ պատճառով նա որոշում է թողնել Քրիստոսի մարմինը և իր ուղին միայնակ շարունակել:
3. Մեր եկեղեցին հավատում է «բոլոր հավատացյալների սրբությանը»: Ի՞նչ է ներառում այդ գաղափարը: Դա ի՞նչ պատասխանատվություն է դնում մեզ վրա:
4. Դասարանում հարց բարձրացեք որոշ վտանգների մասին, որոնք սպառնում են մեր եկեղեցական միասնականությանը: Հին ժամանակներում եկեղեցու բաժանմանը ի՞նչ պատճառներ են նպաստել: Մենք ի՞նչ պետք է սովորենք անցյալից՝ ապագայում նման բան թույլ չտալու համար:

ԵԿԵՂԵՑԻ. ԾԵՍԵՐ ԵՎ ԾԻՍԱԿԱՐԳԵՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 28.19,20, Հռոմեացիս 6.3-8, Մատթեոս 26.26-28, Հովհաննես 13.1-17, Ա Կորնթացիս 11.24-26:

Հիշելու համարը.

«Պետրոսն էլ նրանց ասաց. Ապաշխարեցե՛ք, և ձեզանից ամեն մեկը թո՛ղ մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք» (Գործք առաքելոց 2.38):

Հիմնական միտքը.

Ասված սահմանել է ծառայություններ, որոնք, ճիշտ հասկանալու դեպքում, ամրապնդում են մեր հավատը:

Շատ մշակույթներում գոյություն ունեն ծեսեր, որոնք երբեմն անվանում են «անցման ծեսեր»: Այդ ծեսերը ստեղծվել են՝ օգնելու մարդկանց անցնել կյանքի մի աստիճանից մյուսին: Օրինակ, չափահասության ծեսը կատարում են սեռական հասունության վրա հասնելու կապակցությամբ: Նման ծեսերը տարբերվում են՝ կախված տարածաշրջանից, սակայն դրանք բոլորն ունեն մեկ նպատակ՝ համոզվել, որ երիտասարդը դարձել է օգտակար, պատասխանատու, դեպի հասարակությունը կողմնորոշված անհատ: Պատրաստվելով «նոր կյանքին»՝ տղաները և աղջիկները սովորում են լինել չափահաս, այսինքն՝ նրանց ցույց են տալիս, թե ինչ են իրենցից սպասում՝ որպես հասարակության հասուն անդամներ:

Քրիստոնեական հասարակության մեջ նույնպես կան հատուկ ծեսեր և գործողություններ, որոնք որոշակի ձև են հաղորդում մարդկանց դավանած հավատին: Այդ սրբազան գործողությունները ոչ միայն հաստատում են այն փաստը, որ մարդը դառնում է համայնքում կատարվող ամեն ինչի լիիրավ մասնակիցը, այլև օգնում են նրան նախապատրաստել, որ նա դառնա համայնքի հավատարիմ և օգտակար անդամ: Դրանք նաև միջոցներ են, որոնք եկեղեցու անդամներին օգնում են ավելի պարզորոշ հասկանալ, թե իրենց ինչի է պարտավորեցնում Քրիստոսին նվիրվելը: Այս շաբաթ մենք կքննարկենք երեք ծես, որոնք արտահայտում են մեր հավատը՝ մկրտությունը, ոտնալվան և Տիրոջ ընթրիքը:

Սրբազան ծեսերի անվանումը

Քրիստոնեական եկեղեցու վաղ շրջանում արևելքի հավատացյալների մեջ տարածված էր հունարենը, օգտագործում էին *միստերիոն (գաղտնիք)* բառը՝ նկարագրելու քրիստոնեական սրբազան ծեսերը: Եկեղեցու արևմտյան մասում, որտեղ գերակշռում էր լատիներենը, օգտագործում էին *խորհուրդ* բառը (լատիներեն *սակրամենտում)*: *Սակրամենտում*՝ այդպես էր կոչվում երդումը, որ տալիս էին հռոմեական զինվորները՝ պարտավորվելով ենթարկվել հրամանատարին: Այդ բառը փոխառելիս քրիստոնյաները գիտակցում էին, որ այն ճշգրիտ նկարագրում է սրբազան ծեսերի բնույթը: Սակայն ժամանակի ընթացքում այդ բառն սկսեց նշանակել *գործողություն*, որն օժտված է անտեսանելի ներքին ուժով: Միջնադարյան եկեղեցին սահմանեց խորհուրդ կոչվող յոթ գործողություններ, որոնք դիտարկվում էին որպես մարդու հոգու մեջ շնորհի հեղման միջոց:

Բարենորոգման շրջանում խորհուրդները ենթարկվեցին մանրակրկիտ քննարկման և քննադատության: Շատերին թվում էր, թե «խորհուրդ» եզրույթն արդեն հարմար չէ, այդ պատճառով դրա փոխարեն հաստատվեց «ծես» եզրույթը: Անգլերեն *ordinance (ծես, կարգ)* բառը ծագում է *to ordain (նախապատեսել)* բայից, ինչը ծեսը դարձնում է հատուկ գործողություն, որը սահմանել է Ինքը՝ Քրիստոսը: «Խորհուրդ» բառի համեմատ «ծես» բառը գերադասելը փոխանցում է այն գաղափարը, որ մարդը մասնակցում է այդ գործողություններին, քանի որ դրանք Աստծո կողմից հաստատված միջոցներ են, որպեսզի մենք կարողանանք արտահայտել մեր հնազանդությունն ու հավատարմությունը Հիսուսին: Յոթերորդ օրվա ադվենտիստները մկրտությունը, ոտնլվան և Տիրոջ ընթրիքը դիտարկում են որպես ծեսեր՝ գործողություններ, որոնցում բացահայտվում է մեր հավատարմությունը Քրիստոսին: Դա մեր հավատի արտահայտման խորհրդանշական ուղին է:

Կարդացե՛ք Մատթեոս 28.19,20, Հովհաննես 13.14, Ա Կորնթացիս 11.23-26-ը: Այս հատվածները որքանո՞վ են հաստատում այն գաղափարը, որ սրբազան գործողությունները պետք է կոչվեն ծեսեր (կարգեր): _____

_____

Չնվազեցնելով ծեսերի կարևորությունը՝ մենք միշտ պետք է հիշենք, որ դրանք միջոցներ չեն, որոնց օգնությամբ մենք վաստակում

ենք փրկությունը: Մեղքը և նրա հետևանքներն անհամեմատ ավելի լուրջ գործողություններ են պահանջում, քան ծեսերը: Միայն խաչի վրա Հիսուսի մահը բավարար էր այնպիսի ընկած էակների փրկությունը կատարելու համար, ինչպիսիք մենք ենք: Մեր ըմբռնմամբ ծեսերը մեր կողմից այն ամենի ընդունման արտաքին խորհրդանիշներն են, ինչ Քրիստոսը կատարել է հանուն մեզ և Իր հետ մեր միության, իսկ դրանք հիանալի կերպով ծառայում են իրենց նպատակին: Դրանք միջոցներ են, որոնք տանում են դեպի նպատակը, ոչ թե ինքնին նպատակ են:

Երկուշաբթի ***Նոյեմբերի 26***

Մկրտությունը

Նոր կտակարանը մի քանի կերպար է օգտագործում մկրտության էությունը նկարագրելու համար: Նախ, մկրտությունը Քրիստոսի հետ հոգևոր միասնության խորհրդանիշն է (Հռոմեացիս 6.3-8), որը ներառում է մասնակցություն նրա տառապանքներին, մահվանը և հարությանը, ինչպես նաև՝ հրաժարում անցյալ կենսակերպից: Այսպիսով, մկրտությունը կապված է ապաշխարության և մեղքերի ներման (Գործք առաքելոց 2.38), վերստին ծնունդի և Հոգին ընդունելու (Ա Կորնթացիս 12.13) և, հետևաբար, եկեղեցուն միանալու հետ (Գործք առաքելոց 2.41,47):

Մկրտությունը Քրիստոսի միջոցով Աստծո հետ ուխտի և հոգևոր փոխհարաբերությունների խորհրդանիշն է (Կողոսացիս 2.11,12): Մկրտությունը Նոր կտակարանում այն ուխտի հաստատումն է, որը Հին կտակարանում ներկայացնում էր թլփատությունը: Մկրտությունը ցույց է տալիս, որ այժմ մարդը հավատարիմ է լինելու Աստծուն, նա դառնում է Քրիստոսի ծառայության համար սրբագործված համայնքի մի մասը: Հոգին ընդունելը մկրտվելիս քրիստոնյաներին հնարավորություն է տալիս ծառայել եկեղեցուն և գործել մարդկանց փրկության համար (Գործք առաքելոց 1.5,8):

Մի քանի տարի առաջ Անգլիական եկեղեցու մկրտության, հաստատման և սուրբ հաղորդության հարցերով միացյալ կոմիտեն տպավորիչ հայտարարություն արեց: Դրանում ասվում է. «Մկրտությունը պետք է ընդունեն հասուն մարդիկ, ոչ թե նորածինները: Մենք պետք է ընդունենք, որ Նոր կտակարանում չկա նորածինների մկրտության մասին խոսող համոզիչ վկայություն: (*Baptism and Confirmation Today* (London: SCM, 1955), 34), մեջբերված է ըստ (Millard J. Erickson, *Christian Theology* (Mich.: Baker Book House, 1988), 1102): Մկրտության էությունը

թույլ չի տալիս դրանում նորածինների մասնակցություն, քանի որ աստվածաշնչյան մկրտությունը մկրտվողներից պահանջում է հավատ և ապաշխարություն: Նաև հավատի զարգացման մեջ Աստծո խոսքի դերը (Հռոմեացիս 10.17) ցույց է տալիս, որ ապաշխարությունը պետք է տեղի ունենա աստվածաշնչյան և հոգևոր ուսուցմանը համապատասխան: Այդ բաղադրիչներն անհրաժեշտ են, որպեսզի մկրտվողները կարողանան բերել «ապաշխարության արժանի պտուղներ» (Ղուկաս 3.8)՝ որպես Քրիստոսի հետ իրենց փոխհարաբերությունների վկայություն:

Մկրտության բնույթը մեզ օգնում է հասկանալ ծեսի (կարգի) և խորհուրդի միջև տարբերությունը: Եթե մարդիկ մկրտությունը դիտարկում են իբրև խորհուրդ, այն նրանց համար դառնում է միջոց, որը վերափոխում է մարդուն, նրան հարություն է տալիս հոգևոր մահից դեպի կյանք: Այս իմաստով մարդու տարիքը նշանակություն չունի, քանի որ ամեն ինչ տեղի է ունենում գերբնական ձևով և մարդուց անկախ: Մյուս կողմից, մկրտությունը որպես ծես ներքին փոփոխության (գերբնական իրադարձության) ցուցանիշ կամ խորհրդանիշ է, որն արդեն տեղի է ունեցել հավատացյալի կյանքում՝ Հիսուսի հետ նրա շփման շնորհիվ: Այդ տեսակետից մկրտության թեկնածուները արդեն պետք է հավատան Քրիստոսին, այդ պատճառով, թե ով և երբ է ընդունում մկրտությունը միանգամայն կարևոր է դառնում այն հարցը:

Եթե դուք արդեն մկրտված եք, հիշե՛ք այդ իրադարձությունը: Հասկանալով, թե ինչ է այն նշանակում, ասացե՛ք, թե ինչու (որոշ առումով) մենք պետք է ամեն օր «մկրտություն» վերապրենք (տե՛ս Ա Կորնթացիս 15.31): Ինչպե՞ս կարելի է դա կենսագործել:

Երեքշաբթի ***Նոյեմբերի 27***

Խոնարհման ծեսը

Անհնար է պատկերացնել այն ցավը, որն զգում էր Հիսուսը՝ մոտենալով խաչի մահվանը, որն ամենաահռելին էր բոլոր հնարավոր ստորացումներից, և Իր աշակերտների մեջ տեսնելով նախանձ ու ներքին պայքար առաջնության համար:

Կարդացե՛ք Ղուկաս 22.24-27-ը (տե՛ս նաև Մատթեոս 18.1, 20. 21): Ի՞նչ կարևոր ճշմարտություն չէին հասկանում աշակերտները:

_____

_____

_____

Մեր աշխարհն այնքան ներծծված է մեղքով, որ նրանում ամեն բան աղավաղված է, թեև այդ աղավաղվածը մեզ ներկայանում է որպես լիովին «խելամիտ» և «ճիշտ»: Ունենալով առողջ բանականություն՝ ո՞վ կգերադասի լինել «ծառա», ոչ թե «իշխող»: Մի՞թե ամեն մարդու մեջ դրված չէ հաջողակ, հարուստ դառնալու ցանկությունը, ում սպասում և սպասարկում են ամենուրեք: Զարմանալի չէ, որ Հիսուսը որոշեց լվանալ իր աշակերտների ոտքերը Ընթրիքի ժամանակ: Նրա ասած ոչ մի խոսքն այդքան պերճախոս կերպով չէր ներկայացնի այն ճշմարտությունը, թե որն է ճշմարիտ մեծությունը Աստծո աչքերում, այդ պատճառով քարոզի փոխարեն Հիսուսը լվաց նրանց ոտքերը, ովքեր պետք է համբուրեին Իր ոտքերը:

Հովհաննես 13.1-17 հատվածն ի՞նչ է ասում ոտնալվայի՝ Տիրոջ ընթրիքի ծառայության մի մասի մասին: _____

_____

Այնքա՜ն շատ զարմանալի ճշմարտություններ են հնչում այդ համարներում: 3-րդ համարում ասվում է. Հիսուսը գիտեր, որ Հայրն «ամեն բան իր ձեռքն է տվել»: Իսկ ի՞նչ է տեղի ունենում հետո: Լիովին գիտակցելով, որ «Աստծուց դուրս եկավ և Աստծո մոտ է գնում» (հմ. 3), Հիսուսը վեր կացավ ընթրիքից, սկսեց լվանալ աշակերտների ոտքերը (հմ. 4, 5): Նույնիսկ մինչև վերջ չհասկանալով, թե իրականում ով է Հիսուսը, նրանք ցնցված էին: Մի՞թե նրանք կարող էին այդ դասը չյուրացնել:

Կարևոր է նաև նշել, որ ոտնալվայի ծառայությունը *նախորդում էր* Տիրոջ ընթրիքին: Նախքան այն ամենին հավակնելը, ինչ մեզ համար արեց Քրիստոսը, մեզ անհրաժեշտ է Տիրոջ ընթրիքին մոտենալ հնազանդության և խոնարհության զգացումով՝ գիտակցելով աստվածային շնորհի կարիքը:

Ո՞ւմ ոտքերը լվանալն է լավագույնը՝ է՛լ ավելի շատ հոգևոր օգուտ ստանալու համար:

Հորեքշաբթի *Նոյեմբերի 28*

Տիրոջ ընթրիքը

Կարդացե՛ք Մատթեոս 26.26-28-ը: Ի՞նչ ճշմարտություն է այստեղ բացում Հիսուսը: Ինչո՞ւ է կարևոր այն տեսնել Տիրոջ օգտագործած խորհրդանիշների մեջ: _____

_____

Տիրոջ ընթրիքը փոխարինեց հինկտակարանյան ժամանակների Զատկի տոնին: Զատիկն իր կատարումը գտավ Քրիստոսի՝ զատկի Գառան մեջ, ով Իր կյանքը տվեց: Իր մահից առաջ Քրիստոսն Ինքը հաստատեց այդ ծառայությունը՝ Նոր կտակարանի եկեղեցու մեծ տոնախմբությունը: Ինչպես որ Զատկի տոնը եգիպտական ստրկությունից Իսրայելի ազատագրման խորհրդանիշն էր, այնպես էլ Տիրոջ ընթրիքը մատնանշում է հոգևոր Եգիպտոսից՝ մեղքի ստրկությունից ազատագրումը:

Դռների շեմերին և դրանդիներին քսված զատկի գառան արյունը տան բնակիչներին պաշտպանեց մահից, իսկ գառան միսը սնեց նրանց և ուժ տվեց հեռանալ Եգիպտոսից (Ելից 12.3-8): Այդպես էլ Քրիստոսի մահն ազատություն բերեց մահից. հավատացողները փրկվում են՝ ընդունելով Նրա մարմնի և արյան խորհրդանիշը (Հովհաննես 6.54): Տիրոջ ընթրիքը հռչակում է, որ խաչի վրա Հիսուսի մահը մեզ պարգևում է փրկություն, ներում և հաղթանակ մեղքի հանդեպ:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 11.24-26-ը: Խաչի մասին ի՞նչ կարևոր դավանաբական ճշմարտություն է բացահայտված այդ համարներում: _____

_____

Այստեղ մենք պարզորոշ տեսնում ենք Քրիստոսի մահվան փոխարինական բնույթը: Նրա մարմինը կոտրվեց, Նրա արյունը թափվեց մեզ համար. խաչի վրա Նա Իր վրա ընդունեց այն, ինչը պետք է բաժին ընկներ մեզ: Ամեն անգամ, մասնակցելով Տիրոջ ընթրիքին, մենք պետք է հիշենք, թե մեզ համար ինչ է կատարել Քրիստոսը:

Երբ Տիրոջ ընթրիքին նախորդում է ոտնալվան, այն մեր սրտերը նախապատրաստում է հաղորդությանը: Նաև մենք պետք է հասկանանք, որ այդ ծեսը միավորում է մեզ: Խաչը, որն այդքան վառ կերպով ներկայացված է հացի և գինու խորհրդանիշներում, հիշեցնում է մեզ՝ ինչ երկրային դժվարություններ էլ բաժանեն մեզ, մենք բոլորս մշտապես շնորհի կարիքն ունեցող մեղավորներ ենք: Տիրոջ ընթրիքն օգնում է մեզ գիտակցել մեր պարտքը ոչ միայն Տիրոջ, այլև միմյանց հանդեպ:

Հինգշաբթի ***Նոյեմբերի 29***

Երկրորդ գալստյան կանխավայելումը

«Որովհետև քանի անգամ որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, Տիրոջ մահը պատմեցեք՝ մինչև որ Նա կգա» (Ա Կորնթացիս

11.26): Ի՞նչ մեծ հույս է ներկայացված այս տեքստում: _____

_____

_____

Բերված համարը մեզ բացում է, թե որքան սերտորեն են միմյանց կապված երկրորդ գալուստը և Տիրոջ ընթրիքի ծառայությունը: Դա առանձնահատուկ իմաստ ունի նաև այն պատճառով, որ երկրորդ գալուստն իսկապես այն ամենի գագաթնակետն է, ինչ տեղի ունեցավ խաչի վրա: Նույնիսկ կարելի է ասել, որ Քրիստոսի առաջին գալուստը, երբ Նրա մարմինը կոտրվեց, և Նրա արյունը թափվեց հանուն մեզ, իմաստ չէր ունենա առանց երկրորդ գալստյան: Առաջին գալուստը ճանապարհ նախապատրաստեց երկրորդի համար:

Մեզ ի՞նչ կտար Քրիստոսի առաջին գալուստը, եթե չլիներ երկրորդ գալուստը: _____

_____

_____

Որոշ իմաստով Ընթրիքի ծառայությունը կամուրջ է Գողգոթայի և երկրորդ գալստյան միջև: Ամեն անգամ մասնակցելով Ընթրիքին՝ մենք կանգ ենք առնում խաչի մոտ՝ խորհելով հանուն մեզ Քրիստոսի սխրանքի մասին: Միևնույն ժամանակ, Հիսուսի Գողգոթայի սխրանքը չի կարող առանձնացվել երկրորդ գալուստից: Փաստորեն, Հիսուսի խաչի սխրանքը մինչև երկրորդ գալուստը չի հասնի իր վերջնական բարձրակետին:

Կարդացե՛ք Մատթեոս 26.29-ը: Հիսուսն ինչի՞ մասին է խոսում այս համարում: _____

_____

_____

Խորհե՛ք այս տեքստում Տիրոջ կողմից մեզ առաջարկված խոստման, վստահության և հույսի մասին: Այս խոսքերում զգացվում է փրկագնվածների և Փրկագնողի միջև մտերմությունը, որը կշարունակվի հավիտենության մեջ: *Հիսուսը խոստանում է մեզ, որ չի խմելու խաղողի որթից այնքան ժամանակ, մինչև որ մեզ հետ նոր գինի կիմի հավիտենական թագավորության մեջ:* Եթե մենք գիտակցում ենք, որ Նա Տիեզերքի Արարիչն է (Կողոսացիս 1.16), ապա այդ խոստումը մեզ համար դառնում է է՛լ ավելի հրաշալի: Այսպիսով, բացի մնացյալ ամեն ինչից, Ընթրիքի ծառայությունը պետք է մատնանշի այն մեծ հույսը, որն սպասվում է մեզ Հիսուսի երկրորդ գալստյան ժամանակ:

Դուք հիասթափված, ճնշվա՞ծ եք: Մի՛ մոռացեք, որ ապրում եք ընկած աշխարհում: Ինչո՞ւ է մարդու համար այդքան կա-

ռևոր՝ կյանքի բոլոր հանգամանքներում նայել խաչին: Դա ի՞նչ նշանակություն ունի մեզ համար և՛ այժմ, և՛ ապագայում:

Ուրբաթ *Նոյեմբերի 30*

Հետագա ուսումնասիրության համար

«Սկզբում էր Խոսքը» գրքից կարդացե՛ք գլուխ 15-ը՝ «Մկրտություն» և 16-ը՝ «Տիրոջ ընթրիքը»:

«Մկրտությունն ամենասուրբ և կարևոր ծեսն է, և մարդիկ պետք է լիովին հասկանան դրա նշանակությունը: Այն նշանակում է ապաշխարություն մեղքերից և Քրիստոս Հիսուսում նոր կյանքի սկիզբ: Այստեղ չպետք է անտեղի շտապողականություն լինի խորհուրդն ընդունելու մեջ: Թո՛ղ ծնողներն ու երեխաները ուշադրություն դարձնեն անհրաժեշտ գնին» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 6, 93):

«Ջատիկը ցույց էր տալիս Իսրայելի զավակների ազատագրումը, այն նաև խորհրդանշորեն ցույց էր տալիս Քրիստոսին՝ Աստծո Գառին, ով խաչվեց հանուն ընկած մարդու փրկագնման: Դռների կողափայտերին ցողված արյունը ծառայում էր որպես Քրիստոսի քավչարար արյան նախակերպար: Այն վկայում էր այդ արյան արժանիքներից մեղավոր մարդու մշտական կախման մասին՝ սատանայի ուժի դեմ պաշտպանություն ձեռք բերելու համար, և նաև վերջնական փրկության մասին» (Է. Ուայթ, Մարգարեության հոգին, հտ. 1, 201):

Հարցեր քննարկման համար

1. Վերջին անգամ ե՞րբ եք մասնակցել ոտնալվայի ծառայությանը: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր:
2. Կարդացե՛ք Ա Պետրոս 3.20,21-ը: Ի՞նչ համեմատություն է օգտագործում Պետրոսը՝ բացատրելու մկրտության նշանակությունը:
3. Առաջին քրիստոնյաների դեմ զանազան անարդար մեղադրանքներ էին ներկայացվում՝ ներառյալ մարդակերության մեղադրանքը: Այդպիսի մեղադրանքի պատճառներից մեկը հետևյալ համարներն էին. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթե մարդի Որդու մարմինը չուտեք, և նրա արյունը չխմեք, կյանք չունեք ձեր անձերում: Իմ մարմինը ուտողը և իմ արյունը խմողը հավիտենական կյանք ունի, և ես վերջին օրը հարություն կտամ նրան: Որովհետև իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, և իմ արյունը ճշմարիտ ըմպելիք է: Իմ մարմինն ուտողը և իմ

արյունը խմողը մնում է Ինձանում, և ես՝ նրանում» (Հովհաննես 6.54-57): Ինչո՞ւ է կարևոր այսպիսի համարների հոգևոր իմաստը հասկանալը:

4. Դասարանում մանրամասնորեն քննարկե՛ք Տիրոջ ընթրիքի համայնքային տեսանկյունը: Ինչպե՞ս կարելի է եկեղեցու անդամներին օգնել ավելի լավ հասկանալ, թե ինչ են բովանդակում մեր պարտավորությունները միմյանց և ողջ հասարակության հանդեպ:

ՕՐԵՆՔ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Սաղմոս 19.7,8, Ելից 23.1-9, Ա Հովհաննես 5.3, Հռոմեացիս 3.19,20, Ելից 20.11,12, Երկրորդ օրինաց 5.15:

Հիշելու համարը.

«Եվ սրանով գիտենք, թե ճանաչեցինք նրան, եթե Նրա պատվիրանները պահենք: Ով որ ասում է, թե՝ ճանաչեցի նրան, և նրա պատվիրանները չի պահում, սուտասաց է, և ճշմարտություն չկա նրանում» (Ա Հովհաննես 2.3,4):

Հիմնական միտքը.

Աստծո բարոյական օրենքը բացահայտում է մեր մեղքերը և Փրկչի մեր կարիքը: Այդ պատճառով օրենքն ու ավետարանն անբաժանելի են:

Օրենքը և Աստծո բնավորությունը գտնվում են մեծ պայքարի կենտրոնում, և երբ այն ավարտվի, Աստծո բնավորությունն ու օրենքը արդար կճանաչվեն ողջ տիեզերքի առջև: Իսկ առայժմ պայքարը շարունակվում է, և յուրաքանչյուր մարդ ինքն է պաշտպանում այս կամ այն կողմին, և դա որոշում է, թե ում ենք մենք հետևում: Ինչպես երգում էր Բոբ Դիլանը՝ «Ինչ-որ մեկին դու պետք է ծառայես. գուցե՝ սատանային, գուցե՝ Աստծուն: Բայց ինչ-որ մեկին դու պետք է ծառայես»:

Մարդիկ, ովքեր ընտրել են Տիրոջը ծառայելը, դա անում են Նրա հանդեպ սիրուց դրդված և ընդունելով այն, ինչ նրանց համար կատարել է Քրիստոսը: Քրիստոսի հետ թաղվելով մկրտության միջոցով, մկրտվելով Նրա մահին՝ նրանք գիտեն, որ իրենք այլևս կարիք չունեն ծառայել նախկին տիրոջը՝ մեղքին: Այժմ նրանց պարգևված է ազատություն՝ Աստծուն և Նրա օրենքին հնազանդվելու համար:

Այս շաբաթվա դասին մենք կվերլուծենք օրենքի բնույթը, նրա նշանակությունը և Աստծո փրկարար շնորհի փոխադարձ կապը բարի լուրի հետ: Որովհետև ճիշտ ըմբռնելու դեպքում Աստծո օրենքն օգնում է տեսնել, թե Աստծո շնորհը մեզ հատկապես ինչ է առաջարկում Քրիստոսում:

Աստծո օրենքը և կանոնները

«Թորան» եբրայերեն բառ է, որը սովորաբար օգտագործվում է Հին կտակարանում: Այն հաճախ թարգմանվում է որպես «օրենք»: Նոր կտակարանում «թորա» բառի թարգմանության համար օգտագործվում է հունարեն *նոմոս* (*օրենք*) բառը: «Թորա» նշանակում է «խորհուրդ» կամ «ձեռնարկ»: Քանի որ Աստվածաշունչը պատմում է մարդու հետ Աստծո փոխհարաբերությունների մասին, օրենքն Աստվածաշնչում սովորաբար ցույց է տալիս Աստծո պատվերներն Իր ժողովրդի համար: Քանի որ Ինքն Աստված բարի է ու արդար, ինչպես նաև առաջնորդում ու խրատում է Իր ժողովրդին առաքինության և արդարության մեջ, Նրա օրենքը բացահայտում է Նրա առաքինությունն ու արդարությունը: Կամ, ինչպես մենք ենք ասում, օրենքը Աստծո բնավորության արտացոլումն է:

Հետևյալ համարները մեզ ի՞նչ են ասում Աստծո օրենքի և Իր՝ Աստծո մասին: Սաղմոս 19.7,8, Հռոմեացիս 7.12, Սաղմոս 119. 151,152,172: _____

_____

_____

Աստվածաշնչի միջոցով Աստված Իրեն բացեց մարդկությանը: Կարդալով սրբազան տեքստերը՝ մարդը հանդիպում է տարբեր թեմաների, որոնք հիմնականում պատվերներ են, որ շոշափում են մարդկային կյանքի բազում տեսանկյունները՝ բարոյագիտությունը, առողջությունը, սեռականությունը, սնունդը և այլն: Այդ խրատներից մի քանիսը, անկասկած, համապարփակ են, ուրիշներն ունեն ժամանակային և տարածական շրջանակներ: Բայց քանի որ դրանք բոլորը Աստծո պատվերներ են, անհրաժեշտ է շատ ջանադրաբար վերաբերվել այն սկզբունքների զարգացմանը, որոնք օգնում են մեզ հասկանալ, թե ինչն է համապիտանի, ինչը՝ սահմանափակ: Յոթերորդ օրվա ադվենտիստները և շատ ուրիշ քրիստոնեական եկեղեցիներ տարբերում են ծիսական օրենքները (պատվերները, որոնք շարադրում են փրկության ծրագիրը խորհրդանշաններով և ծիսական գործառույթներով), սանիտարահիգիենիկ կանոնները (հիգիենայի նորմեր և առողջ կենսակերպի ցուցումներ), քաղաքացիական օրենքները (պատվերներ, որոնք վերաբերում էին հին Իսրայելի կյանքի հասարակական կյանքին) և բարոյական օրենքները (պատվերներ մարդու վարքի վերաբերյալ՝ հիմնված Աստծո սկզբունքների վրա):

Ղևտացոց գիրքը պարունակում է մեծ թվով ծիսական օրենքներ, որոնք հատկապես վերաբերում էին սրբարանում ծառայությանը և նրա ծիսական համակարգին: Քաղաքացիական օրենքների էությունն ու դրանց հիմքում ընկած արդարության սկզբունքը կարելի է տեսնել, օրինակ, Ելից 23.1-9-ում: Եվ, վերջապես, գոյություն ունի բարոյական օրենք՝ տասը պատվիրանները, որոնք քրիստոնյաների մեծամասնությունը (գոնե տեսականորեն) դեռևս պատվում են որպես ողջ մարդկության համար տրված Աստծո օրենք:

Կարդացե՛ք Ելից 23.1-9-ը: Մենք ի՞նչ համապարփակ բարոյական սկզբունքներ կարող ենք քաղել հին Իսրայելին տրված պատվերներից:

Երկուշաբթի *դեկտեմբերի 3*

Բարոյական օրենքն այսօր

Քրիստոնյաների մեծամասնությունը համարում է, որ տասնաբանյան Աստծո համապիտանի բարոյական օրենսգիրքն է: Այդպիսի դիրքորոշումը երևում է, օրինակ, բազում դատավեճերում Միացյալ Նահանգներում, որտեղ քրիստոնյաները ձգտում են իրավունք ստանալ կախ տալ տասը պատվիրանների պատկերումով պաստառները հասարակական վայրերում, հատկապես՝ միջնակարգ դպրոցներում: Սրանից մի քանի տարի առաջ Ալաբամա նահանգի իշխանությունները դատավեճի մեջ ներքաշվեցին նահանգի գլխավոր դատավորի հետ, ով հրաժարվել էր տասը պատվիրանների հուշարձանը հեռացնել դատարանի դահլիճից՝ չնայած Գերագույն դատարանի հրամաններին: Շատ մարդկանց գիտակցության մեջ տասը պատվիրանները իրենց օրինական ուժը չեն կորցրել և մնում են բարոյականության Աստծո օրինական չափանմուշը: Եվ դա ունի իր պատճառները: Թեև տասը պատվիրանները (տասնաբանյան) օրինակարգվել են (այսինքն՝ հավաքվել են մեկ համակարգված տեքստի մեջ) Սինայի վրա, Ծննդոց գիրքը ցույց է տալիս, որ պատվիրանների մեծ մասը հայտնի է եղել նաև նախկինում:

Հետևյալ համարներն ի՞նչ են հայտնում օրենքի գոյության մասին մինչև Սինա լեռան վրա տեղի ունեցած իրադարձությունները: Ծննդոց 35.1-4, 2.3, 4.8-11, 39.7-9, 44.8, 12.8: _____

Պարզ տրամաբանությունը թույլ չի տալիս տասը պատվիրանները դիտարկել որպես զուտ հրեական օրենք, որը վերաբերում է բացառա-

պես մեկ ժողովրդի՝ որոշակի վայրում և որոշակի ժամանակում: Մի՞թե այնպիսի բարոյական խնդիրները, ինչպես գողությունը, սպանությունը, շնությունը և կեղծ վկայությունը, ընդհանուր առմամբ, սխալ չեն համարվում՝ անկախ մշակույթից: Բացի դրանից, եթե Աստվածաշունչը բացարձակապես հստակորեն հաստատում է, որ մեղքը որոշվում է օրենքի միջոցով (Հռոմեացիս 7.7), ապա Աստվածաշնչին հավատացող ցանկացած քրիստոնյայի օրենքի ավելորդության մասին գաղափարը կթվա անմիտ և անհետևողական:

Հակոբոս 2.11 տեքստն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալ Աստծո օրենքի հավերժական լինելը: _____

_____

Ա Հովհաննես 5.3-ում ասվում է, որ Աստծո պատվիրաններին հնազանդությունը Նրա հանդեպ մեր սիրո արտահայտությունն է: Ի՞նչ է դա նշանակում: Պատվիրաններին հնազանդվելն ինչո՞ւ է համարվում սիրո արտահայտություն:

Երեքշաբթի ***դեկտեմբերի 4***

Օրենք և ավետարան

Թեև շատ մարդիկ հասկանում են, որ տասը պատվիրանները պարտադիր են քրիստոնյաների համար, սակայն փրկության ծրագրում օրենքի դերը շատերի համար մնում է անհասկանալի: Եթե մենք չենք փրկվում օրենքը պահելով, ապա ո՞րն է նրա նպատակը:

Հետևյալ տեքստերն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ օրենքի դերը շնորհով փրկվող մարդկանց կյանքում:

Հռոմեացիս 3.19,20 _____

Սաղմոս 119.5,6 _____

Հռոմեացիս 7.7 _____

Օրենքը երբեք փրկության միջոց չի եղել: Սուրբ Հոգու գործունեության միջոցով օրենքը մեղավորի մեջ Քրիստոսի շնորհի (ավետարանի) կարիքի գիտակցումն է առաջացնում: Ցույց տալով, թե ինչն է ճիշտ, լավ և ճշմարիտ, օրենքն օգնում է մարդկանց գիտակցել փրկվելու իրենց կարիքը: Այդպիսով, օրենքը մեզ ցույց է տալիս ավետարանի կարիքը, շնորհի կարիքը: Այդ շնորհը պարգևվում է Հիսուսի միջոցով: Օրենքի նշանակությունը, նույնիսկ Հին կտակարանում, մարդուն փրկության իր կարիքը մատնանշելն է. օրենքը երբեք չի եղել փրկությունն ապահովելու միջոց:

«Հարցնել, թե օրենքը կարո՞ղ է փրկություն պարգևել, նշանակում է՝ սխալ հարց տալ, որքանով այդ մասին կարելի է դատել ինչպես Հին, այնպես էլ՝ Նոր կտակարաններից: Երկու կտակարաններն էլ ոչ մի տեղ չեն հաստատում, չեն ենթադրում և նույնիսկ չեն ակնարկում, որ երբևէ նման բան է տեղի ունեցել… Նույնքան սխալ է պնդել, որ Եբրայեցիս թղթի հեղինակը (10.1-4) խմբագրել է օրենքը, ինչպես եթե նա սովորեցներ, թե ցուլերի և այծերի արյունը կարող է վերացնել մեղքը… Զոհերը արտացոլումն էին, նախակերպարը, օրինակն այն միակ կատարյալ զոհի, որը կբերվի» (Walter C. Kaiser, *Five Views on Law and Gospel* (Mich.: Zondervan, 1993), 394, 395):

Վերլուծե՛ք, թե մարդկությանն ինչի հասցրեց Աստծո օրենքի խախտումը: Աստծո օրենքի խախտումն ինչպե՞ս է ազդել ձեր կյանքի վրա: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում այն մասին, թե որքանով է արդիական մնում այդ օրենքը:

Չորեքշաբթի ***դեկտեմբերի 5***

Շաբաթը և օրենքը

Ինչպես մենք տեսանք երկուշաբթի օրվա դասին, շատ քրիստոնյաներ նախկինի պես հավատում են, որ անհրաժեշտ է Աստծո օրենքը կատարել: Եվս մեկ անգամ անհրաժեշտ է նշել. քանի դեռ մարդը հասկանում է մեղքի իրական լինելը, իրերի այլ դրություն հնարավոր չէ:

Միևնույն ժամանակ, ինչպես մեզ քաջ հայտնի է, օրենքին քրիստոնյաների հնազանդության ողջ հարցը հանկարծ ի չիք է դառնում, երբ խոսքը վերաբերում է չորրորդ պատվիրանին, այն է՝ շաբաթը պահելուն: Հեգնանքն այն է, որ Ալաբամայի դատավորը, ով խոշոր տհաճությունների մեջ ընկավ՝ պնդելով, որ դատարանի դահլիճից չհեռացնեն տասը պատվիրանները, ինքն ապրում էր այդ պատվիրանները խախտելով: Որքան էլ նա խստորեն վերաբերվեր կիրակի օրը պահելուն, նա չէր պահում յոթերորդ օրը հանգստանալու Աստվածաշնչյան պատվիրանը: Իսկ Աստվածաշունչն ինքը Հակոբոս առաքյալի միջոցով հստակ կերպով ասում է. «Որովհետև ով ողջ օրենքը պահում է և մեկում մեղանչում, ամբողջ օրենքին եղավ պարտական» (Հակոբոս 2.10): Այդ պատճառով դատավորը մեղավոր էր այն օրենքի սկզբունքներից յուրաքանչյուրի խախտման մեջ, որը, նրա պնդմամբ, պիտի մնար դատարանի դահլիճում:

Ելից 20.9,10-ում շարադրված է շաբաթ օրվա պատվիրանի բացատրությունը: Տեքստը որոշակիորեն հայտնում է, թե երբ է ի հայտ եկել շաբաթը (յոթերորդ օրը), և թե ինչպես պետք է այն սուրբ պահել (կանոնավոր աշխատանքի դադարեցում): «Շաբաթը ուժերի վերականգնման օր չէ նրանց համար, ովքեր չափազանց թույլ են՝ առանց հանգստանալու օրեցօր աշխատելու համար: Ավելի շուտ, այն ներկայացված է որպես բոլորի համար ճիշտ կանգառ, որի նպատակն է՝ կենտրոնանալ ամեն սուրբի վրա (ողջ հարցը *Աստծուն պատկանելն* է. հենց դա է սրբությունը)՝ վայելելու ինչպես այդ օրվա աստվածային օրհնությունները, այնպես էլ դրա ընձեռած հնարավորությունները: (Douglas K. Stuart, *The New American Commentary, Exodus,* vol. 2 (Broadman & Holman Publishers, 2006), 460):

Շաբաթ օրվա հոգևոր ներուժը մարմնավորված է նրանում, ինչ այն խորհրդանշում է: Հետևյալ տեքստերն ի՞նչ են մեզ ասում շաբաթ օրվա հոգևոր նշանակության մասին: Ձեր սեփական շաբաթապահության փորձն ինչպե՞ս է օգնել ձեզ՝ ավելի շատ գնահատելու այն, ինչ սովորեցնում են այդ: Ելից 20.11, Երկրորդ օրինաց 5.15, Ելից 31.13, Եզեկիել 20.20, Եբրայեցիս 4.3-9: _____

Հինգշաբթի ***դեկտեմբերի 6***

Շաբաթը և ավետարանը

Երեկվա դասի վերջին հարցում մենք դիտարկում էինք Ելից 20. 11,12-ը և Երկրորդ օրինաց 5.15-ը: Մենք տեսնում ենք, որ շաբաթը մատնանշում է երկու իրադարձություն՝ արարումը և փրկագնումը: Դրանք երկու ամուր կապակցված աստվածաշնչյան հայեցակարգեր են: Աստված ոչ միայն մեր Արարիչն է, այլ նաև՝ մեր Փրկիչը: Այդ երկու կարևոր հոգևոր ճշմարտությունները մեր մեջ տպավորվում են ամեն շաբաթ, ամեն յոթերորդ օր, երբ մենք շաբաթ օրը հանգստանում ենք «պատվիրանի համեմատ» (Ղուկաս 23.56)՝ այն կանանց նման, ովքեր «Գալիլեայից նրա հետ եկել էին» (Ղուկաս 23.55):

Կարդացե՛ք Կողոսացիս 1.14-16 և Հովհաննես 1.1-14-ը: Այս տեքստերն ինչպե՞ս են ցույց տալիս, որ Հիսուսը մեր Արարիչն ու Փրկիչն է: _____

_____

«Քանի որ աստվածային օրենքը նույնքան սուրբ է, որքան և Ինքն՝ Աստված, միայն Աստծուն հավասարը կարող էր փրկագնել այն

խախտածներին: Ոչ ոք, բացի Քրիստոսից, չէր կարող ընկած մարդուն փրկագնել օրենքի անեծքից և կրկին նրան ներդաշնակության բերել երկնքի հետ» (Է. Ուայթ, *Աստծո զարմանալի շնորհը*, 42): Միայն Արարիչը, միայն Աստծուն հավասարը, միայն Նա, ով արարել էր «…ինչ որ եղավ» (Հովհաննես 1.3), միայն Հիսուսը կարող էր փրկագնել ընկած մարդկությանը:

Քրիստոսին մատնանշելով որպես մեր Արարիչ և Փրկիչ՝ շաբաթը շնորհի ավետարանի հզոր խորհրդանիշ է: Փաստորեն, շաբաթ օրվա մեր հանգիստը վկայում է այն մասին, որ մենք իսկապես փրկվում ենք ոչ թե օրենքի գործերով, այլ շնորհիվ նրա, ինչ մեզ համար կատարել է Քրիստոսը: Այդ պատճառով շաբաթօրյա հանգիստը դառնում է այն խաղաղության խորհրդանիշը, որ մենք ունենք Հիսուսում (*տե՛ս Եբրայեցիս 4.3-9*):

Շաբաթը նաև վերականգնում է, վերաարարում, գործընթաց, որը ոչ թե պարզապես սկսվում է այնժամ, երբ մենք ընդունում ենք Հիսուսին (*տե՛ս Բ Կորնթացիս 5.17, Գաղատացիս 6.15*), այլ որն իր գագաթնակետին է հասնում երկնքի ու երկրի վերստեղծմամբ (*տե՛ս Եսայիա 65.17, Հայտնություն 21.5*): Այդ համարներն է՛լ ավելի պարզորոշ ցույց են տալիս, թե ինչպես են արարումն ու փրկագնումը կապակցված միմյանց. այդ երկու կարևոր ճշմարտությունները մարմնավորված են տասը պատվիրաններից մեկի՝ շաբաթ օրվա մասին պատվիրանի մեջ:

Մի բան է՝ ասել, թե դուք պատվում եք շաբաթը և նույնիսկ հանգստանում եք այդ օրը: Այդպես վարվում էին դպիրներն ու փարիսեցիները: Այլ բան է՝ սեփական կյանքում զգալ շաբաթի լիությունն ու զորությունը: Ի՞նչ կարելի է ասել ձեր շաբաթապահության մասին: Դուք ի՞նչ կարող եք անել՝ է՛լ ավելի շատ հոգևոր և ֆիզիկական օրհնություններ քաղելու համար, որոնք մեզ ուղարկում է Աստված շաբաթ օրը:

Ուրբաթ ***դեկտեմբերի 7***

Հետագա ուսումնասիրության համար

Էլեն Ուայթի *«Հանդիսավոր կոչ»* գրքից կարդացե՛ք 140-146 էջերը, *«Մեծ պայքար»* գրքից՝ «Աստծո անփոփոխ օրենքը» գլուխը, 433-450:

«Աստված ցանկանում է, որ մենք գիտակցենք, որ Ինքն իրավունք ունի մեր գիտակցության, հոգու, մարմնի և ոգու՝ այն ամենի վրա, ինչ մենք ունենք: Մենք Նրանն ենք արարման և փրկագնման միջոցով: Որ-

պես մեր Արարիչ՝ Նա մեզանից նվիրված ծառայություն է ակնկալում: Որպես մեր Փրկիչ՝ Նա իրավամբ մեզանից սպասում է սեր, լիակատար սեր… Մեր մարմինները, հոգիները, կյանքերը Նրան են պատկանում ոչ միայն այն պատճառով, որ Նրա անհատույց պարգևն են, այլ նաև այն պատճառով, որ Նա մշտապես լրացնում է մեր կարիքները, ուժ է տալիս՝ օգտագործելու մեր ընդունակությունները…» (Է. Ուայթ, *«Ասպծո զարմանալի շնորհը»*, 245):

«Տերն ասում է. «Եթե հետ դարձնես շաբաթից քո ոտքը, որ բաղձանքդ չկատարես իմ սուրբ օրը, և շաբաթը կոչես զվարճություն, և Տիրոջը նվիրվածը՝ պատվական, և նրան պատվես՝ քո ճանապարհները չկատարելով, և քո բաղձանքը չլրացնելով և դատարկաբանություն չանելով, այն ժամանակ կզվարճանաս Տերով, և ես քեզ վեր կհանեմ երկրի բարձր տեղերը, և կուտեցնեմ քո հայր Հակոբի ժառանգությունը, որովհետև տիրոջ բերանը խոսեց» (Եսայիա 58.13,14): Բոլոր նրանց համար, ովքեր շաբաթն ընդունում են որպես Քրիստոսի ստեղծարար և փրկարար զորության խորհրդանիշ, այն կդառնա ցնծություն: Նրանում տեսնելով Քրիստոսին՝ նրանք կցնծան Նրանում: Շաբաթը մատնանշում է արարման գործերը՝ որպես փրկագնման Նրա հզոր ուժի վկայություն: Եվ թեև շաբաթը մեզ հիշեցնում է կորուսյալ Եդեմի մասին, այն նաև հռչակում է Փրկչի միջոցով ձեռք բերվող խաղաղությունը: Եվ բնության մեջ ամեն ինչ կրկնում է նրա կոչը. «Ինձ մոտ եկեք, ամեն հոգնածներ և բեռնավորվածներ, և Ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթեոս 11.28)» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 289):

Հարցեր քննարկման համար

1. Երեմիա 31.33 համարում գրված է. «Այլ այս է այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո, ասում է Տերը: Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում, և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն, և ես պիտի լինեմ նրանց Աստված, և նրանք պիտի ինձ համար ժողովուրդ լինեն»: Որոշ մարդիկ ջանում են այս տեքստն օգտագործել որպես ապացույց, որ օրենքը (իսկ իրականում՝ յոթերորդ օրը՝ շաբաթը) չեղյալ է հայտարարվել Նոր կտակարանում: Ի՞նչը ճիշտ չէ դատողությունների այդ շղթայում: Ավելին, այդ տեքստն ինչպե՞ս է պաշտպանում օրենքի և շաբաթի մասին ճշմարտությունը:
2. Հավատալով, որ օրենքը (այդ թվում՝ նաև շաբաթը) անհրաժեշտ է պահել, մենք ինչո՞ւ պետք է զգույշ լինենք՝ չընկնելու օրինապաշտու-

թյան մեջ: Դասարանում խոսե՛ք այն մասին, թե ինչ է օրինապաշտությունը և ինչպես կարող ենք խուսափել դրանից:

3. Խորհե՛ք մեծ պայքարում օրենքի դերի մասին: Ինչո՞ւ Աստծո օրենքի դեմ պայքարում սատանան ամենից ավելի հարձակվում է շաբաթ օրվա պատվիրանի վրա: Ինչո՞ւ է նրան հաջողվել խաբել այդքան շատ մարդկանց:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Երկրորդ օրինաց 8.11-17, Փիլիպեցիս 2.3,4, Ա Կորնթացիս 15.51,52, Հայտնություն 22.1-5, Մատթեոս 22.39, Ծննդոց 2.21-25:

Հիշելու համարը.

«Սրանով իմացանք Քրիստոսի սերը, որ նա իր անձը տվեց մեզ համար, և մենք պարտավոր ենք մեր եղբայրների համար դնել մեր անձերը» (Ա Հովհաննես 3.16):

Հիմնական միտքը.

Բազմաթիվ մարդիկ իրենց անվանում են քրիստոնյաներ: Բայց ի՞նչ է դա նշանակում գործնականում:

«Ի՞նչ է օգուտը, եղբայրներս, եթե մեկն ասի, թե հավատք ունի, և գործ չունենա, մի՞թե հավատքը կարող է ապրեցնել նրան» (*Հակոբոս 2.14*):

Աստվածաշունչը կոչ է անում առողջ ուսմունքի, սակայն այդ կոչը միշտ հնչում է արդար կյանքի համատեքստում (*Ա Տիմոթեոս 1.10, Տիտոս 2.1-5*)՝ մատնանշելով աստվածաշնչյան ուսմունքի ճշմարիտ նպատակը, որը դրսևորվում է այլ մարդկանց ծառայության մեջ: Փաստորեն, եթե դուք ուշադիր կարդաք Տիմոթեոսին և Տիտոսին ուղղված ուղերձներից վերը բերված տեքստերը, կտեսնեք, որ նրանք այնքան սերտորեն են կապում առողջ ուսմունքն արդար կյանքի հետ, ինչպես եթե արդար կյանքն ինքնին լիներ առողջ ուսմունք:

Աստված քրիստոնյային փրկում է, որպեսզի բարու և չարի միջև մեծ պայքարում նա Աստծո գործակիցը դառնա մարդկանց փրկության գործում: Երբեմն մարդու մասին ասում են. «Նա ասես ապրում է երկնքում, այնքան քիչ օգուտ կա նրանից երկրի վրա»: Այսպիսի բաներից մենք պետք է խուսափենք: Իհարկե, մեր իսկական տունը երկնքում է, բայց մենք դեռևս ապրում ենք երկրի վրա, և մեզ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես ապրել այստեղ:

Այս շաբաթ մենք կուսումնասիրենք որոշ գործնական խորհուրդներ այն մասին, թե ինչպես կարող են քրիստոնյաներն ապրել իրենց կոչումին համապատասխան:

Կառավարում

Փրկության մասին խորհելով շրջապատողներին ծառայելու համատեքստում՝ մենք չենք կարող չհիշատակել կառավարման քրիստոնեական հայեցակարգը: Յոթերորդ օրվա ադվենտիստների հանրագիտարանը կառավարումը բնորոշում է որպես «Աստծո ժողովրդի պատասխանատվությունն Աստծո կողմից իրեն վստահված ամեն ինչի՝ կյանքի, առողջության, ժամանակի, տաղանդների ու ընդունակությունների, նյութական արժեքների և շրջապատողներին ծառայելու և ճշմարտությունը ճանաչելու հնարավորությունների համար»:

Կարդացե՛ք բերված համարները և հարցրե՛ք ինքներդ ձեզ. հաշվի առնելով իմ որոշակի հանգամանքները, ինչպե՞ս ես կարող եմ դրսևորել իմ կյանքում այն հրաշալի սկզբունքները, որոնք բացահայտվում են տեքստերում: Այդ ճշմարտություններն ինչպե՞ս պետք է ազդեն իմ կյանքի և շրջապատող մարդկանց ու Աստծո հետ իմ փոխհարաբերությունների, Նրա բոլոր պարգևների խելամիտ օգտագործման վրա:

Երկրորդ օրինաց 8.11-17 _____

Սաղմոս 24.1 _____

Փիլիպեցիս 2.3,4 _____

Ա Հովհաննես 3.16 _____

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստծո ողջ արարչության գլխավոր նպատակը կայանում է Արարչին փառաբանելու մեջ: Մեղքն աղավաղել է այդ ճշմարտությունը, բայց Աստված փրկել է մեզ և վերադարձրել ողջ արարչագործության հետ միասին Նրա անվան փառաբանությանը մասնակցելու հնարավորությունը: Քրիստոսը փրկագնել է մեզ Աստծո փառքի համար (Եփեսացիս 1.11-14): Գիտակցելով, որ Քրիստոսը մեր կյանքի Տերն է, և դա արտահայտելով խոսքով ու գործով՝ մենք փառաբանում ենք Աստծուն: Քրիստոսի իշխանության լիակատար ընդունումը մեզանից կպահանջի մեր ժամանակի, տաղանդների, հնարավորությունների և նյութական միջոցների նվիրաբերում Աստծուն և մեր մերձավորներին:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք այսօրվա համար առաջարկված աստվածաշնչյան տեքստերը: Դրանցից որո՞նք են հատկապես դիպչում ձեր սրտին և ինչո՞ւ: Ի՞նչն է ձեզ դրդում բարիք որոնել ձեզ շրջապատող մարդկանց համար նույն չափով, ինչպես և ձեզ

համար: Ինչո՞ւ է մեր հոգևոր վիճակի համար այդքան կարևոր շրջապատողների համար ապրելը:

Երկուշաբթի *դեկտեմբերի 10*

Տասանորդ. չնչին մասը

«Եվ Ահարոնի որդի քահանան ղևտացիների հետ լինի ղևտացիների տասանորդ վերցնելու ժամանակ, և ղևտացիները տասանորդի տասանորդը վեր տանեն մեր Աստծո տունը՝ գանձատան սենյակները, որովհետև այն սենյակները պիտի տանեն Իսրայելի որդիները և Ղևիի որդիները ցորենի և գինու և ձեթի ընծաները, ուր որ են սրբարանի անոթները, և պաշտոնյա քահանաներն ու դռնապաններն ու երգեցողները: Եվ մեր Աստծո տունը չլքենք» (Նեեմիա 10.38,39):

Խորհե՛ք ձեր կյանքի մասին: Մտածե՛ք, թե որքա՜ն արագասահ է այն, մտորե՛ք մահվան բացարձակ անխուսափելիության մասին (եթե միայն Քրիստոսը չվերադառնա ձեր կենդանության օրոք): Խորհե՛ք, թե ինչպիսին կլիներ ձեր կյանքը, եթե շիրիմը, ինչպես շատերն են հավատում, իրականում լիներ ամեն ինչի վերջը: Ձեզ կարճատև ակնթարթ է պարգևված՝ «կյանք» անունով, և այն ամենը, ինչ դուք ունեք՝ ցավն է, տագնապները, վախը: Իսկ երբ վաղ թե ուշ գալիս է մահը, մնում է միայն անկյանք մարմինը, որը պիտի քայքայվելով ոչնչանա:

Այդպիսին կլիներ մեր ընդհանուր ճակատագիրը տիեզերքում, որն անհամեմատ ավելի մեծ է, քան երկիր մոլորակը, և մեր կյանքը կթվար անիմաստ, դաժան ու ամենևին էլ ոչ ծիծաղելի մի կատակ:

Իմանալով այդ սցենարը՝ խորհե՛ք, թե մեզ ինչ է պարգևված Քրիստոսում: Մտորե՛ք, թե մեզ ինչ է առաջարկված Քրիստոսում: Վերլուծե՛ք, թե փրկության ծրագիրն ինչ է բացահայտում մեր արժեքի և այն մասին, թե ինչ է արվել մեզ համար, որպեսզի մեզ բաժին չընկնի վերը նկարագրված ճակատագիրը:

Ի՞նչ է մեզ պարգևված Քրիստոսում: Ա Կորնթացիս 15.51,52, Հայտնություն 21.4, Գաղատացիս 3.13, Եփեսացիս 1.6,7, Հայտնություն 22.1-5: **Դա ի՞նչ է նշանակում մեզ համար: Այդ խոստումներն ինչպե՞ս պետք է ազդեն մեր կյանքի բոլոր տեսանկյունների վրա: _**

_____

_____

_____

«Ես խոսում եմ Աստծուն պատկանող տասանորդի մասին, բայց

որքա՜ն խղճուկ է ինձ երևում այդ պարգևը: Որքա՜ն ցածր գին է նրա համար, ինչ Նա արել է մեզ համար: Որքա՜ն ունայն ու անշնորհակալ զբաղմունք է՝ մաթեմատիկայի օգնությամբ գնահատել այն ժամանակը, փողն ու սերը, որ մենք տալիս ենք Աստծուն՝ Նրա անընդգրկելի սիրուն և զոհին ի պատասխան: Մինչդեռ դրանք ենթակա չեն ոչ մի չափման: Տասանորդ Քրիստոսի համա՜ր: Օ՜, որքա՜ն ժլատ ու խղճուկ ողորմություն է, որքա՜ն ամոթալիորեն ցածր գնահատական նրա, ինչն այդքա՜ն թանկ է արժեցել: Գողգոթայի խաչից Քրիստոսը կոչում է անվերապահ ու լիակատար ինքնանվիրման» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 4, 119,120):

Իմանալով, թե ինչ է ձեզ համար արել Քրիստոսը, դուք կարո՞ղ եք հավատ չդրսևորել և Աստծուն չվերադարձնել աննշան մասը նրա, ինչ պարգևվել է ձեզ:

Երեքշաբթի ***դեկտեմբերի 11***

Անձնական պատասխանատվություն

Հիսուսը շատ պարզորոշ ասում է մեզ. «Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես» (Մատթեոս 22.39): **Սա շատ հետաքրքիր տեքստ է այն լույսի ներքո, որ մենք հաճախ սեփական անձի հանդեպ սերը դիտարկում ենք որպես քրիստոնեական ինքնազոհությանը վերին աստիճանի հակասող ինչ-որ բան: Ի՞նչ նկատի ուներ Հիսուսը՝ արտաբերելով այդ խոսքերը: Մենք ինչպե՞ս ենք հասկանում և կիրառում դրանք: Դրանցում արտացոլվա՞ծ է քրիստոնեության ճշմարիտ էությունը:** _____

_____

_____

_____

Սեփական անձի հանդեպ սերը քրիստոնեական ըմբռնմամբ եսամոլություն չէ, այն չի նշանակում, թե մեր շահերը պետք է դրվեն ամենքի և ամեն ինչի առջևում: Ընդհակառակը, սեփական անձի հանդեպ սերը նշանակում է Աստծո համար սեփական արժեքավորության գիտակցում, այդպիսի սերը դրդում է մեզ ապրել լավագույն կյանքով, քանի որ գիտենք, որ այդպիսի կենսակերպի արդյունքը կլինի օրհնությունը ոչ միայն ձեզ (ինչը հիանալի է), այլ նաև ձեզ շրջապատող մարդկանց համար:

Դուք ինչպե՞ս կարող եք Հիսուսի պատվիրանը Մատթեոս 22. 39-ում հարաբերել ստորև բերված համարներին:

Փիլիպեցիս 2.5,8 _____

_____

Բ Կորնթացիս 5.14,15 _____

_____

Ա Կորնթացիս 10.31-33 _____

_____

Ա Պետրոս 1.13-16 _____

_____

Մեղավորի համար Քրիստոսում ձեռք բերվող փրկագնումը նրան այնպիսի միաբանություն է բերում Տիրոջ հետ (Գաղատացիս 2.20), որ նա ցանկանում է ապրել Քրիստոսի մատնանշված նպատակադրվածությամբ: Մեղավորը ցանկանում է ունենալ Քրիստոսի մտածելակերպը, ապրել ոչ թե իր, այլ Նրա համար, չարհամարհել սրբության կոչը (կրքերից և անբարոյականությունից երես թեքելու կոչը): Եթե դուք սիրում եք ինքներդ ձեզ, նշանակում է՝ ձեզ ցանկանում եք լավագույնը, իսկ լավագույնը ձեզ համար՝ Աստծուն նվիրված կյանքն է, որն արտացոլում է Նրա բնավորությունը և սերը: Այդպիսի կյանքը կենտրոնացած է ոչ թե սեփական անձի, այլ շրջապատողների բարօրության վրա: Ձեզ խղճուկ գոյություն երաշխավորող «ամենահաջող» ճանապարհը կյանքն է միայն քեզ համար, երբ չես մտածում քեզ շրջապատող մարդկանց բարօրության մասին:

Մտորե՛ք այն մասին, թե քրիստոնեական ըմբռնմամբ ինչ է նշանակում սիրել ինքն իրեն: Այդ սերն ինչո՞վ է տարբերվում եսասիրությունից: Կարո՞ղ է նման սերը լինել եսապաշտական: Ինչպե՞ս կարելի է պաշտպանվել այդ որոգայթից:

Չորեքշաբթի ***դեկտեմբերի 12***

Քրիստոնեական ամուսնությունը

Մարդիկ սոցիալական էակներ են: Տանը և աշխատանքի վայրում, ընկերների շրջապատում և հասարակական վայրերում մենք տարբեր փոխհարաբերությունների մեջ ենք մտնում: Այս բոլոր մակարդակներում անհրաժեշտ է դրսևորել պատասխանատու քրիստոնեական վարքագիծ, և Աստվածաշունչը մեզ բացահայտում է այն կարևոր սկզբունքները, որոնց վրա մենք պետք է կառուցենք մեր փոխհարաբերությունները:

Ուսումնասիրե՛ք առաջարկվող հատվածները՝ սահմանելու հա-

մար ամուսնության վերաբերյալ աստվածաշնչյան տեսակետը: Ծննդոց 2.21-25, Մաղաքիա 2.14, Եփեսացիս 5.28*:* _____

_____

_____

Սահմանել որևէ բան՝ նշանակում է հասկանալ դրա նշանակությունը: Այսօր ասում են, որ հեշտ չէ տալ ամուսնության սահմանումը, քանի որ դրա նշանակությունը միատեսակ չէ տարբեր մարդկանց, ժամանակների և մշակույթների համար: Սակայն ամուսնության աստվածաշնչյան ըմբռնումը չի կարելի այդքան ճկուն անվանել: Ըստ Աստվածաշնչի՝ ամուսնությունն Աստծո կողմից հաստատված սահմանակարգ է: Ամուսնական ուխտի մեջ մտնելով՝ երկու չափահաս տարասեռ մարդիկ համաձայնում են ունենալ սերտ մշտական փոխհարաբերություններ: Աստվածաշնչյան ամուսնությունն աչքի է ընկնում տղամարդու և կնոջ հավասար արժեքավորմամբ, ընդհանուր նպատակների խորը միասնականությամբ, մշտակայությամբ, հավատարմության և վստահության զգացմամբ: Ինչպես և Աստծո հետ փոխհարաբերությունները, ամուսնու և կնոջ փոխհարբերություններն անհրաժեշտ է սրբորեն պահպանել:

Ցավոք, այսօր նույնիսկ եկեղեցու ներսում սկսել են ամուսնությանը վերաբերվել ոչ այնքան լրջորեն: Մարդիկ միություն են կազմում, որը, ինչպես նրանք հավատում են, ստեղծել է Աստված, իսկ հետո, երբ առաջ են գալիս բարդություններ ու խնդիրներ, նրանք կանգնում են դատավորի՝ մի մարդու առջև, ով մարդկային օրենքների ու կանոնների միջոցով բաժանում է այն, ինչ Աստված է միացրել (տե՛ս Մատթեոս 19.3-6): Մենք բոլորս հասկանում ենք, որ դա սխալ է, այդ պատճառով մենք՝ որպես եկեղեցի, պայքարում ենք՝ ջանալով հաղթահարել ստեղծված իրավիճակը:

Հաշվի առնելով բազմակնության, կենակցության, ամուսնալուծությունների, կրկնակի ամուսնությունների և համասեռամոլության փաստերը՝ ի՞նչ խնդիրների է բախվում մարդը ժամանակակից հասարակության մեջ: Աստվածաշնչորեն հիմնավորված ի՞նչ խորհուրդ կարող էիք տալ յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ:

Ամուսնական հավատարմության խախտումը, արտաամուսնական կապերը, պոռնկագրությունը և այլ նմանատիպ արատներ ծաղկում են ժամանակակից հասարակությունում: Բայց, չնայելով այդ ամենին՝ Աստված նախկինի պես ընկած մարդուն վերաբերվում է կարեկցանքով ու քնքշությամբ՝ կոչ անելով թողնել բոլոր մեղքերը և մեղավոր հակումները հաղթահարել Քրիստոսի շնորհով: Այդ պատճառով մենք պետք է

բարձր գնահատենք մեր փրկագնումը՝ հասնելու աստվածային իդեալին, և ոչ թե բազմաթիվ պատրվակների ու մշակույթի առանձնահատկությունների մեջ արդարացումներ և ներում որոնենք մեղքի համար:

Հինգշաբթի ***դեկտեմբերի 13***

Քրիստոնեական վարք

Բացի ընտանեկանից, քրիստոնյան մասնակցում է նաև այլ հասարակական և մասնագիտական փոխհարաբերությունների՝ ընդունելով հետևյալ աստվածաշնչյան ճշմարտությունը՝ մենք աշխարհում ենք, բայց աշխարհից չենք (Հովհաննես 17.14-18):

Քննարկե՛ք ստորև ներկայացված առօրյա կյանքի երեք ոլորտները, ինչպես նաև քրիստոնյաներին վայել կենսակերպն ու վարքը:

1. Գործատուի և աշխատողի փոխհարաբերությունները (*Հակոբոս 5.4-6, Եփեսացիս 6.5-9*): Բացի նրանից, որ գործատուն և աշխատակիցները հավասար են Քրիստոսում, քրիստոնյա գործատուն պետք է ղեկավարվի հետևյալ սկզբունքով. ցանկացած աշխատանք պահանջում է համապատասխան փոխհատուցում: Մյուս կողմից, քրիստոնյա աշխատողները պետք է դիմակայեն աշխատանքի մեջ ծուլություն և անբարեխղճություն դրսևորելու փորձությանը:

«Ծնողների համար չկա ավելի մեծ մեղք, քան թույլ տալը, որ երեխաները տրվեն պարապությանը: Երեխաները շատ արագ վարժվում են ծուլությանը և ժամանակի ընթացքում դառնում են անօգնական ու անօգտակար մարդիկ: Հասնելով այն տարիքին, երբ մարդն արդեն ինքն է իրեն ապահովում գոյության միջոցներով և սկսում է աշխատել, նրանք աշխատում են ծուլորեն և առանց խանդավառության՝ միևնույն ժամանակ սպասելով հատուցման, որը ամենևին չի համապատասխանում նրանց ջանքերին» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 345):

2. Քաղաքացիական պարտականություններ *(Հռոմեացիս 13.1-7):* Քրիստոնյան ամեն ինչում Աստծուն դնում է առաջին տեղում՝ բոլոր գործողություններն ու պարտավորությունները գնահատելով այդ տեսանկյունից: Այդ պատճառով քրիստոնյան, օրինակ, կդիմակայի խտրականությանը՝ դրա ցանկացած դրսևորմամբ, անգամ եթե այն պաշտոնապես հիմնավորված է: Միևնույն ժամանակ, «Աստծուն հավատարիմ լինելը ոչ մեկին իրավունք չի տալիս լիովին անկախ դառնալ և հասարակական աններդաշնակություն կամ անկարգություն առաջացնել: Քրիստոնյաները վճարում են հարկերը, կատարում են

իրենց քաղաքացիական պարտքը, հետևում են ճանապարհային երթևեկության կանոններին և գույքային օրենքներին, համագործակցում են քաղաքացիական իշխանությունների հետ՝ հանցավորության և բռնությունների դեմ պայքարում» (Handbook of Seventh-day Adventist Theology (Maryland: Review and Herald Publishing Association, 2000), 701):

Սոցիալական պատասխանատվություն *(Եսայիա 61.1-3, Մատթեոս 25.31-46):* Ընթերցված աստվածաշնչյան համարների լույսի ներքո քննարկե՛ք հետևյալ մեջբերումը. «Քրիստոնյան կարող է հետևել Աստծո արքայությունը որոնելու կոչին, եթե իր մերձավորի հանդեպ սիրուց դրդված՝ ջանասիրությամբ կատարում է իր դերն ինչպես ընտանիքում, այնպես էլ տնտեսական, ազգային և քաղաքական ոլորտներում… Միայն մասնակցելով քաղաքացիական աշխատանքին հանուն ընդհանուրի բարօրության և հավատարմություն պահպանելով սոցիալական կոչմանը՝ կարելի է հավատարիմ լինել Քրիստոսի օրինակին» (H. Richard Niebuhr, Christ and Culture (Harper Collins Publishers, 1996), 97):

Մարդիկ կարո՞ղ են քրիստոնեական արժեքներ տեսնել ձեր աշխատանքի և սոցիալական փոխհարաբերությունների մեջ: Ձեր կյանքի ո՞ր տեսանկյուններն են մարդկանց գրավում դեպի ձեր հավատը: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում ձեր կյանքի մասին:

Ուրբաթ ***դեկտեմբերի 14***

Հետագա ուսումնասիրության համար

«Սկզբում էր խոսքը» գրքից կարդացե՛ք 22-րդ՝ «Քրիստոնեական կենսակերպ» գլուխը:

«Առատաձեռնությունն ու բարեգործությունը նրա համար են, որպեսզի մարդկանց որդիների սրտերը մնան քնքուշ ու կարեկից, որպեսզի նրանց մեջ հետաքրքրություն և մասնակցության ցանկություն առաջանա միմյանց հանդեպ՝ Տիրոջ օրինակով, ով աղքատացավ, որպեսզի մենք հարստանանք Նրա աղքատությամբ: Տասանորդի օրենքը հիմնված էր հավիտենական սկզբունքների վրա և պետք է օրհնություն դառնար մարդու համար:

Կանոնավոր զոհաբերություններն Աստված ներմուծեց որպես կանխարգելում այնպիսի ահռելի չարիքից, ինչպիսին ագահությունն է: Քրիստոսը տեսնում էր, որ գործարարության մեջ արծաթասիրությունը սկսում է սրտերից քշել ճշմարիտ բարեպաշտությունը: Նա տեսնում էր, որ դրամի հանդեպ սերը նպաստում է մարդկային սրտերի սառեց-

մանն ու խստացմանը, խոչընդոտում առատաձեռնության դրսևորմանը և մարդկանց դարձնում անզգա և խուլ տառապյալների ու հարստահարվածների կարիքների հանդեպ» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 3, 547):

«Եթե որևէ մեկն ունի առողջություն և ուժ, դա նրա կապիտալն է, և մարդը պարտավոր է ճիշտ տնօրինել դրանք: Եթե նա երկար ժամեր է ծախսում ունայն ժամանցի, դատարկ խոսակցությունների և հյուր գնալու վրա, նշանակում է, որ նա անտարբեր է գործերում, իսկ Աստծո խոսքը հանդիմանում է այդպիսի անտարբերությունը: Այդ մարդկանց պետք է աշխատել՝ ապահովելու իրենց ընտանիքները և միջոցների մի մասը խնայելու բարեգործական նպատակների համար՝ Աստծո օրհնությունների չափով:

Մենք ապրում ենք այս աշխարհում ոչ միայն նրա համար, որ հոգ տանենք սեփական շահերի մասին, մեզանից պահանջվում է օգնություն ցուցաբերել փրկության մեծ գործին և այդպիսով նմանվել Քրիստոսի անձնուրաց, զոհաբերող և նպատակասլաց կյանքին» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 1, էջ 325):

Հարցեր քննարկման համար

1. Ընտանեկան խնդիրներն ու ապահարզանները մեծ անհանգստություն են առաջ բերում, չէ՞ որ շատ երկրներում ամուսնալուծությունների վիճակագրությունն անմխիթար է: Ի՞նչ է ասում Աստվածաշունչն այս հարցի վերաբերյալ: Ինչպե՞ս կարող էր փոխվել ամուսնալուծությունների վիճակագրությունը, եթե մարդիկ ապրեին Քրիստոսի ուսմունքի համաձայն: Քննարկե՛ք այդ բարդ հարցը:
2. Առավել մանրամասնորեն քննարկե՛ք տասանորդի հարցը: Ոմանք պնդում են, թե կարող են տասանորդը տալ, ում ցանկանում են՝ շրջանցելով եկեղեցին: Ո՞րն է այդ դիրքորոշման վտանգը:
3. Որպես եկեղեցի՝ մենք չենք կարող արհամարհել աստվածաշնչյան ցուցումները մեր մեջ եղած աղքատների ու կարիքավորների մասին: Իրենց քրիստոնյա անվանողներից ոչ ոք չի կարող չարձագանքել այդ ցուցումներին: Միևնույն ժամանակ, ինչպե՞ս կարող է տուժել մեր առաքելությունը, եթե կարիքավորներին օգնություն ցուցաբերելը և աղքատների մասին հոգ տանելը դառնա մեր հիմնական հոգսը՝ մթագնելով գլխավոր նպատակը: Քննարկե՛ք դա:

ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՅԻՍՈՒՍԸ ԵՎ ՓՐԿՎԱԾՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եբրայեցիս 8.1-5, Եսայիա 53.6, Հռոմեացիս 3.24,25, Ա Տիմոթեոս 2.5, Եբրայեցիս 9.23, Գործք առաքելոց 3.19-21:

Հիշելու համարը.

«Ուրեմն զղջացե՛ք և հե՛տ դարձեք, որ ձեր մեղքերը ջնջվեն, որ Տիրոջ երեսից հանգստանալու ժամանակները գան, և նա ուղարկի առաջուց ձեզ համար քարոզված Հիսուս Քրիստոսին, որին երկինքը պետք է ընդունի, մինչև այն բոլոր բաների հաստատվելու ժամանակները, որոնց համար խոսեց Աստված Իր բոլոր սուրբ մարգարեների բերանով հավիտենից ի վեր» (Գործք առաքելոց 3.19-21):

Հիմնական միտքը.

Երկնային սրբարանում Քրիստոսի ծառայության, Նրա երկրորդ գալստյան և մեռյալների հարության մասին աստվածաշնչյան ուսմունքն իրենից ներկայացնում է հույսի միասնական լուր բոլոր նրանց համար, ովքեր ապավինում են Նրան:

Բարու և չարի միջև մեծ պայքարի պատմության մեջ շատ շրջադարձային պահեր են եղել, բայց դրա գագաթնակետը տեղի ունեցավ խաչի վրա, երբ սատանան վերջնական պարտություն կրեց: Աստվածաշնչյան մարգարեությունը մատնացույց է անում վերջին ժամանակը (Դանիել 12.4,9)՝ ժամանակամիջոց փրկության պատմության մեջ, որը Տիրոջ և Իր ժողովրդի միջև փոխհարաբերությունների լույսի ներքո հատուկ նշանակություն ունի: Այդ վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձությունները կոչվում են *վախճանաբանական* կամ «վերջին ժամանակների իրադարձություններ»:

Այս շաբաթվա դասին մենք կդիտարկենք վերջին ժամանակի ընդհանուր ժամանակահատվածի երեք առանձնահատուկ իրադարձությունները, այն է՝ Քրիստոսի ծառայությունը երկնային սրբարանում, երկրորդ գալուստը և մեռյալների հարությունը: Դրանք հսկայական հոգևոր նշանակություն ունեն:

Երկնային սրբարանը, մաս 1

Դավանաբանական 24-րդ կետն սկսվում է այսպիսի բառերով. «Երկնքում գտնվում է երկնային սրբարանը՝ ճշմարիտ խորանը, որը կառուցել է Տերը, ոչ թե մարդ» (տե՛ս Եբրայեցիս 8.2): Աստվածաշունչն անվիճելիորեն և միանշանակ կերպով հայտարարում է երկնային սրբարանի գոյության մասին (Սաղմոս 11.4):

Կարդացե՛ք Եբրայեցիս 8.1-5-ը: Ի՞նչ հիմնական միտք է ընդգծված այդ համարներում: _____

_____

_____

Երկրային սրբարանը ներկայացված է որպես երկնայինի մոդել կամ օրինակ. դա նշանակում է, որ առաջինը որոշակի աստիճանով համապատասխանում է երկրորդին: Այդ պատճառով երկրային սրբարանը կարող է շատ բան պատմել մեզ երկնայինի մասին: Չնայելով Իսրայելի ժողովրդի համար երկրային սրբարանի ողջ նշանակությանը՝ դրա ճշմարիտ արժեքը բացահայտվում է միայն երկնային սրբարանի և դրանում ծառայության լույսի ներքո: Զոհաբերությունների և քահանայական ծառայության օրինակի վրա երկրային մոդելը սովորեցնում էր երկնային սրբարանի իրողությունները: Երկրային սրբարանում ծառայության միջոցով Աստված ցանկանում էր Իր ժողովրդին սովորեցնել փրկության սկզբունքները, որոնք կանխագուշակում են Քրիստոսի կատարյալ ծառայությունը (Եբրայեցիս 9.9-15), որը դրսևորված է ինչպես Նրա մահվան, այնպես էլ երկնային սրբարանում բարեխոսության մեջ:

Երկրային սրբարանում ծառայությունն ակնհայտորեն ցույց էր տալիս, որ թեև արյուն թափելն անհրաժեշտ էր մեղքի փրկագնման համար (Եբրայեցիս 9.22), միևնույնն է, մեղավորների և Սուրբ Աստծո միջև Բարեխոսի կարիք կա: Սրբությունների սրբությունում քահանայապետի ծառայությունը սրբարանը մաքրում էր մեղքից, իսկ ժողովրդի կողմից ենթադրվում էր խոնարհություն և ապաշխարություն: Այդ պատճառով դատաստանը շատ կարևոր նշանակություն ուներ ողջ փրկության ծրագրում:

Եբրայեցիս 8.1,2 տեքստերի բառերը հիացնում են մեզ, քանի որ դրանցում բացահայտվում է այդ գրքի նախորդ բոլոր յոթ գլուխների նպատակը՝ ընթերցողին ցույց տալ երկնային սրբարանի իրական լինելը

և այնտեղ Քրիստոսի՝ մեր Քահանայապետի ծառայությունը: Դժվար է հասկանալ, թե ինչու մարդիկ չեն տեսնում այն մեծագույն իմաստը, որ Եբրայեցիս թղթում հատկացված է Քրիստոսի ծառայությանը երկնային սրբարանում՝ որպես փրկության ողջ պատմության մի մասի: Այդ համարներում ոչ մի ցուցում չկա այն մասին, որ երկնային սրբարանը, առավել ևս՝ Քրիստոսի ծառայությունն այնտեղ պետք է դիտարկել խորհրդանշական: Փաստորեն, 5-րդ համարը հստակ կերպով ասում է, որ երկրային սրբարանը՝ իրական քահանաներով ու զոհերով իրական կառույցը, միայն ստվերն էր երկնային սրբարանի, որտեղ Քրիստոսը բարեխոսում է մեզ համար:

Երկուշաբթի ***դեկտեմբերի 17***

Երկնային սրբարանը, մաս 2

Երկրային սրբարանում ծառայությունը բացահայտում էր փրկության երեք փուլերը՝ փոխարինական զոհը, բարեխոսական ծառայությունը և դատաստանը: Աստվածաշունչը սովորեցնում է, որ փրկության այդ բոլոր երեք փուլերն իրենց իրագործումը գտան հանուն մեղավորների Քրիստոսի ծառայության մեջ:

Կարդացե՛ք Եսայիա 53.6, Հռոմեացիս 3.24,25, Բ Կորնթացիս 5.21-ը: Ինչի՞ հիման վրա ենք մենք պնդում, որ խաչի վրա Քրիստոսի մահը բավարարեց Աստծո օրենքի պահանջները: ____

_____

_____

_____

Այս համարներն ի՞նչ են ասում Քրիստոսի և մեղավորների համար Նրա բարեխոսության մասին: Ա Տիմոթեոս 2.5, Եբրայեցիս 7.25:

_____

_____

Ինչպես որ կենդանիների զոհաբերությունները ցույց էին տալիս Քրիստոսի մահը, այնպես էլ քահանայական ծառայությունը կանխահայտնում էր երկնային սրբարանում Քրիստոսի ծառայությունը: Մասնավորապես, սրբարանում քահանաների անընդհատ կամ ամենօրյա ծառայությունը խորհրդանշում էր Քրիստոսի՝ երկնային սրբարանում Միջնորդի և Բարեխոսի ծառայությունը, որի շնորհիվ մեղավորը կարող էր «համարձակությունով մոտենալ շնորքի աթոռին»: (Եբրայեցիս 4.14-16):

Կարդացե՛ք Եբրայեցիս 9.23-ը: Երկնային սրբարանի մաքրումն ինչպե՞ս է կապված Քավության օրը երկրային սրբարանում քահանաների ծառայության հետ: _____

_____

Երկրային սրբարանում ծառայությունը հստակորեն ցույց է տալիս Քրիստոսի ծառայությունը, որը կապված է երկնային սրբարանի մաքրման հետ (Եբրայեցիս 9.23): Այս տեքստը դարեր շարունակ շփոթեցնում է շատ հետազոտողների, քանի որ այն պարզորոշ սովորեցնում է, որ երկնքում կա ինչ-որ անկատար բան, որը մաքրման կարիք ունի: Հիշելով երկնքում Քրիստոսի ծառայության երկու փուլերի մասին՝ մենք հասկանում ենք, որ Քավության օրը երկրային սրբարանի ամենամյա մաքրումը երկնային սրբարանի մաքրման նախապատկերն էր:

Խորհե՛ք փրկագնման մասին. ի՞նչ է այն նշանակում, ի՞նչպես է կատարվում, և Ո՞վ է այն Միակը, ով կարող է փրկագնել մեզ: Լուրն այն մասին, որ մենք ապրում ենք Փրկագնման օրը, ինչո՞ւ պետք է մեզ համար լինի բարի և հույսով լի:

Երեքշաբթի ***դեկտեմբերի 18***

Քրիստոսի երկրորդ գալուստը

Կարդացե՛ք Գործք առաքելոց 3.19-21-ը: Այստեղ հիշատակված մեղքերի քավումն ինչպե՞ս է կապված սրբարանի մաքրման հետ:

_____

_____

Թեև հնարավոր է, որ Պետրոսը չգիտեր «ժամերը և ժամանակները» (Գործք առաքելոց 1.7), սակայն այն փաստը, որ նա հիշատակում է Հովելի մարգարեությունը Գործք առաքելոց 2.14-21-ում, վկայում է, թե որքան բարձր է նա գնահատում այն, որ մարգարեությունն իրականացել էր իր օրոք: Ըստ ամենայնի, մարգարեության իր ընկալման մեջ «Պետրոսը խոսում է ներշնչանքի ներքո, այդ պատճառով, չնայելով իր սահմանափակ ըմբռնմանը, հակիրճ մատնացույց է անում երկրային պատմության երկու խոշոր իրադարձությունները՝ 1) Աստծո Հոգու հզոր հեղումը, 2) արդարների մեղքերի վերջնական քավումը, ինչը կապված է երրորդ գագաթնակետային իրադարձության՝ Քրիստոսի երկրորդ գալստյան հետ» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 6, 160):

Վաղ եկեղեցին վստահ էր Քրիստոսի երկրորդ գալստյան և նոր երկնքի ու նոր երկրի մասին խոստման մեջ (Բ Պետրոս 3.13): Քրիստո-

սի առաջին գալուստը Նրա երկրորդ գալստյան համար տրամաբանական աստվածաբանական հիմք նախապատրաստեց: Որքան մենք հասկանում ենք, առանց երկրորդ գալստյան առաջին գալուստն իզուր կլիներ: Մեղքի խնդրի լուծման գործընթացը, որին Հիսուսը սկիզբ դրեց խաչի վրա Իր մահով, իր լիակատար ավարտին կհասնի այն ժամանակ, երբ սրբարանի մաքրումից հետո Նա կհայտնվի «երկրորդ անգամ … փրկության համար» (Եբրայեցիս 9.26,28): Մտածե՛ք, մեզ համար ի՞նչ կնշանակեր փրկության խոստումը՝ առանց երկրորդ գալստյան և հարության (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 4.16-18): Ոչի՛նչ:

Քրիստոսի երկրորդ գալուստը վերջ կդնի մեծ պայքարին և կվճռի բոլոր մահկանացուների ճակատագիրը: Սատանան գիտի, որ պայքարի վերջը մոտ է, այդ պատճառով ջանում է հնարավորինս շատ մարդկանց մոլորեցնել և շեղել ճանապարհից: Մեզ ասված է, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան մոտենալուն զուգընթաց սատանայական ուժերը գործի են դրվում: Սատանան ոչ միայն հայտնվելու է մարդկային կերպարանքով, այլև սկսելու է ներկայանալ իբրև Հիսուս Քրիստոս, և ճշմարտությունը մերժած աշխարհը նրան կընդունի որպես տերերի Տեր և արքաների Արքա (Է. Ուայթ, Վերջին օրերի իրադարձությունները, 168, 169): Մենք նախազգուշացված ենք այդ խաբեության դեմ և գիտենք, որ Քրիստոսի գալուստը կլինի իրական, անձնական և տեսանելի իրադարձություն, որը կցնցի ողջ աշխարհը՝ վերջ դնելով մեղքին, տառապանքներին, տանջանքներին, հիասթափություններին և մահվանը:

Նայե՛ք մեր աշխարհին: Ի՞նչ ենք մենք արել նրա բարելավման համար: Թեև մենք պետք է օգնենք տառապյալներին ու կարիքավորներին, դրա հետ մեկտեղ, ինչո՞ւ միշտ պետք է հիշենք բոլոր խնդիրների միակ լուծման մասին:

Հորեքշաբթի ***դեկտեմբերի 19***

Գալստյանն սպասելիս

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 5.1-11-ը: Ի՞նչ լուր է բովանդակվում տեքստերում և ինչո՞ւ է այն այդքան կարևոր մեզ՝ վերջին ժամանակներում ապրողներիս համար: Մենք ինչպե՞ս կարող ենք այդ բառերը կիրառել ամենօրյա գործնական կյանքում: _____

_____

_____

Տվյալ համարները շատ խրատներ են պարունակում, բայց մի տեսանկյունը հարկավոր է առանձնահատուկ կերպով շեշտել՝ հույսը, որ պետք է ունենան Քրիստոսի վերադարձին սպասողները: Իհարկե, մեզ պետք է զգոն ու խոհեմ լինել, որ այդ օրը վրա չհասնի հանկարծակի՝ գիշերվա գողի նման: Բայց մենք նաև պետք է լինենք հավատով, հույսով և սիրով լի, քանի որ, անկախ նրանից՝ մենք արթուն ենք, թե քնած (այսինքն՝ կմեռնենք մինչև Քրիստոսի գալուստը, թե Նրան կենդանի կդիմավորենք), մենք Նրա հետ հավիտենական կյանքի խոստումն ունենք:

Մեր ժամանակներում, ամենուրեք նկատելով տարբեր նշաններ, մենք պետք է զգույշ լինենք դրանց մեկնաբանման և ըմբռնման մեջ: Չափազանց հաճախ մենք կարող ենք հայտնվել արտասովոր ու հուզիչ, դրամատիկ ու բազմախոստում իրադարձությունների շրջապտույտի մեջ, որոնք արդյունքում ավարտվում են ոչնչով: Երբ ինչ-որ նման բան ավարտվում է, եկեղեցու որոշ անդամներ կարող են վրդովմունք, հիասթափություն ապրել և նույնիսկ մեծ կասկածներ ունենալ: Մենք պետք է արթուն լինենք և, միևնույն ժամանակ, զգուշություն, իմաստություն ու խոնարհություն դրսևորենք՝ ջանալով տեսնել ու ճանաչել ժամանակի նշանները (տե՛ս Մատթեոս 16.1-4):

Ըստ Հովհաննես 13.19 և Հովհաննես 14.29-ի՝ ո՞րն է ժամանակի նշանների նպատակը: _____

_____

_____

_____

_____

Վերջին ժամանակի իրադարձությունների մասին մարգարեությունները տրվել են ոչ թե հավատացյալների հետաքրքրասիրությունը բավարարելու, այլ նրանց արթնության դրդելու համար (Մատթեոս 24.32-44): Սպասելով երկրորդ գալստյանը՝ մենք պետք է զգոն լինենք՝ իմանալով, թե Աստծո խոսքն ինչ է ասում վերջին օրերի իրադարձությունների մասին: Դա ծայրաստիճան կարևոր է, որովհետև նույնիսկ քրիստոնեական աշխարհում ժամանակի նշանների վերաբերյալ բազմաթիվ կեղծ կարծիքներ կան:

Ինչպե՞ս մենք կարող ենք հավասարակշռություն պահպանել՝ ապրելով երկրորդ գալստյան կանխավայելմամբ և, միևնույն ժամանակ, ամեն մի իրադարձություն չընկալելով որպես ժամանակի նշան: Մենք ինչպե՞ս կարող ենք խուսափել մի կողմից՝ ինքնահանգստացումից, մյուս կողմից՝ մոլեռանդությունից:

Մահը և հարությունը

Նոր կտակարանում Քրիստոսի երկրորդ գալստյան հետ սերտորեն կապված իրադարձություններից մեկը մեռած քրիստոնյաների հարությունն է: Փաստորեն, ինչպես ենթադրում են շատ քրիստոնյաներ, դա երկրորդ գալստյան գլխավոր իրադարձություններից է, քանի որ Քրիստոսի հետևորդների մեծամասնությունը Նրա վերադարձին մեռած կլինեն:

Բերված համարները մեզ ի՞նչ են ասում Քրիստոսի գալստյան ժամանակ մեռյալների հարության մասին:

Ա Թեսաղոնիկեցիս 4.13-16 _____

_____

Ա Կորնթացիս 15.13-25 _____

_____

Հռոմեացիս 8.11 _____

_____

Փիլիպեցիս 3.20,21 _____

_____

Աստվածաշունչը սովորեցնում է, որ հարության ժամանակ մարմինը կյանքի է վերադառնում: Այլ խոսքերով՝ աստվածաշնչյան հարությունը մարմնավոր հարություն է: Այս ճշմարտությունն է՛լ ավելի ակնհայտ է դառնում, երբ մենք հիշում ենք, որ Քրիստոսի հարությունից հետո Նրա դամբարանը դատարկ էր: Մեռած մարմինը չէր մնացել քարայրում: Նրա հարության անկասկածելիությունը մեր հարության երաշխիքն է:

Եթե հարությունը հաղթանակ է մահվան դեմ, այդ փաստն ինչպե՞ս է օգնում հասկանալ, որ մարդն այդպիսի հաղթանակի կարող է հասնել միայն կենալով «Քրիստոսում»: Բ Տիմոթեոս 1.8-10:

_____

_____

Անմահության բանալին խոշոր գիտական հայտնագործություն չէ: Մահվան զորությունն արդեն հաղթահարվել է Քրիստոսի մահվամբ և հարությամբ (Հռոմեացիս 6.9): Հիմնվելով դրա վրա՝ Քրիստոսը կարող է անմահություն պարգևել նրանց, ովքեր մկրտության միջոցով նույնացվում են Նրա մահվան և հարության հետ (Հռոմեացիս 6.3,4): Աստվածաշունչը պարզորոշ վկայում է, որ հավատացյալն անմահության

պարգևը կստանա ոչ թե իր մահից հետո, այլ Հիսուսի երկրորդ գալըստյան ժամանակ՝ «վերջին փողի ժամանակ» (Ա Կորնթացիս 15.51-54):

«Ես եմ հարությունը և կյանքը. Ինձ հավատացողը, եթե մեռնի էլ, կապրի» (Հովհաննես 11.25): Մենք ի՞նչ կարող ենք անել՝ կատարելապես գիտակցելու այդ համարներում բովանդակվող հույսը: Մենք ի՞նչ կունենայինք առանց այդ խոստման:

Ուրբաթ ***դեկտեմբերի 21***

Հետագա ուսումնասիրության համար

«Մարդու համար Քրիստոսի բարեխոսությունը երկնային սրբարանում՝ փրկության ծրագրի նույնքան անքակտելի մասն է, որքան և խաչի վրա Նրա մահը: Իր մահվամբ Նա սկսեց այն գործը, որն ավարտին հասցնելու համար Իր հարությունից հետո համբարձվեց երկինք: Մենք պետք է հավատով անցնենք վարագույրի մյուս կողմը, «ուր մեզ համար առաջնորդ մտավ Հիսուսը» (Եբրայեցիս 6.20): Այնտեղ արտացոլվում է Գողգոթայի խաչի լույսը: Այնտեղ մենք կարող ենք ավելի խորը հասկանալ փրկագնման գաղտնիքները: Երկինքն անսահման գին վճարեց մարդու փրկության համար» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 489):

«Հավատացյալի համար Քրիստոսը հարությունն է և կյանքը: Մեղքի պատճառով կորսված կյանքը մեր Փրկչի մեջ վերականգնված է, քանի որ Նա Իրենում կյանք ունի՝ կենդանացնելու բոլոր նրանց, ում կցանկանա: Նա անմահություն պարգևելու իրավունքով է օժտված: Կյանքը, որ Քրիստոսը տվեց է հանուն մարդկության, Նա ընդունում է կրկին և այն պարգևում է մարդկանց (Է. Ուայթ, Դարերի փափագը, 786, 787):

Հարցեր քննարկման համար

1. Ջոն Կալվինը Քրիստոսի միջնորդական գործունեությունն անվանել է «անընդհատ դիմում հանուն մեր փրկության Նրա մահվանը»: Հայտնի է նաև, որ «երկնային սրբարանի գոյությունը պուրիտանյան աստվածաբանների անքակտելի աստվածաբանությունն էր»: Դժվար չէ հասկանալ, թե ինչու է անհրաժեշտ Քրիստոսի միջնորդական ծառայությունը դիտարկել իբրև չափազանց կարևոր ուսմունք: Ի վերջո, նայե՛ք, թե Հին կտակարանը որքան է կենտրոնացած սրբարանի և տաճարի շուրջ: Այդ նույնը կարելի է տեսնել նաև Նոր կտակարանում:

Դա մեզ ի՞նչ պետք է հայտնի դավանաբանական տվյալ ուսմունքի կարևորության վերաբերյալ:

2. Խորհե՛ք Եբրայեցիս 9.23 տեքստի մասին, որը դարերով շփոթեցրել է Աստվածաշունչն ուսումնասիրողներին, ովքեր չէին հասկանում, թե ինչպես երկնքում գտնվող որևէ բան կարող է մաքրման կարիք ունենալ: Մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս, նույնպես անհրաժեշտ է ուշադիր ուսումնասիրել այդ տեքստի նշանակությունը: Ինչպե՞ս է Դանիել 8.14 համարի մեր ըմբռնումն օգնում պարզել այդ կարևոր հայեցակարգը:
3. Քրիստոսի հարությունը չափազանց կարևոր իրադարձություն է ցանկացած քրիստոնյայի և նրա հավատի համար: Առանց դրա մենք հույս չէինք ունենա: Կարդացե՛ք Ա Կորնթացիս 15.1-6-ը: Նայե՛ք, թե ինչպես է Պողոսը ջանում իր ընթերցողներին համոզել Քրիստոսի հարության անկասկածելիության մեջ: Հատուկ ուշադրություն դարձրեք 6-րդ համարին: Ինչի՞ մասին է նա խոսում: Ինչո՞ւ է առաքյալն ընդգծում այն փաստը, որ շատ մարդիկ, ում հայտնվել է Քրիստոսը, մինչև հիմա ողջ են: Առաքյալը կարծես ասում է. «Դուք կարող եք չլսել ինձ, բայց հարցրե՛ք որևէ մեկին այն հարյուրավոր մարդկանցից, ովքեր Նրան տեսել են սեփական աչքերով»: Այդպիսի խոսքերը հազիվ թե բխեին մի մարդու շուրթերից, ով վստահ չէ Իր սովորեցրածի մեջ: Է՞լ ինչ աստվածաշնչյան վկայություններ կարող են ամրապնդել Քրիստոսի հարության հանդեպ մեր հավատը:

ԵՐԲ ԱՄԵՆ ԲԱՆ ՆՈՐ ԿԼԻՆԻ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Թեսաղոնիկեցիս 4.15-17, Հայտնություն 20, Ա Կորնթացիս 4.5, Հռոմեացիս 8.20-22, Հայտնություն 21.11-22.5, Հայտնություն 21.3:

Հիշելու համարը.

«Եվ կջնջի Աստված բոլոր արտասուքը նրանց աչքերից, և մահն այլևս չի լինի, և ո՛չ սուգ, և ո՛չ աղաղակ, և ո՛չ ցավ այլևս չի լինի, որովհետև առաջիններն անցան» (Հայտնություն 21.4):

Հիմնական միտքը.

Ի՞նչ է հազարամյա թագավորությունը, ե՞րբ այն կհաստատվի և ի՞նչ իրադարձություններով կավարտվի:

«Ուտոպիա» բառը հնարել է անգլիացի գրող Թոմաս Մորը (1478-1535): Այդ բառով նա ցանկանում էր նկարագրել առաջին հայացքից կատարյալ թվացող սոցիալական և իրավական համակարգով երևակայական կղզին: Հենց այդ ժամանակից ի վեր «ուտոպիա» բառը հաճախ օգտագործվում է հեգնական իմաստով՝ ցույց տալու համար կատարյալ հասարակության գաղափարի անհնարինությունը: Ի վերջո, նայե՛ք, թե որքան հաճախ են մարդիկ ջանացել «ուտոպիաներ» ստեղծել: Բայց այդպիսի փորձերի ավարտը միշտ էլ խղճուկ է:

Աստվածաշունչը նույնպես բովանդակում է կատարյալ հասարակության՝ Աստծո թագավորության մասին ուսմունք, թեև շատ մարդկանց դա ուտոպիա է թվում: Որոշ իմաստով Աստծո թագավորությունը այն նպատակն է, դեպի որը Աստված գնում էր Եդեմի այգում մարդու մեղանչելուց ի վեր: Աստված ցանկանում է մարդկությանը կրկին վերադարձնել այն կատարյալ հասարակության մեջ, որը Նա ի սկզբանե ստեղծել էր մեզ համար:

Երկնային սրբարանում Քրիստոսը կավարտի մարդկության փրկությանն ուղղված գործը: Դրանից հետո Նա երկրորդ անգամ կգա երկիր՝ նախկինում չտեսնված փառքով և հարություն կտա մեռած սրբերին: Ողջ մնացած արդարները կհափշտակվեն, և նրանք բոլորը միասին Տեր Հիսուսի հետ միասին հազար տարի կթագավորեն երկնքում: Այդ ժամանակը մենք անվանում ենք հազարամյա թագավորություն:

Հազարամյա թագավորության սկիզբը նշանավորող իրադարձությունները

Եթե հազարամյա թագավորությունը բացում է հավիտենության սկիզբը Աստծո ժողովրդի համար, մենք ցանկանում ենք իմանալ, թե երբ է այն սկսվում և ինչպիսին կլինի: Հազարամյա թագավորության հայեցակարգը սկիզբ է առնում Հայտնություն 20-րդ գլխից, որտեղ դրա մասին հիշատակվում է վեց անգամ (համարներ 2-7): Հազարամյա թագավորության ժամանակն իմանալու համար անհրաժեշտ է որոշել Հայտնություն 20-րդ գլխի տեղը այդ գրքի ընդհանուր պատումի մեջ: Թեև այն ուղիղ ժամանակային գիծ չի պահպանում, տվյալ դեպքում այնքան էլ դժվար չէ որոշել այն ժամանակը, երբ սկսվում է հազարամյա թագավորությունը:

Համեմատե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.15-17-ը և Հայտնություն 20-ը: Այս հատվածներում հիշատակված հարությունն ինչպե՞ս է օգնում որոշել հազարամյա թագավորության սկիզբը: Ի՞նչ զուգընթաց իրադարձությունների մասին են պատմում հատվածները:

_____

_____

_____

_____

Հայտնություն գիրքը հայտնում է, որ Հիսուսի երկրորդ գալուստից առաջ երեք ուժեր (վիշապը, գազանը և կեղծ մարգարեն) ժողովուրդներին կհավաքեն՝ հակազդելու համար Քրիստոսի և Նրա ժողովրդի աշխատանքին (Հայտնություն 16.13): Քրիստոսի գալստյան ժամանակ (Հայտնություն 19.11) ժողովուրդները կհավաքվեն՝ Նրա դեմ պատերազմելու համար, բայց այդ ճակատամարտում գազանը և կեղծ մարգարեն կոչնչացվեն (Հայտնություն 19.19,20): Այնուհետև Հայտնություն 20-րդ գլխում խոսվում է երրորդ ուժի՝ վիշապի ճակատագրի մասին: Այն ժամանակ, երբ Քրիստոսում մեռելները հարություն կառնեն (5-րդ համարում այդ իրադարձությունն անվանված է առաջին հարություն), վիշապը (սատանան) կգցվի անդունդը հազար տարով (համարներ 1-3):

Այդ զարմանալի իրադարձություններից մի քանիսը նկարագրված են նաև Ա Թեսաղոնիկեցիս 4.15-17-ում և Բ Թեսաղոնիկեցիս 1.7-9-ում: Միավորելով այս հատվածները՝ մենք գտնում ենք այն իրադարձու-

թյունների բացատրությունը, որոնք տեղի կունենան հազարամյա թագավորությունն սկսվելուց առաջ: Իհարկե՛, այդ սկիզբը համընկնում է Քրիստոսի երկրորդ գալստյան հետ: Քրիստոսում մեռյալները հարություն կառնեն, որպեսզի հավատարիմ ողջերի հետ միասին վերցվեն երկինք: Ամբարիշտները Քրիստոսի գալստյան ժամանակ կսպանվեն Տիրոջ «գալստյան հայտնությունով» (Բ Թեսաղոնիկեցիս 2.8): Իսկ դատարկված երկիրը սատանայի համար բանտ կդառնա, որտեղ նա հազար տարվա ընթացքում կապված կլինի հանգամանքների շղթայով: «Որ էլ չմոլորեցնի ազգերին» (Հայտնություն 20.3)՝ սա է այդ բանտարկության նպատակը: Շատերը զուգահեռ են տեսնում Քավության օրը քավության նոխազին անապատ տանելու (Ղևտացոց 16.22) և այն հանգամանքների միջև, որոնցով սատանան հազարամյա թագավորության ընթացքում կապված կլինի:

Եվս մեկ անգամ վերլուծե՛ք վերը բերված համարները: Դրանք հայտնում են գերբնական երևույթների մասին, որոնցում բացահայտվում են Աստծո մեծությունն ու զորությունը՝ ի տարբերություն մարդկության թուլությանն ու անզորությանը: Մենք ինչո՞ւ պետք է միշտ հիշենք այդ հակադրության մասին: Այդպիսի հակադրության գիտակցումն ինչպե՞ս կարող է լավ միջոց լինել հպարտության և գոռոզության դեմ:

Երկուշաբթի *դեկտեմբերի 24*

Իրադարձությունները հազարամյա թագավորության ընթացքում

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Հայտնություն 20.4-6-ը: Այդ համարներում ի՞նչն է վկայում, որ փրկվածները հազարամյա թագավորության օրերն անցկացնելու են երկնքում:

Հազարամյա թագավորությանը մասնակցողների մի հատուկ խումբ են կազմում «Հիսուսի վկայության համար և Աստծո խոսքի համար գլխատվածները, ովքեր չերկրպագեցին գազանին և ոչ էլ *նրա* պատկերին, և նրա դրոշմը չառան իրենց ճակատի և ոչ էլ իրենց աջ ձեռքի վրա»: Որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ՝ մենք հասկանում ենք, որ Աստվածաշունչը չի սովորեցնում, թե գոյություն ունի առանձին անմահ գիտակից հոգի: Ընդհակառակը, այս համարը պատկերում է այն մարդկանց, ովքեր անցել են հալածանքների և հետապնդումների փորձառության միջով (Հայտնություն 12.17-13.18): Երկրորդ գալստյան

ժամանակ (երբ տեղի է ունենում առաջին հարությունը, այսինքն՝ արդարների հարությունը) հալածանքներ կրած անձինք կյանքի են կոչվում և դրանից հետո երկնքում թագավորում են Քրիստոսի հետ (համեմատե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.14-16-ի հետ):

Հայտնություն 20.4 համարը մեր ուշադրությունը հրավիրում է մեկ այլ իրադարձության վրա, որը տեղի կունենա հազարամյա թագավորության ընթացքում: Այստեղ խոսվում է դատի մասին: Իմանալով, որ հավատարիմները թագավորելու են Տիրոջ հետ, իսկ ամբարիշտները ոչնչանալու են Քրիստոսի գալստյան հրաշափառության տեսքից, ասացե՛ք, թե ո՞րն է այդ դատի բնույթն ու նպատակը: _____

_____

_____

_____

_____

Երեք թեմաներից մեկը, որին մենք ուշադրություն դարձրինք անցյալ շաբաթ (երկուշաբթի օրը), դատի թեման էր, որը կապված է երկնային սրբարանում Քրիստոսի ծառայության հետ: Այդ դատը տարբերվում է Հայտնություն 20.4-ի դատից, որն իսկապես Մատթեոս 19.28-ում տրված Տիրոջ խոստման կատարումն է: Այդ խոստումը համաձայնեցվում է նաև Պողոսի պնդման հետ այն մասին, որ սրբերը դատելու են աշխարհը (Ա Կորնթացիս 6.2,3):

Դատաստանի հայեցակարգը Աստվածաշնչում հարուստ է և բազմակողմանի: Վերջին դատն ունի երեք փուլ, որոնցից առաջինը վերաբերում է երկնային սրբարանում Քրիստոսի քահանայական ծառայությանը: Յոթերորդ օրվա ադվենտիստներն այն անվանում են վերջին դատի հետաքննական փուլ: Հետո գալիս է դատի հազարամյա վերանայման (վերլուծության) փուլը, որի մասին խոսվում է Հայտնություն 20.4-ում և Ա Կորնթացիս 6.2,3-ում: Այս փուլում փրկագնվածները հնարավորություն կստանան հետազոտել Աստծո գործերը և ամբարիշտների նկատմամբ Նրա դատաստանը: Վերջին դատի երրորդ փուլն իրենից ներկայացնում է իրականացման փուլը՝ ներառյալ մի շարք իրադարձություններ, որոնք տեղի կունենան հազարամյա թագավորության ավարտին:

Այսօրվա նյութի համատեքստում ուսումնասիրե՛ք Ա Կորնթացիս 4.5-ը: Ուշադրության առնելով այն փաստը, որ այսօր մենք ունենք շատ հարցեր, որոնց պատասխանները մենք չենք գտնում, ի՞նչ կարևոր հույս է բովանդակվում այդ համարում:

Հազարամյա թագավորության ավարտին տեղի ունեցող իրադարձությունները

Կարդացե՛ք Հայտնություն 20.7-9-ը: Ո՞ր իրադարձությունը կընշանավորի հազարամյա թագավորության ավարտը, և ի՞նչ հնարավորություն է այն բացում սատանայի առջև: _____

_____

_____

_____

Երբ հարություն առնեն մեռյալները, ովքեր «չկենդանացան, մինչև հազար տարին լրանա» (համար 5), սատանայի «բանտարկությունը» կավարտվի, և նա «կազատվի»: «Գոգ և Մագոգ» դարձվածքն այստեղ, ինչպես և Եզեկիել 38.2-ում, օգտագործվում է փոխաբերական իմաստով՝ նկարագրելու համար նրանց, ում սատանային կհաջողվի խաբել՝ բոլոր ժամանակների ամբարիշտներին: Բոլոր ժամանակների և ազգությունների մարդկանց այդ բազմությանը սատանան կոգևորի և կդրդի Աստծո քաղաքը գրավելու փորձի: Հայտնություն 20.8 համարը ենթադրում է, որ այդ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը, այդ ժամանակ արդեն երկնքից կիջնի երկրի վրա (ըստ երևույթին՝ Քրիստոսի հետ մեկտեղ), և սատանան իր լեգեոնների հետ հանդես կգա նրա դեմ: Քաղաքի մանրամասն նկարագրությունը տրված է Հայտնություն 21-ում:

Ինչպես ասվել է ավելի վաղ, Հայտնություն գրքում միշտ չէ, որ խիստ ժամանակագրական կարգ է պահպանված: Կարդացե՛ք Հայտնություն 20.11-15-ը: Այստեղ ինչպե՞ս է փոխանցված դատի գաղափարը: Ո՞րն է այն փաստի նշանակալից լինելը, որ վերջնական պատիժը տեղի կունենա այն բանից *հետո*, երբ սրբերը կմասնակցեն դատին: Հայտնություն 20.4: _____

_____

_____

_____

_____

«Հազարամյա թագավորության ժամանակ սրբերը մասնակցում են խորհրդակցական դատին՝ ուսումնասիրելով կործանված մարդկանց և ընկած հրեշտակների գործերը: Այս դատը ծայրաստիճան անհրաժեշտ է մեղքի հիմնախնդրի համատիեզերական բնույթի համատեքստում: Մեղավոր խռովության զարգացման ընթացքը եղել է այլ աշխարհների

անհանգստության և հետաքրքրության առարկան (Հոբ 1, 2, Եփեսացիս 3.10): Մեղքի ողջ պատմությունը պետք է պարզաբանվի այնպես, որ Աստծո տիեզերքի բոլոր բնակիչների մտքերն ու սրտերը գոհ և բավարարված լինեն մեղքին տրված դատավճռից և Աստծո բնավորության արդարացումից: Երկրից փրկագնվածների համար հատկապես կարևոր է հասկանալ Աստծո դատավճիռը նրանց համար, ովքեր ժայռերին խնդրում էին ընկնել իրենց վրա և իրենց ծածկել «աթոռի վրա Նստողի երեսից» (Հայտնություն 6.16): Նրանք պետք է լիովին բավարարված լինեն ամբարիշտների վերաբերյալ Աստծո որոշման արդարացիությամբ» (Handbook of Seventh-day Adventist Theology (Maryland: Review and Herald... Publishing Association, 2000), 932):

Ամբարիշտների նկատմամբ դատաստանին մեր մասնակցության փաստը մեզ ի՞նչ է ասում Աստծո բնավորության մասին: Այդ հայեցակարգն ինչպե՞ս է համաձայնեցվում մեծ պայքարի գաղափարի հետ ընդհանրապես:

Չորեքշաբթի ***դեկտեմբերի 26***

Նոր երկիրը

Հայտնություն 20-րդ գլուխն ավարտվում է սատանայի և նրա կողմնակիցների ոչնչացմամբ: Հայտնություն 21 գլուխն սկսվում է նոր երկնքի և նոր երկրի նկարագրությամբ:

Հայտնություն 21.1-5-ում բովանդակվում է խոստում այն մասին, որ Աստված ամեն բան նոր կստեղծի: Այդ խոստումն ինչպե՞ս է համաձայնեցվում արարման մասին Ծննդոց գրքի պատումի հետ *(Ծննդոց 1, 2)*: **Իսկ ինչո՞վ են դրանք տարբերվում: _____**

_____

_____

_____

Հայտնություն 21.1-ում «նոր» թարգմանված բառն ընդգծում է տեսակով կամ որակով ինչ-որ նոր բան, և ոչ թե ինչ-որ հերթական բան, ինչպես, օրինակ, «նոր» իրադարձություն ժամանակի մեջ: Ծննդոց գրքում արարման Աստծո նպատակը մնում է չիրականացված, մինչև որ նոր երկրի վրա իրականանա խոստումն այն մասին, որ ամեն բան նոր կստեղծվի: Այդ պատճառով ողջ արարչագործությունը հառաչում ու տանջվում է ազատության սպասման մեջ (Հռոմեացիս 8. 20-22): Աստծո նոր արարումն ամփոփվում է երկիրն ու տիեզերքը

ներկա անկատարությունից ազատելու և դրանք Նրա մտահղացմանը համապատասխանեցնելու մեջ: Հետևաբար, թեև նոր արարումը որոշակիորեն տարբերվելու է հնից, երկուսի միջև գոյություն է ունենալու որոշ զուգահեռ: Հնի նման, նոր երկիրը կլինի իրական, շոշափելի վայր՝ բնակեցված իսկական, ֆիզիկական էակներով: Նոր երկիրը նորոգված երկիր կլինի՝ մաքրված կրակով (Բ Պետրոս 3.10-13):

Կարդացե՛ք Հայտնություն 21.11-22.5-ը և ուշադրություն դարձրեք նոր Երուսաղեմի՝ նոր երկրի մայրաքաղաքի ֆիզիկական տեսանկյուններին: Հովհաննեսի նկարագրության մեջ ինչպե՞ս է պատկերված այդ քաղաքի իրական լինելը: _____

_____

_____

_____

Մի բան պարզ է. մենք խոսում ենք իրական, ֆիզիկական վայրի մասին: Սուրբ գիրքը կրկին պսակազերծում է հեթանոսական մոլորությունն այն մասին, որ ամեն ֆիզիկականը վատ է, իսկ հոգևորը՝ լավ: Թեև նույնիսկ ներշնչված բառերը չեն կարող փոխանցել հավիտենական ապագայի ողջ պատկերը, դրանք հայտնում են, որ մեզ սպասում է իրական ժառանգություն: Որքա՜ն կարևոր է հասկանալ, որ այս աշխարհն իր ողջ անկատարությամբ այնպիսին չէ, ինչպիսին պետք է լինի. երկիրը շեղվել է նորմայից, այդ պատճառով Քրիստոսը եկավ ուղղելու այն: Բայց Հայտնության գրքում նկարագրությունը, որքան էլ այն անհասանելի թվա ըմբռնման համար (չէ՞ որ մենք գիտենք միայն այս ընկած աշխարհը), հավերժական իրողություն է, որ մեզ սպասվում է առջևում: Ինչպիսի՜ մեծ հույս, հատկապես՝ այն անհուսալիության ֆոնի վրա, որն ուղեկցում է մարդկանց, ովքեր համոզված են, որ մահն ամեն ինչի վերջն է:

Հինգշաբթի ***դեկտեմբերի 27***

Կյանքը նոր երկրի վրա

Կարդացե՛ք Հայտնություն 21.3-ը: Ինչպե՞ս այդ կարևորագույն փաստը կփոխի նոր երկրի բնակիչների կենսափորձը: _____

_____

_____

_____

Հավանաբար, Աստվածաշնչում չկա մեկ այլ նույնքան տպավորիչ

տեսիլք, որքան սա է: Նոր երկիրը կլինի ոչ միայն մարդկանց, այլև Աստծո տունը: Տիեզերքի անգերազանցելի Սուրբ Արարիչը փրկագնվածների հասարակությանը կարժանացնի Իր ներկայությանը: Իհարկե՛, Աստված միշտ կտարբերվի Իր արարչագործությունից, բայց նոր երկրի վրա արդեն չի լինի Աստծո և մարդկության միջև մեղքի առաջացրած անջրպետը:

Կվերականգնվեն ճիշտ փոխհարաբերությունները ոչ միայն Աստծո և մարդկանց, այլև մարդկանց ու բնության միջև և հենց բնության ներսում: Հովհաննեսը նկարագրում է, որ արդեն չի լինի ոչ մի անիծյալ բան (Հայտնություն 22.3): Մարգարեական խոսքը կանխասում է կենդանիների աշխարհում ամեն տեսակի թշնամության դադարելը (Եսայիա 65.25):

Բացի ներդաշնակության կատարյալ վերականգնումից, տառապանքների ու տանջանքների անհետացումը, որոնք այժմ զգում է ողջ արարչագործությունը, նշանակում է, որ կործանարար ամեն ինչ՝ մաշումը, հիվանդությունները, մահն ու տառապանքները, կմնան անցյալում (Հռոմեացիս 8.21, Հայտնություն 21.4):

Կարդացե՛ք Սաղմոս 8-ը: Նրանում ի՞նչ լուր է բովանդակվում մեզ համար, հատկապես՝ այս եռամսյակի դասերի համատեքստում: _____

_____

_____

_____

Նոր երկրում մեզ հետ միասին Աստծո ներկայության նշանակությունն անընդունելի է հատկապես ներկայումս, երբ գիտությունը բացահայտում է Աստծո արարչագործության անչափելի մասշտաբները: «Տեսանելի» տիեզերքի ենթադրյալ չափերը կազմում են բազում բիլիոն լուսատարիներ: Սակայն գիտնականները համարում են, որ այդ ահռելի, անընդգրկելի տիեզերական տարածությունը կազմում է մոտ 7 տոկոսն այն Տիեզերքի, որն իրականում գոյություն ունի նրա սահմաններից դուրս:

Մտածե՛ք. այս Տիեզերքն ստեղծած Աստված ոչ միայն մահացել է մեր փոխարեն, այլև մեզ հետ է լինելու հավիտյանս հավիտենից: Քանի որ մեր ընկած միտքը սահմանափակ է, մենք չպետք է գուշակություններ անենք, թե ինչպես դա տեղի կունենա: Դրա փոխարեն ծնկի գանք և փառք ու երկրպագություն տանք Նրան, ով ոչ միայն ստեղծել, այլ նաև փրկագնել է մեզ, իսկ հիմա վերադառնում է Իր զավակների հետևից՝ խոստանալով ողջ հավիտենությունն ապրել մեզ հետ:

Հետագա ուսումնասիրության համար

«Նախակերպարային ծառայության մեջ, իրականացնելով Իսրայելի փրկագնումը, քահանայապետը դուրս էր գալիս ժողովրդի մոտ և օրհնում նրան: Այդպես էլ Քրիստոսը Իր բարեխոսական ծառայության ավարտից հետո «*առանց մեղքի* կհայտնվի … փրկության համար» (Եբրայեցիս 9.28), որ Իրեն սպասողներին տանի դեպի հավիտենական կյանք: Եվ այնպես, ինչպես քահանան, մեղքերը հեռացնելով սրբարանից, դրանք խոտովանում էր «քավության նոխազի» գլխավերևում, այնպես էլ Քրիստոսը բոլոր մեղքերը կդնի սատանայի՝ անօրենության մեղավորի և չարի հրահրողի վրա: Քավության նոխազը, որի վրա էին դրվում Իսրայելի մեղքերը, հեռացվում էր «անբնակ երկիր» (Ղևտացոց 16.22): Այդպես էլ սատանան, իր վրա կրելով բոլոր մեղքերի հանցավորությունը, դատապարտված կլինի հազար տարվա ընթացքում լինել անկյանք անապատում և, ի վերջո, լիակատար պատիժ կստանա այն կրակի մեջ, որ կոչնչացնի բոլոր ամբարիշտներին» (Է. Ուայթ, «Մեծ պայքար», 485,486):

«Վախենալով, որ սրբերի ապագա ժառանգությունը չափազանց նյութական ու երկրային կթվա, շատերը ջանացել են միայն հոգևոր նշանակություն հաղորդել գալիք իրականությանը և այդպիսով ի չիք դարձնել այն ճշմարտությունները, որոնք մեզ թույլ են տալիս մեր ապագա հայրենիքին նայելու որպես սեփական տան: Քրիստոսն Իր աշակերտներին խոստացել է, որ գնում է բնակարաններ պատրաստելու նրանց համար Իր Հոր տանը: Նրանք, ովքեր ընդունում են Աստծո խոսքի ուսմունքը, կատարյալ անգիտության մեջ չեն լինի երկնային բնակարանների վերաբերյալ… Մարդկային լեզուն չի կարող նկարագրել արդարների պարգևը: Այն հասկանալի կդառնա միայն նրանց, ովքեր կտեսնեն այն: Սահմանափակ միտքն ի վիճակի չէ ըմբռնել Աստծո դրախտի փառքը» (Է. Ուայթ, «Մեծ պայքար», 674, 675):

Հարցեր քննարկման համար

1. Քրիստոնեական եկեղեցում հազարամյակի վերաբերյալ երեք հիմնական վարկածներ (որոշ տարբերություններով) կան. 1) այդ ժամանակահատվածն իրենից ներկայացնում է Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստների միջև ընկած ժամանակահատվածը, 2) դա երկրի վրա խաղաղության ու ճշմարտության դարաշրջանն է՝ նախքան

Քրիստոսի հայտնվելը, որն ի հայտ է գալիս մասամբ ավետարանի քարոզի և սոցիալական բարեփոխումների շնորհիվ, 3) դա հազար տարի տևողությամբ ժամանակահատված է, որն սկսվում է Քրիստոսի գալուստից հետո և շարունակվելու է երկնքում: Յոթերորդ օրվա ադվենտիստները, ինչպես մենք արդեն տեսանք, կողմնակից են վերջին տեսակետին՝ համարելով, որ հազարամյա թագավորության օրերը կանցնեն երկնքում, ոչ թե երկրի վրա: Ինչո՞ւ են մյուս կարծիքները սխալ:

2. Կարդացե՛ք Հայտնություն 21.27-ը: Դուք ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ շատ մարդկանց թույլ չի տրվի մտնել Նոր Երուսաղեմ (տե՛ս Եսայիա 26.10):
3. Խորհե՛ք «ուտոպիա» ստեղծելու մարդկային փորձերի մասին: Դուք ի՞նչ օրինակներ կարող եք հիշել: Ինչպիսի՞ն են եղել արդյունքները: Ինչո՞ւ են այդպիսի արդյունքները միշտ ձախողվել, և այդ անհաջողություններն ինչպե՞ս են բացահայտում մեր լիակատար կախվածությունը մեր երկրում Աստծո գերբնական միջամտությունից:

Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2012թ. IV եռամսյակ

ԱՃ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ

ՔվաբենաԴոնքոր

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝ Մերինե Աքոյան
Վերստուգող՝ Մարթա Սիմոնյան
Գրական խմբագիր՝ Ալվարդ Մադոյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան

ՇԴ դասերի էլեկտրոնային տարբերակը և դասարաններում քննարկելու հարցերը դուք կարող եք գտնել համացանցում (ինտերնետ), այցելելով www.christian7habits.blogspot.com հասցեում գտնվող բլոգը կամ www.elpidos.narod.ru կայքը:
Այստեղ Դուք կարող եք գտնել այլ նյութեր ևս: